

**ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ  
ԽՆԴԻՐՆԵՐ**

*Գիտական ամսագիր*

**2(7)**

2015

**Հրատարակվում է Հայաստանի Հանրապետության  
պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի երաշխավոր-  
մամբ**

**Խմբագիր**

Արտակ Շաքարյան, պ. գ. թ.

**Խմբագրական կազմ**

Արթուր Աթանեսյան, ք. գ. դ.

Արսեն Ավագյան, պ. գ. դ.

Արման Եղիազարյան, պ. գ. դ.

Գարիկ Քեոյան, ք. գ. դ.

Խաչիկ Գևորգյան, ք. գ. թ.

Համազասպ Դանիելյան, ք. գ. թ.

Արամ Դավթյան, ք. գ. թ.

Վահան Դիլանյան, ք. գ. թ.

Արթուր Դումանյան, պ. գ. թ.

Գոհար Իսկանդարյան, պ. գ. թ.

Անահիտ Խոսրոնա (ԱՄՆ), պ. գ. թ.

Արայիկ Հարությունյան, պ. գ. թ.

Տիգրան Ճորոխյան, ք. գ. թ.

Սուրեն Մանուկյան, պ. գ. թ.

Նազելի Նավասարդյան, պ. գ. թ.

Կարեն Շաքարյան, ք. գ. թ.

Այգերիմ Շիլիբեկովա (Ղազախստան), ք. գ. թ.

Վահրամ Տեր-Մաթևոսյան, պ. գ. թ.

Ներսես Տեր-Վարդանյան, պ. գ. թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### **Արուսյակ Ալեքսանյան**

Եվրահնտեգրման հարցերի շուրջ.  
ալգ նոր ձեվաչափ..... 5

### **Arusyak Aleksanyan**

About the issues of european integration  
is the eastern partnership a new format? ..... 14

### **Վահան Հունանյան**

Ռիգայից հետո. Եվրամիություն – Հայաստան  
հարաբերությունների հեռանկարները փոփոխվող  
աշխարհում..... 21

### **Vahan Hunanyan**

After Riga: Prospects of European Union– Armenia  
Relations in the Changing World ..... 40

### **Աննա Կարապետյան**

ՀՀ – ԵՄ նոր բացվող հնարավորություններ..... 56

### **Anna Karapetyan**

Armenia–EU: Emerging Opportunities ..... 65

### **Ռիմա Խալաթյան**

Հայաստանը ինտեգրման ճանապարհին ..... 74

### **Rima Khalatyan**

Armenia on its Way to Integration..... 94

**Աննա Բարսեղյան**

Կարո՞ղ է Հայաստանը կապող կամուրջ  
հանդիսանալ ԵՄ – ԵԱՏՄ  
հարաբերություններում ..... 110

**Anna Barseghyan**

Can Armenia serve as a linking bridge in  
EU–EEU relationship? .....130

**Աննա Գրադյան**

ՀՀ – ԵՄ գործընկերության ներուժը.  
քաղաքացիական հասարակության ավելի ակտիվ  
ներգրավումը՝ որպես ավելի խորքային  
համագործակցության գրավական.....146

**Anna Gradlyan**

The potential of Armenia–EU partnership: More active involvement  
of civil society as a guarantee of deeper cooperation ..162

**Մուշեղ Ղահրիյան**

Փոփոխությունները ԵՄ – Հայաստան  
հարաբերություններում. նոր ձևաչափ..... 174

**Mushegh Ghahriyan**

Changes in EU–Armenia Relationship. New Format? ...182

## ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ. ԱԼԳ ՆՈՐ ՁԵՎԱԶԱՊ

### ԱՐՈՒՄՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

#### Նախաբան

Եվրահնտեգրումը Հայաստանում, անշուշտ, ունի արտաքին քաղաքական գերակայություն: Այն բավական ընդգրկուն հասկացություն է և ներառում է Հայաստանի հարաբերությունները ոչ միայն ԵՄ-ի, այլև այնպիսի կառույցների հետ, ինչպիսիք են ԵԽ-ն, ԵԱՀԿ-ն, ՆԱՏՕ-ն: Հոդվածում դիտարկվում են զարգացումները ԵՄ փոխհարաբերությունների շուրջ, մասնավորապես Արևելյան գործընկերության ծրագրի շրջանակներում: Հոդվածում, ըստ մի շարք չափորոշիչների (ժողովրդավարության մակարդակ, տնտեսական ազատություն, եվրոպական ինտեգրման ինդեքս և այլն), կատարվում է ԱԳ պետությունների համեմատական վերլուծություն ինչպես միմյանց, այնպես էլ Ռուսաստանի և Ղազախստանի հետ՝ նպատակ ունենալով պարզաբանելու՝ ինտեգրման եվրոպական և եվրասիական ուղղություններ ընտրած պետություններն ունեն զարգացման միանման, թե տարբեր միտումներ և մակարդակներ: Ըստ այդմ՝ ուսումնասիրվում և վերլուծվում են ԱԳ պետությունների ձեռքբերումները, ոլորտային զարգացումներն ու հետընթացները գործընկերության շրջանակներում:

#### Հայաստանի եվրահնտեգրման գործընթացը

Հայաստան – ԵՄ փոխհարաբերությունների ձևավորման մեկնարկը տրվեց ՀՀ անկախացումից հետո: Այսպես՝ 1996 թ. ստորագրվեց, իսկ 1999 թ. ուժի մեջ մտավ Եվրամիության հետ ՀՀ համագործակցությունը կարգավորող հիմնական փաստաթուղթը՝ «Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը»: Տասը տարի ժամկետով կնքված այս

համաձայնագիրը<sup>1</sup> ՀՀ – ԵՄ բազմակողմ համագործակցության իրավական հիմքն ու պաշտոնական ամրագրումն էր: Բացառությամբ անվտանգության երաշխիքների տրամադրումից՝ ԳՀՀ–ն ընդգրկում է համագործակցության բոլոր ոլորտները. տնտեսական, սոցիալական, քաղաքական, շրջակա միջավայր, ինչպես նաև օրենսդրության, ժողովրդավարության և մարդու իրավունքներին առնչվող հարցերի շուրջ և այլն<sup>2</sup>:

2004 թ. ընդլայնումից հետո Եվրամիությունը մշակեց համագործակցության նոր քաղաքականություն՝ նպատակ ունենալով քաղաքական և տնտեսական առավել սերտ կապեր հաստատել իր նոր՝ արևելյան և հարավային հարևանների հետ<sup>3</sup>: Այսպես, 2004 թ. Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը ընդգրկվեցին Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) շրջանակներում<sup>4</sup>: Այն ՀՀ – ԵՄ համագործակցությունը տեղափոխեց որակական նոր մակարդակ՝ առաջարկելով քաղաքական, տնտեսական, անվտանգության և մշակութային սերտ հարաբերություններ հաստատել ԵՄ–ի հետ: ԵՀՔ–ի շրջանակներում 2006 թ. նոյեմբերին հաստատվել է նաև ԵՀՔ գործողությունների ծրագիրը (ENP Action Plan): Ծրագրով առանձնացվում են համագործակցության մի շարք առաջնային ոլորտներ՝ ժողովրդավարացում, օրենքի գերակայություն, մարդու իրավունքներ, սոցիալ–տնտեսական բարեփոխումներ, ներդրումային միջավայրի բարելավում, աղքատության կրճատում և այլն<sup>5</sup>:

Եվրոպական հարևանության քաղաքականությանը հետևեց նաև մեկ այլ կարևոր տարածաշրջանային նախաձեռնություն՝ Արևելյան գործընկերությունը: Արևելյան գործընկերությունը մեկնարկել է 2009 թ. մայիսի 7–ին Պրահայում կայացած ԵՄ և Արևելյան գործընկեր պետությունների ղեկավարների գագաթաժողովով: Այդ նախաձեռնությամբ ԵՄ Արևելյան գործընկեր երկրներին առաջարկվեց «27+6» (ԵՄ անդամ 27 երկիր + գործընկեր 6 երկիր՝ Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա,

<sup>1</sup> Ըստ համաձայնագրի համապատասխան դրույթի՝ ժամկետը լրանալուց հետո այն յուրաքանչյուր տարի ինքնաբերաբար երկարաձգվում է:

<sup>2</sup> “Partnership and Cooperation Agreement between the European Communities and their Member States, of the one part, and the Republic of Armenia, of the other part”, April 22, 1996, [\(http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:21999A0909\(01\)\)](http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:21999A0909(01)) (accessed 20.07.2015); Հայաստանի Հանրապետության և Եվրոպական համայնքների ու դրանց անդամ պետությունների միջև գործընկերության և համագործակցության մասին համաձայնագիր, ապրիլ 22, 1996, <http://lexbox.cba.am/eu-legislation/eu-armenia-relations/partnership-and-cooperation-agreement/> (մուտք՝ 20.07.2015).

<sup>3</sup> “European Neighbourhood Policy (ENP)”, European External Action Service, [\(http://eeas.europa.eu/enp/about-us/index\\_en.htm\)](http://eeas.europa.eu/enp/about-us/index_en.htm) (accessed 21.07.2015).

<sup>4</sup> ԵՀՔ–ն ընդգրկում է Եվրամիության մերձավոր տասնվեց հարևան՝ Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Բելառուս, Ուկրաինա, Մոլդովա, Ալժիր, Եգիպտոս, Հորդանան, Իսրայել, Լիբանան, Լիբիա, Մարոկկո, Սիրիա, Թունիս և Պաղեստինի գրավված տարածքը:

<sup>5</sup> “EU/Armenia Action Plan”, November 14, 2006, [\(http://eeas.europa.eu/enp/pdf/pdf/action\\_plans/armenia\\_enp\\_ap\\_final\\_en.pdf\)](http://eeas.europa.eu/enp/pdf/pdf/action_plans/armenia_enp_ap_final_en.pdf) (accessed 20.07.2015).

Ուկրաինա) ձևաչափի համագործակցություն: Արևելյան գործընկերության շրջանակներում բազմակողմ համագործակցությունն իրականացվում է չորս տարբեր թեմատիկ պլատֆորմների միջոցով.

1. Ժողովրդավարություն, արդյունավետ կառավարում և կայունություն,
2. տնտեսական ինտեգրում և համապատասխանեցում ԵՄ քաղաքականության հետ,
3. էներգետիկ անվտանգություն,
4. մարդկանց միջև շփումներ<sup>6</sup>:

Արևելյան գործընկերության շրջանակներում ՀՀ-ին առաջարկվել է կնքել ասոցացման համաձայնագիր, որը, ուժի մեջ մտնելով, պետք է փոխարիներ Գործընկերության և համագործակցության ծրագիրը: Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունները ՀՀ-ի հետ մեկնարկել են 2010 թ. հուլիսին, իսկ 2012 թ. հունիսին՝ համաձայնագրի մաս կազմող Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու վերաբերյալ: Սակայն 2013 թ. հուլիսին Հայաստանը և Եվրոպական միությունն ավարտեցին համաձայնագրի շուրջ բանակցությունները: Հայաստանի՝ Մաքսային միությանն անդամակցելու որոշումից հետո ԵՄ-ի կողմից հայտարարվեց, որ հնարավոր չի լինելու նախաստորագրել ասոցացման համաձայնագիրը: Եվրոպական Միությունն ու Հայաստանը արձանագրեցին, որ ավարտել են ասոցացման համաձայնագրի, այդ թվում՝ Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու շուրջ բանակցությունները, սակայն չեն նախաստորագրելու այն, քանի որ Հայաստանն ունի նոր միջազգային հանձնառություններ<sup>7</sup>:

Այսպես, Արևելյան գործընկերության մեկնարկով Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Ուկրաինայի և Մոլդովայի համար ստեղծվել էր ԵՄ-ի հետ առավել մերձենալու հնարավորություն: ԵՄ-ի այս նոր ձևաչափը ենթադրում էր քաղաքական ինտեգրման ավելի բարձր աստիճան, ինչպես նաև ԵՄ տնտեսական և սոցիալական համակարգի մեջ ներգրավվելու հեռանկարային նպատակներ, ԵՄ-ի շուկա աստիճանական ինտեգրման, վիզաների ազատականացման և խոր ու համապարփակ ազատ առևտրի գոտու ստեղծման հնարավորություններ: Արևելյան գործընկերներից Մոլդովան, Վրաստանը և Ուկրաինան, 2014 թ. ստորագրելով ԵՄ ասոցացման համաձայնագրի և տնտեսական, և քաղաքական մասը, հաստատեցին Եվրոպական ինտեգրման վեկտորը զարգացնելու հեռանկարը<sup>8</sup>: Մինչդեռ Հայաստանը միացավ Ռուսաստանի, Ղազախստանի

<sup>6</sup> ՀՀ համագործակցությունը ԵՄ-ի հետ, ՀՀ արտաքին գործերի նախարարություն, <http://www.mfa.am/hy/country-by-country/eu/> (մուտք՝ 21.07.2015):

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> “The EU’s Association Agreements with Georgia, the Republic of Moldova and Ukraine”, European Commission MEMO, Brussels, 23 June 2014, [http://europa.eu/rapid/press-release\\_MEMO-14-](http://europa.eu/rapid/press-release_MEMO-14-)

և Բելառուսի ինտեգրման նոր նախագծին՝ Եվրասիական տնտեսական միությանը<sup>9</sup>: Պետք է նշել, որ թեպետև 2013 թ. հուլիսին Հայաստանը և ԵՄ-ն դադարեցրել էին Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունները, այնուամենայնիվ 2013 թ. նոյեմբերի 29-ի կայացած Արևելյան գործընկերության վիլնյուսյան գագաթաժողովի շրջանակներում ընդունվել է Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև համատեղ հայտարարություն: Համաձայն դրա՝ կողմերը հանձնառություն ստանձնեցին շարունակել զարգացնելու և ամրապնդելու համագործակցությունը՝ ուղղված ժողովրդավարական հաստատությունների և դատական համակարգի շարունակական բարելավմանը, մարդու իրավունքների և օրենքի գերակայության խթանմանը, արդյունավետ կառավարմանը, կոռուպցիայի դեմ պայքարին, քաղաքացիական հասարակության ամրապնդմանը, առևտրի ու ներդրումների ընդլայնման համար միջավայրի հետագա կատարելագործմանը և այլն<sup>10</sup>: Դրանով ակնհայտ է դառնում, որ Եվրոպական միությունը չի կորցրել իր հետաքրքրությունը Հայաստանի նկատմամբ:

### **ԱԼԳ պետություններ. համեմատական վերլուծություն**

Եվրասիական տնտեսական հիմնահարցերի ուսումնասիրման գործընթացում կարևոր է անդրադառնալ այն հանգամանքին, որ սկզբնական շրջանում ԵՄ-ը Հարավային Կովկասի նկատմամբ վարում էր տարածաշրջանային մոտեցում՝ միասնական և հավասար սկզբունքներ ցուցաբերելով Հայաստանի, Վրաստանի և Ադրբեյջանի հանդեպ, ապա Ռիգայի գագաթաժողովից հետո արձանագրվեց, որ ԱԼԳ-ն շարունակելու է իր գործունեությունը՝ առաջնորդվելով մասնակից պետությունների նկատմամբ տարբերակման (դիֆերենցման) սկզբունքով, և հետագա համագործակցությունը սահմանվելու է՝ գործընկերների ձգտումներից և պահանջներից ելնելով, ինչպես նաև բարեփոխումների տեմպով<sup>11</sup>:

Այստեղից էլ հետազոտության հիմնահարցը. արդյո՞ք արդարացված է տարբերակման սկզբունքը ոչ միայն գործընկերների պահանջների և ակնկալիքների տեսակետից, այլև նրանց բարեփոխումների և զարգացման միտումների տարբերության առումով: Այդ նպատակով ժողովրդավա-

430\_en.htm (accessed 20.07.2015).

<sup>9</sup> 2015 թ. հունվարի 2-ին Հայաստանը դարձավ Եվրասիական տնտեսական միության անդամ:  
<sup>10</sup> «Հայաստանի Հանրապետության ու Եվրոպական միության միջև համատեղ հայտարարություն», մամուլի հաղորդագրություն, նոյեմբերի 29, 2013 թ., ՀՀ Արտաքին գործերի նախարարություն, [http://www.mfa.am/hy/press-releases/item/2013/11/29/eu\\_js/](http://www.mfa.am/hy/press-releases/item/2013/11/29/eu_js/) (մուտք՝ 22.07.2015):

<sup>11</sup> “Joint Declaration of the Eastern Partnership Summit”, Riga, May 21–22, 2015, p. 3, file:///C:/Users/User/Downloads/Riga%20Declaration%20220515%20Final.pdf (accessed 22.07.2015)




րության չափման ինդեքսի և մի շարք այլ ցուցանիշների միջոցով փորձենք պարզել որքանով տարբեր կամ միանման են ինտեգրման տարբեր ուղղություններ ընտրած ԱլԳ պետությունների զարգացման միտումները և դրանց համեմատությունը ԵՏՄ հիմնադիր անդամներ Ռուսաստանի և Ղազախստանի հետ:

Այսպես՝ Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի<sup>12</sup> (ԺՄԻ) համաձայն՝ դիտարկվող բոլոր պետությունները մասնակի ժողովրդավարական են (տես գծապատկեր 1): ԺՄԻ-ի ամենաբարձր ցուցանիշն ունի Մոլդովան (53,4), որին որոշ չափով զիջում է Վրաստանը (48,1), այնուհետև՝ Ուկրաինան (45,6): Հայաստանը ստացել է 42,5 միավոր: Ամենացածր ինդեքսն ունի Ադրբեջանը (37,5), որը Ղազախստանի հետ բավականին մոտ է «ոչ ժողովրդավարական քաղաքական համակարգ» կատեգորիային<sup>13</sup>: Ուշագրավ է, որ Հայաստանը միջանկյալ դիրք է զբաղեցնում եվրոպական և եվրասիական ինտեգրման հարթակներում:

Գծապատկեր 1

Ժողովրդավարության մակարդակի ինդեքսը (2013 թ.)<sup>14\* 15</sup>



Դիտարկելով ԺՄԻ-ի Քաղաքական գործոնների ինդեքսը՝ ևս ակնհայտ է դառնում, որ առաջատար դիրքերում են Մոլդովան (56,2), Վրաստանը (48,6), որոնց հետևում են Ուկրաինան (39,4) և Հայաստանը (39),

<sup>12</sup> Ար. Ալեքսանյան, Ժողովրդավարության մակարդակի չափման մոդելը // Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի համեմատական վերլուծություն. Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ուկրաինա, Մոլդովա // Խմբ.՝ Ար. Ս. Ալեքսանյան, Եր., ԵՊՀ հրատ., 2015, էջ 13–26:

<sup>13</sup> Ար. Ալեքսանյան, Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի միջերկրային վերլուծությունը (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ուկրաինա, Մոլդովա) // Նույն տեղում, էջ 255–268:

<sup>14\*</sup> Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

<sup>15</sup> Ժողովրդավարության մակարդակի միջերկրային ինդեքսն արտահայտվում է 0–ից մինչև +100 միջակայքում ընկած համապատասխան միավորներով, որտեղ պետությունները որակվում են հետևյալ կերպ. 0–32 – ոչ ժողովրդավարական, 33–66 – մասնակի ժողովրդավարական, 67–100 – ժողովրդավարական:

որոնց միավորային տարբերությունն աննշան է: Ադրբեջանը (25,3) այդ երկրների շարքում զբաղեցնում է ամենացածր հորիզոնականը: Ընդ որում՝ անջրպետը Մոլդովայի և Ադրբեջանի միջև բավականին մեծ է (տես գծապատկեր 2):

Կարևոր է անդրադառնալ նաև ԺՄԻ քաղաքական գործոնների ենթաինդեքսի մի շարք փոփոխականներին: Ըստ «Ազատության տան»՝ քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների լավագույն ցուցանիշներն են գրանցել (2012 թ., 2013 թ.) Մոլդովան (3), Վրաստանը (3) և Ուկրաինան (3,5), որոնք բնութագրվում են որպես «մասնակի ազատ»՝ բավականաչափ մոտ գտնվելով «ազատ» երկրների կատեգորիային: Հայաստանն իր ազատության վարկանիշով ևս հայտնվել է «մասնակի ազատ» երկրների շարքում՝ քաղաքական իրավունքի ու քաղաքացիական ազատության կատեգորիաներում արձանագրելով համապատասխանաբար 5 և 4 միավորներ: Մնացած պետությունները (Ռուսաստան, Ղազախստան, Ադրբեջան, Բելառուս), ըստ զեկույցի փորձագիտական գնահատականների, «անազատ» երկրների շարքում են<sup>16</sup>:

Հատկանշական է, որ Համաշխարհային բանկի կողմից հրապարակվող քաղաքական կայունությունը / բռնության բացակայությունը ինդեքսի սովյալների համաձայն՝ դիտարկվող պետությունների շարքում Հայաստանը 2012 թ. և 2013 թ. քաղաքականապես ամենակայունն է, իսկ Ռուսաստանը (2012 թ.) և Ուկրաինան (2013 թ.)՝ անկայունը<sup>17</sup>: Ընդ որում, եթե նախորդ տարվա համեմատությամբ Հայաստանի նշված ցուցանիշը նվազել է 1 միավորով, ապա Ուկրաինայինը՝ 20 միավորով՝ Մայդանում տեղի ունեցած իրադարձությունների զարգացմամբ: Ըստ «Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի՝ Վրաստանում (49) առավել հաջողված է կոռուպցիայի դեմ պայքարը, իսկ ամենախնդրահարույց իրավիճակը պահպանվում է Ուկրաինայում (25) (գնահատվում է 0–100 բալային համակարգով, ընդ որում՝ 0–ն նշանակում է կոռուպցիայի ընկալման ամենաբարձր մակարդակը, 100–ը՝ ամենացածր):

Ք<sub>ԳԻ</sub>-ի փոփոխականների վերլուծությունը ցույց է տալիս, որ Մոլդովայում և Վրաստանում, ըստ կառավարման ձևի, գերակայում են խորհրդարանական հանրապետությանը բնորոշ տարրերը: Միևնույն ժամանակ միայն Ուկրաինայի և Մոլդովայի խորհրդարաններում, ի տարբերություն մյուս երկրների, իշխանության և ընդդիմության պատգամավորական տեղերի բաշխումը քիչ թե շատ հավասարաչափ է: Մյուս վեց պետություններում

<sup>16</sup> “Freedom in the World, 2014”, Annual Report, Freedom House.

<sup>17</sup> ՀԲ պաշտոնական կայք՝ <http://info.worldbank.org/governance/wgi/index.aspx#home> (մուտք՝ 22.07.2015):

գործադիր իշխանության ղեկավարի կուսակցությունը կամ նրան սատարող ուժերը կազմել են պատգամավորների բացարձակ մեծամասնություն: Վերջինս հակասում է իշխանությունների տարանջատման ժողովրդավարական սկզբունքին:

ԺՄԻ-ի տնտեսական գործոնների ինդեքսի տվյալների համաձայն՝ ոլորտի առաջատարն է Ադրբեջանը (47,4), իսկ Բելառուսի արձանագրած արդյունքը (41,5) զիջում է մնացած պետություններին: Հայաստանը ստացել է 42,9 միավոր (տե՛ս գծապատկեր 2): Պետք է նշել, որ Ադրբեջանի տնտեսության զարգացման տեմպերը մեծապես պայմանավորված են նավթային արդյունաբերությամբ, որը պետական բյուջեի եկամուտների 70 %-ն է<sup>18</sup>:

Ի տարբերություն տնտեսական գործոնների ինդեքսի ցուցանիշի՝ սոցիալական գործոնների ինդեքսի 2013 թ. ամենաբարձր ցուցանիշն ունի Բելառուսը (58,3) (տե՛ս գծապատկեր 2): Սա վկայում է Բելառուսում սոցիալական ոլորտում տնտեսական զարգացման արդյունքների ներդրման և արդյունավետ սոցիալական քաղաքականության իրականացման մասին: Համեմատության համար տեղին է նշել, որ եթե 1999 թ. բնակչության աղքատության մակարդակը 46,7 % էր, 2000 թ.՝ 41,9 %, ապա 2013 թ. այդ ցուցանիշը եղել է ընդամենը 5,5 %<sup>19</sup>: ՍԳԻ-ի նվազագույն ցուցանիշն ունի Վրաստանը (49,7), որին հաջորդում է Հայաստանը (51,8): ԵՎ Վրաստանը, և՛ Հայաստանն ունեն գործազրկության հետ կապված լուրջ խնդիրներ: Վրաստանում աղքատության մակարդակը ցածր լինելով՝ բավականաչափ բարձր է հասարակության բևեռացվածության մակարդակը (Ջինի ինդեքսը կազմում է 0,414): Մինչդեռ Հայաստանի սոցիալական ոլորտում առկա լրջագույն խնդիրներից է հենց աղքատության մակարդակը, որը 2012 թ. տվյալներով կազմել է 32,4 %<sup>20</sup>:

## Գծապատկեր 2


Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի քաղաքական, սոցիալական և տնտեսական գործոնները (2013 թ.)<sup>21\*</sup>

<sup>18</sup> V. Bayramov, “Spotlight on the Azerbaijani economy.” In Spotlight on Azerbaijan, edited by Adam Hug, p. 58, (London, 2012), <http://fpc.org.uk/fsblob/1462.pdf> (accessed 22.07.2015).

<sup>19</sup> ՀԲ պաշտոնական կայք՝ <http://data.worldbank.org/indicator/SI.POV.NAHC> (մուտք՝ 22.07.2015):

<sup>20</sup> ՀԲ պաշտոնական կայք՝ <http://data.worldbank.org/indicator/SI.POV.NAHC>, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայք՝ <http://www.armstat.am> (20.10.2014):

<sup>21\*</sup> Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:



Այստեղ կարևոր է անդրադառնալ այն հանգամանքին, որ եթե քաղաքական գործոնների ինդեքսում դիտարկվող պետությունների արձանագրած ցուցանիշների միջակայքային հեռավորությունը մեծ է, ապա տնտեսական և սոցիալական գործոնների ինդեքսում՝ հակառակը (տես գծապատկեր 2): Այսինքն՝ քաղաքական ոլորտում իրական բարեփոխումների և առաջընթացի տեսակետից եվրոպական ինտեգրման ուղղությամբ շարժվող պետությունների ցուցանիշները բավականին բարձր են, ընդ որում՝ Հայաստանի գրանցած արդյունքները շատ ավելի մոտ են այս խմբի պետություններին: Մինչդեռ տնտեսական և սոցիալական առաջընթացի և զարգացման առումով բոլոր պետությունները գրեթե միևնույն մակարդակում են:

Հատկանշական է նաև տնտեսական ազատության ինդեքսի համեմատական վերլուծությունը, որի համաձայն՝ Հայաստանն ու Վրաստանը արձանագրել են բարձր ցուցանիշներ, որոնց միջինը մոտ է ԵՄ-ի ցուցանիշին (71), այնինչ Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի միջինացված ցուցանիշը հավասար է 55-ի: Սա նշանակում է, որ Հայաստանի և Վրաստանի տնտեսություններն ավելի ազատականացված են և այս առումով ավելի մոտ են ԵՄ տնտեսական համակարգին<sup>22</sup>:

Արևելյան գործընկերության երկրների եվրաինտեգրման ինդեքսի 2014 թ-ի հետազոտության արդյունքների համաձայն՝ առաջատար դիրքերում են Մոլդովան և Վրաստանը, որոնց հաջորդում է Ուկրաինան: Հայաստանը զբաղեցնում է չորրորդ հորիզոնականը, որին հետևում են Ադրբեջանն ու Բելառուսը: Ինդեքսի հաշվարկման 3 հիմնական փոփոխականների՝ կապ, մոտարկում և կառավարում գնահատականները վերլուծելիս կարելի է արձանագրել, որ Հայաստանի արդյունքները շատ ավելի մոտ են առաջատար եռյակին, քան Ադրբեջանին և Բելառուսին: Ավելին,

<sup>22</sup> Ար. Ալեքսանյան, Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի միջերկրային վերլուծությունը (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ուկրաինա, Մոլդովա) // Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի համեմատական վերլուծություն. Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ուկրաինա, Մոլդովա // Խմբ.՝ Ար. Ս. Ալեքսանյան, Եր., ԵՊՀ հրատ., 2015, էջ 257-267:

մի շարք ոլորտներում Հայաստանը ավելի լավ արդյունքներ է գրանցել, քան Ուկրաինան: Օրինակ՝ «մոտարկում» փոփոխականի ցուցանիշներից դրանք են. անկախ դատական իշխանություն, գործածարար միջավայր, պայքարը կոռուպցիայի դեմ, «կապ» փոփոխականի ցուցանիշներից՝ առևտրային հոսքեր, առևտրի պաշտպանության գործիքներ, ԵՄ ծրագրերի մասնակցություն, «կառավարում» փոփոխականի ցուցանիշներից՝ եվրոպական ինտեգրման ինստիտուցիոնալ գործիքներ<sup>23</sup>:

## Եզրակացություն

Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ կարող ենք արձանագրել, որ բարեփոխումների, զարգացման առաջընթացի և միտումների առումով ԵՄ-ի հետ մերձենալու հստակ քաղաքականություն վարող պետությունների (Մոլդովա, Վրաստան, Ուկրաինա) գրանցած արդյունքներն ավելի բարձր են, քան Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների և Ադրբեյջանի արդյունքները: Սակայն պետք է նշել, որ վերջիններիս հետ համեմատած՝ Հայաստանի գրանցած ցուցանիշները, առնվազն քաղաքական ոլորտում, շատ ավելի բարձր են և մոտ են եվրասիական տնտեսական միության ինտեգրման հոսքերն ու թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական ծրագրերը:

Այսպես՝ հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ԱԳ պետություններն անկախ ԵՄ-ի հետ համագործակցության ակնկալիքներից և ինտեգրման որդեգրած քաղաքականությունից ունեն առաջընթացի տարբեր միտումներ և զարգացման տարբեր մակարդակներ: Ըստ այդմ, վերլուծության արդյունքներից ելնելով, կարծում ենք, որ ԱԳ պետությունների նկատմամբ տարբերակման սկզբունքն արդարացված է: Այս առումով այն կարող է դառնալ ԱԳ նոր ձևաչափի հիմքը. նոր ձևաչափ, որում յուրաքանչյուր պետության նկատմամբ կցուցաբերվեն տարբերակված նոր քաղաքականություն, համապատասխան համագործակցություն և ծրագրեր:

<sup>23</sup> “European Integration Index 2014 for Eastern Partnership Countries”, <http://www.eap-index.eu/sites/default/files/EaP%20Index%202014.pdf> (accessed 25.07.2015).

## ABOUT THE ISSUES OF EUROPEAN INTEGRATION IS THE EASTERN PARTNERSHIP A NEW FORMAT?

**ARUSYAK ALEKSANYAN**

### **Introductory**

European integration is certainly regarded as a priority in the foreign policy of Armenia. It is a broad conception encompassing not only Armenia's relationship with the European Union (EU), but with other institutions as well, such as the Council of Europe (CoE), the Organization for Security and Cooperation in Europe (OSCE) and NATO. This Article offers review of the latest developments taking place around the relationship with the EU, particularly in the frames of the Eastern Partnership Program (EaP). The Article seeks to conduct a comparative analysis of the EaP countries taking into account a number of criteria (level of democracy, economic freedom, index of European integration, etc.). The EaP countries are compared both with one another and with Russia and Kazakhstan, in order to clarify whether or not the trends and levels of development in the countries moving towards the European and Eurasian integration are the same. Accordingly, the Article covers the study and analysis of the achievements, sectoral development and regress of the EaP countries marked within the frameworks of the Partnership.

### **The process of European integration in Armenia**

The formation of Armenia–EU relationship was launched after the declaration of independence of the Republic of Armenia. The main document regulating the EU–Armenia relationship – the Partnership and Cooperation Agreement (PCA), was signed in 1996 and entered into force in 1999. This Agreement, concluded for a ten–year period,<sup>24</sup> is regarded as a legal basis and official consolidation of EU–Armenia multilateral cooperation. Except for security guarantees, the PCA includes all fields of cooperation: economic, social, political, environmental as well as issues of law, democracy, human right protection and others<sup>25</sup>.

---

<sup>24</sup> Pursuant to the relevant provision of the Agreement, this period is automatically prolonged for another year after its expiration.

<sup>25</sup> “Partnership and Cooperation Agreement between the Republic of Armenia, on one side, and the European Communities and their Member States, on the other side”, April 22, 1996, [http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:21999A0909\(01\)](http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:21999A0909(01)) (data retrieved on 20.07.2015);

After the expansion of 2004, the EU developed a new cooperation policy looking to establish closer political and economic ties with its eastern and southern neighbors.<sup>26</sup> Thus, in 2004, Armenia, Georgia and Azerbaijan were included in the European Neighborhood Policy (ENP).<sup>27</sup> It resulted in a new level of cooperation between the EU and Armenia encouraging closer political, economic, security and cultural connections with the EU. In November 2006, the ENP Action Plan was developed within the frameworks of the ENP. The Action Plan highlights a number of key areas of cooperation, such as democratization, rule of law, human rights, socio-economic reforms, improvement of investment climate, poverty reduction, etc.<sup>28</sup>

The European Neighborhood Policy was followed by another important regional initiative, the Eastern Partnership. The Eastern Partnership was launched on May 7, 2009, at the Summit of Leaders of the EU and the eastern partner countries, hosted in Prague. By this initiative, the EU's eastern partner countries were proposed cooperation in the format of "27 + 6" (27 EU member states + 6 partner states – Armenia, Azerbaijan, Belarus, Georgia, Moldova, Ukraine). The multilateral cooperation within the Eastern Partnership takes place via four different thematic platforms:

1. Democracy, good governance and stability;
2. Economic integration and convergence towards the EU policies;
3. Energy Security;
4. People to people connections between different countries.<sup>29</sup>

Within the Eastern Partnership program, Armenia was proposed signing an Association Agreement (AA), which should replace the Partnership and Cooperation Program once it becomes effective. Negotiations with Armenia towards signing the AA were launched in July, 2010, and in June 2012, they started negotiating on the establishment of a Deep and Comprehensive Free Trade Area (DCFTA), which is an integral part of the AA. In July 2013, Armenia and the European Union finalized negotiations on the Agreement. After the decision of Armenia to join the Customs Union, the EU declared that initialing

---

<sup>26</sup> "European Neighborhood Policy (ENP)", European External Action Service, [http://eeas.europa.eu/enp/about-us/index\\_en.htm](http://eeas.europa.eu/enp/about-us/index_en.htm) (data retrieved on 21.07.2015)

<sup>27</sup> ENP includes EU 16 closest neighbors: Armenia, Georgia, Azerbaijan, Belarus, Ukraine, Moldova, Algeria, Egypt, Jordan, Israel, Lebanon, Libya, Morocco, Syria, Tunisia and the occupied Palestinian territories.

<sup>28</sup> "EU-Armenia Action Plan", November 14, 2006, [http://eeas.europa.eu/enp/pdf/pdf/action\\_plans/armenia\\_enp\\_ap\\_final\\_en.pdf](http://eeas.europa.eu/enp/pdf/pdf/action_plans/armenia_enp_ap_final_en.pdf) (data retrieved on 20.07.2015)

<sup>29</sup> "Armenia-EU cooperation", the RA Ministry of Foreign Affairs, <http://www.mfa.am/hy/country-by-country/eu/> (data retrieved on 21.07.2015)

the Association Agreement was not possible. The EU and Armenia recorded the completion of negotiations on the Association Agreement, including the Agreement on Deep and Comprehensive Free Trade Area, yet did not proceed with initialing it due to Armenia's new international commitments.<sup>30</sup>

Thus, with the launch of the Eastern Partnership, Armenia, Azerbaijan, Georgia, Belarus, Ukraine and Moldova received an opportunity of developing closer ties with the EU. This new format of cooperation implied a higher level of political integration, as well as long-term goals, including prospects of involvement in the EU's economic and social system, gradual integration in the EU market, establishment of visa-free regime and a deep and comprehensive free trade area. Some of the eastern partners – Moldova, Georgia and Ukraine, signed both the economic and political part of the EU Association Agreement in 2014, confirming the prospect of following the route of European integration.<sup>31</sup> Meanwhile, Armenia joined the new integration project initiated by Russia, Kazakhstan and Belarus – the Eurasian Economic Union (EEU).<sup>32</sup>

It should be noted that although the negotiations on the AA between the EU and Armenia were finalized in July 2013, they adopted a joint statement<sup>33</sup> at the Vilnius summit of the Eastern Partnership on November 29, 2013. As specified in the statement, the parties have committed themselves to the development and strengthening partnerships in order to continuously improve democratic institutions and judicial system and to promote human rights, the rule of law, good governance, anti-corruption fight, strengthening of civil society, further improvement of trade and investment climate, etc. This best shows that the European Union still has interest in Armenia.

### **The EaP States: Comparative Analysis**

While studying the issues of European integration, one should reflect upon the fact that the EU had initially adopted a regional approach towards the South Caucasus, demonstrating principles of cohesion and impartiality towards Armenia, Georgia and Azerbaijan. Later, the Riga Summit reached a decision about conducting the further activities by principle of differentiation among the

<sup>30</sup> Ibid

<sup>31</sup> On January 2, 2015, Armenia became the member of the Eurasian Economic Union.

<sup>32</sup> "The EU's Association Agreements with Georgia, Moldova and Ukraine", European Commission MEMO, Brussels, June 23, 2014, [http://europa.eu/rapid/press-release\\_MEMO-14-430\\_en.htm](http://europa.eu/rapid/press-release_MEMO-14-430_en.htm) (data retrieved on 20.07.2015)

<sup>33</sup> "Joint statement between the Republic of Armenia and the European Union", Press Release, November 29, 2013, the RA Ministry of Foreign Affairs, [http://www.mfa.am/hy/press-releases/item/2013/11/29/eu\\_js/](http://www.mfa.am/hy/press-releases/item/2013/11/29/eu_js/) (data retrieved on 22.07.2015)



member states, as well as defining further cooperation with regard to individual needs and ambitions of partners and pace of reform set by each country.<sup>34</sup>

Therefore, the main task of the research is to find out whether the principle of differentiation is justified not only in terms of partners' needs and expectations, but also from the point of view of differences in reforms and development trends. With this in mind, we will try to clarify by means of index of democracy and other indicators whether the development trends of the Eastern Partnership countries moving in different directions of integration, are different or not, and will compare them with the current trends existing in EEU founding members Russia and Kazakhstan.

As shown by the index of democracy level (IDL),<sup>35</sup> all the countries reviewed are partially democratic (see Figure 1). The highest index is that of Moldova (53.4), which is somewhat higher than the index of Georgia (48.1), Ukraine comes next (45.6). Armenia has received 42.5 points. Azerbaijan has the lowest IDL (37.5), which, like the one in Kazakhstan, is quite close to the category of "a non-democratic political system".<sup>36</sup>

It is noteworthy that Armenia occupies an intermediate position between the European and Eurasian platforms of integration.

## Figure 1

### Index of Democracy Level (2013)<sup>37 38</sup>

The observation of the sub-index of political factors of IDL again makes it obvious that Moldova (56.2) and Georgia (48.6) are the leading countries, followed by Ukraine (39.4) and Armenia (39) (with minor difference in points). Azerbaijan ranks among the countries with the lowest IDL (25.3). By the way, a serious gap is recorded between Azerbaijan and Moldova (see Figure 2).

It is important to address a number of measurements for the sub-index of political factors of IDL. According to "Freedom House" Human Rights

<sup>34</sup> "Joint Declaration of the Eastern Partnership Summit", Riga, May 21–22, 2015, p.3, file:///C:/Users/User/Downloads/Riga%20Declaration%20220515%20Final.pdf (data retrieved on 22.07.2015)

<sup>35</sup> Ar. Aleksanyan, "Dimensional model of democracy level", //the comparative analysis of the index of democracy level: Armenia, Georgia, Azerbaijan, Russia, Belarus, Kazakhstan, Ukraine, Moldova// Ed. Ar. S. Aleksanyan. – Yerevan, YSU publication, 2015, p.13–26.

<sup>36</sup> A. Aleksanyan, "Cross-country analysis of the index of democracy level (Armenia, Georgia, Azerbaijan, Russia, Belarus, Kazakhstan, Ukraine, Moldova)", // Ibid, p. 255–268.

<sup>37</sup> As estimated by the author.

<sup>38</sup> Cross-country Index of Democracy Level is expressed by the relevant points in the range from 0 to 100, where countries are ranked as non-democratic (0–32), partially democratic (33–66), democratic (67–100).

Organization, the highest indicators of political rights and civil freedoms have been recorded (2012–2013) by Moldova (3), Georgia (3) and Ukraine (3.5), ranked as “partly free,” which placed them close enough to the category of “free” countries. Armenia has also been rated as “partly free”, recording 5 and 4 points in the categories of political rights and civil freedoms, respectively. By the estimations of the experts, the other countries (Russia, Kazakhstan, Azerbaijan and Belarus) have been ranked as «not free».<sup>39</sup>

It is noteworthy that according to the data concerning the index of political stability and absence of violence, published by the World Bank, among all the countries observed, Armenia has been recognized the most politically stable state in 2012 and 2013, whereas Russia (in 2012) and Ukraine (in 2013) have been ranked as the most unstable.<sup>40</sup> Furthermore, if compared with the previous year, the index of Armenia has declined by 1 point, whereas the Ukrainian level of index has declined by 20 points as a result of the events in Maidan. According to «Transparency International» Anti-Corruption Center, the most successful anti-corruption fight has been recorded in Georgia (49), and the most problematic situation in this regard still remains in Ukraine (25) (ranking is conducted by 0–100 scoring system, with 0 being the highest, and 100 – the lowest level of perception of corruption).

The analysis of measurements of the index of political factors shows that in Moldova and Georgia the dominating elements typical of this or that form of government are the elements of parliamentary republic. At the same time, only in Ukraine and Moldova, unlike other countries, the parliamentary seats between the government and the opposition are distributed more or less equally. In the other six countries, the party of the head of the executive power or the forces supporting him, make up the absolute majority of members of Parliament. This contradicts to the democratic principle of separation of powers.

According to the sub-index of the economic factors of IDL, the leader of the industry is Azerbaijan (47.4), whereas the results recorded in Belarus (41.5) are the lowest amongst all. Armenia has gained 42.9 points (see Figure 2). It should be noted that the speed of the economic development in Azerbaijan is largely determined by the oil industry, which forms 70% of the state budget.<sup>41</sup>

Unlike the sub-index of economic factors, the highest rate of the sub-index of social factors in 2013 is won by Belarus (58.3) (see Figure 2). This testifies to

<sup>39</sup> “Freedom in the World, 2014”, Annual Report, Freedom House.

<sup>40</sup> The official website of WB, <http://info.worldbank.org/governance/wgi/index.aspx#home> (data retrieved on 22.07.2015)

<sup>41</sup> V. Bayramov, “Spotlight on Azerbaijan”, edited by Adam Hug, p. 58, (London, 2012), <http://fpc.org.uk/fsblob/1462.pdf> (data retrieved on 22.07.2015).

the results of economic development successfully installed into the social sector and the social policies effectively implemented. For a comparison, in 1999, the poverty rate in Belarus comprised 46.7 percent, in 2000, it was already 41.9 percent, and in 2013, the indicator declined to 5.5 percent.<sup>42</sup> Georgia has gained the lowest rate of the index of social factors (49.7), which is somewhat lower than the index of Armenia (51.8).

Both Georgia and Armenia face serious problems of unemployment. Georgia has a low rate of poverty, but a fairly high level of polarization of the society (Gini index in Georgia is 0,414), whereas one of the most serious problems existing in the social sector of Armenia is the poverty rate, which amounted to 32.4 percent in 2012.<sup>43</sup>

## Figure 2

### Political, social and economic factors of the Index of Democracy Level (in 2013)<sup>44</sup>

One should reflect on a fact that the countries looked upon in the light of political factors, record a large range of indicators, whereas in the context of the sub-index of economic and social factors, they show a different picture (see Figure 2). This implies that in political sphere, the countries which have chosen the European integration, demonstrate rather good results in terms of actual reform and progress performance. Likewise, the results performed by Armenia, are much closer to the indicators recorded by this group of countries. Meanwhile, nearly all the countries experience the same level of progress and development in terms of economic and social aspects.

The comparative analysis of the index of economic freedom is also noteworthy. From this point of view, Armenia and Georgia have recorded high rates, the average of which is close to the EU indicator (71), whereas Russia, Belarus and Kazakhstan have demonstrated the average index of 55. This implies that the economies of Armenia and Georgia are more liberalized, hence closer to the EU economic system.<sup>45</sup>

<sup>42</sup> The official website of WB, <http://data.worldbank.org/indicator/SI.POV.NAHC> (data retrieved on 22.07.2015).

<sup>43</sup> The official website of WB, <http://data.worldbank.org/indicator/SI.POV.NAHC>, the official website of the RA National Statistical Service: <http://www.armstat.am> (20.10.2014).

<sup>44</sup> As estimated by the author.

<sup>45</sup> A. Aleksanyan, "Cross-country analysis of the index of democracy level (Armenia, Georgia, Azerbaijan, Russia, Belarus, Kazakhstan, Ukraine, Moldova)", //The comparative analysis of the index of democracy level: Armenia, Georgia, Azerbaijan, Russia, Belarus, Kazakhstan, Ukraine, Moldova// Ed. Ar. S. Aleksanyan. – Yerevan, YSU Publication, 2015, 257–267.

As seen from the results of the survey on the index of European integration of the Eastern Partnership countries completed in the 2014, the leaders of the survey are Moldova and Georgia, followed by Ukraine. Armenia occupies the fourth place, followed by Azerbaijan and Belarus. Analyzing the three key measurements of the index calculation (links, convergence and management), it can be recorded that the results demonstrated by Armenia are much closer to those of the leading trio than to the results of Azerbaijan and Belarus. Moreover, in a number of sectors, the results achieved by Armenia have been better than those of Ukraine. For instance, the indicators for measuring «Convergence» are independent judiciary, business environment, anti-corruption fight. Trade flows, trade defense instruments and participation in EU programs are the indicators for measuring «Links». «Management» is measured by institutional regulations in European integration.<sup>46</sup>

## Conclusion

Summarizing the findings of the survey, we can assume that in terms of reforms, progress and trends of development, the results performed by the countries clearly following the EU integration policy (Moldova, Georgia, Ukraine), are higher than the indicators demonstrated by the EEU member states and Azerbaijan. However, it should be noted that as compared to the aforementioned countries, the results achieved by Armenia, at least in the political sphere, are much higher and closer to the indicators of the countries heading towards the European integration. According to a number of indicators, Armenia occupies an intermediate position between these two groups of states. It allows us to draw a conclusion that Armenia is able to be a crossing platform for the European and Eurasian integration flows as well as for both the economic and political projects.

As seen in the survey results, the countries of the Eastern Partnership, irrespective of their expectations from the EU cooperation and the adopted integration policy, perform different tendencies of progress and different levels of development. Hence, taking into consideration the results of the analysis, we believe that the principle of differentiation applied towards the Eastern partnership countries, is justified. In this regard, the principle of differentiation may become a basis for a new format of the Eastern Partnership, a format which will imply a new differentiated policy adopted for each country, as well as cooperation and projects tailored to fit the particular needs of each state.

---

<sup>46</sup> «European Integration Index 2014 for Eastern Partnership Countries», <http://www.eap-index.eu/sites/default/files/EaP%20Index%202014.pdf> (data retrieved on 25.07.2015)

**ՌԻԳԱՅԻՑ ՀԵՏՈՒ ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ – ՀԱՅԱՍՏԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՓՈՓՈԽՎՈՂ  
ԱՇԽԱՐՀՈՒՄ**

**ՎԱՀԱՆ ՀՈՒՆԱՆՅԱՆ**

**Ներածություն**

Դեռևս Արևելյան գործընկերության վիլնյուսյան գագաթաժողովի ընթացքում ԵՄ-ն և Հայաստանն ընդունած համատեղ հռչակագրով մտադրություն էին հայտնել զարգացնելու իրենց հարաբերությունները՝ հաշվի առնելով կողմերի միջև գրանցված առաջընթացը և Հայաստանի պարտականություններն այլ ինտեգրացիոն ձևաչափերում: Արդեն 2015 թ. հունվարի 2-ին Հայաստանը դարձավ Եվրասիական միության անդամ, մարտին Հայաստանը և Եվրամիությունն ավարտեցին հարաբերությունների հետագա զարգացման համար հավանական բոլոր ուղղությունների ուսումնասիրման հարցով խորհրդատվությունները, իսկ մայիսին Եվրոպական հանձնաժողովը դիմեց ԵՄ խորհրդին՝ Հայաստանի հետ նոր համաձայնագրի շուրջ բանակցությունների վերաբերյալ մանդատ ստանալու համար: Եվ մոտ ապագայում, երբ Խորհուրդը կհաստատի մանդատը, կսկսվեն բանակցությունները նոր իրավապայմանագրային հիմքի շուրջ, ինչի շնորհիվ ԵՄ – Հայաստան հարաբերությունները նոր փուլ կմտնեն:

Հայաստանը Եվրոպական ընտանիքի և քաղաքակրթության անբաժանելի մասն է, նրա զարգացման հիմքում ընկած են Եվրոպական արժեհամակարգի սկզբունքները: Անկախությունից ի վեր Եվրամիության շարունակական աջակցությունը կարևոր դեր է ունեցել Հայաստանում պետական ու մասնավոր հատվածի արդիականացման և երկրի ընդհանուր կայունության աստիճանի բարձրացման հարցում, և համագործակցության խորացումը Միության հետ հիմնարար է ժողովրդավարության, մարդու իրավունքների, օրենքի գերակայության, մրցունակ շուկայական տնտեսության և այլ ոլորտներում բարեփոխումների հետագա խթանման համար: Այս տարի Եվրամիությունը սկսել է իր հարևանության քաղաքականության հայեցակարգի վերանայումը՝ նպատակ ունենալով յուրաքանչյուր արևելյան գործընկերոջ նկատմամբ ցուցաբերել անհատական մոտեցում՝ կախված նրա արտաքին ու ներքին պայմաններից և ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացման ցանկության և կարողության աստիճանից, ինչը Հայաստանի համար նոր հնարավորություններ է խոստանում: Իսկ

«ավելին ավելիի դիմաց» սկզբունքը թույլ է տալիս Հայաստանին ստանալու առավելագույն աջակցություն ԵՄ-ից՝ համապատասխան բարեփոխումների դիմաց:

Միաժամանակ, եթե դիտարկենք հարցի աշխարհաքաղաքական հարթությունը, Եվրամիության հետ հարաբերությունների խորացումը Հայաստանի՝ հավասարակշիռ և բազմավեկտոր արտաքին քաղաքականություն վարելու սկզբունքի արտացոլումն է: Հաշվի առնելով Ռուսաստան – ԵՄ հարաբերությունների համակարգում այժմ առկա հակասությունները հաղթահարելու անհրաժեշտությունը, ինչպես նաև Հայաստանի ձգտումը՝ կառուցել արտաքին քաղաքականությունը տարբեր համակարգերի փոխլրացման, խոշոր տերությունների շահերի համադրման բանաձևի վրա, թե՛ փորձագիտական, թե՛ քաղաքական շրջանակներում լայնորեն քննարկվում են Հայաստանի հնարավորությունը և կարողությունը՝ վերածվելու մի հարթակի, որտեղ Եվրասիական և Եվրոպական ինտեգրման ծրագրերը ընդհանուր եզրեր կարող են գտնել:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրելու ԵՄ – Հայաստան հարաբերությունների հետագա զարգացման հեռանկարները և դրան ուղեկցող աշխարհաքաղաքական գործընթացները: Սկզբում կանդիդատնանք ԵՄ – Հայաստան համագործակցության զարգացման հավանական ուղուն, ձևավորվելիք նոր իրավապայմանագրային հարաբերությունների շրջանակին՝ հաշվի առնելով Արևելյան գործընկերության (այսուհետ՝ ԱԳ) Ռիգայի գագաթաժողովի արդյունքները և այժմ ընթացող Եվրոպական հարևանության քաղաքականության (այսուհետ՝ ԵՀԲ) վերանայման գործընթացը: Այնուհետև, կդիտարկենք ԵՄ – Հայաստան հարաբերությունների աշխարհաքաղաքական չափումը և ԵՄ դերակատարությունը ՀՀ արտաքին քաղաքականության բալանսը պահպանելու մեջ: Ի վերջո, կքննարկվի ՀՀ կարողությունը՝ հարթակ դառնալու երկու ինտեգրացիոն խմբավորումների՝ Եվրոպական և Եվրասիական միությունների համար:

## **ԵՄ – Հայաստան համագործակցության հավանական շրջանակը**

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության համաձայն՝ «Եվրոպական կառույցների, առաջին հերթին ԵՄ-ի և նրա անդամ երկրների հետ հարաբերությունների զարգացումն ու ամրապնդումը ՀՀ արտաքին քաղաքականության առաջնային ուղղու-

թյուններից են»<sup>47</sup>: Հայաստանի համար ԵՄ-ն Եվրոպական արժեքները զարգացման մոդելի և արդիականացման շրջանակի դեր են կատարում: Ինչպես հայտարարել էր ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը ԱԼԳ Վիլնյուսի գագաթաժողովում. «Եվրոպական մոդելով Հայաստանի պետականության կառուցումն ու ամրապնդումը մեր գիտակցված ընտրությունն են եղել, և այդ գործընթացն այլևս անշրջելի է»<sup>48</sup>:

2009 թ. ԵՄ հարևանության քաղաքականության արևելյան չափումը հանդիսացող ԱԼԳ-ն հիմնադրվեց Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի վեց պետությունների՝ Միության հետ «քաղաքական ասոցացումը և տնտեսական ինտեգրումը»<sup>49</sup> խթանելու համար: Թե՛ Հայաստանի իշխանությունները, թե՛ ընդդիմությունը, թե՛ քաղաքացիական հասարակությունը դրական վերաբերվեցին ԱԼԳ մեկնարկին՝ դա համարելով լավ հնարավորություն ԵՄ – Հայաստան հարաբերությունները նոր մակարդակի հասցնելու, խթանելու ժողովրդավարական և տնտեսական բարեփոխումները: 2013 թ. սեպտեմբերի 3-ի Հայաստանի որոշումը՝ Մաքսային միությանը անդամակցելու, փոփոխություններ մտցրեց ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացման հետագա շրջանակի մեջ: Հնարավոր չեղավ ԱԼԳ վիլնյուսյան գագաթաժողովում նախաստորագրել ԵՄ – Հայաստան ասոցացման համաձայնագիրը (այսուհետ՝ ԱՀ), քանի որ դրա մաս կազմող Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու (այսուհետ՝ ԽՀԱԱԳ) ստեղծման մասին հատվածը դուրս էր եկել օրակարգից, ինչն էլ պայմանավորված էր նրանով, որ Մաքսային միություն կազմող երկրները առևտրի հետ կապված հարցերում իրենց իրավասությունը զիջում են Միության կառույցներին: Չնայած պաշտոնական Երևանի պատրաստակամությանը՝ ստորագրել ԱՀ-ի միայն քաղաքական մասն առանց ԽՀԱԱԳ պայմանագրի, ԵՄ-ն հրաժարվեց անել դա՝ պատճառաբանելով, որ ԽՀԱԱԳ-ն ԱՀ-ի անբաժանելի մասն է:

Այնուամենայնիվ, կողմերը Վիլնյուսի գագաթաժողովի ընթացքում համատեղ հոշակագիր ստորագրեցին, որով հանձնառություն ստանձնեցին զարգացնել համագործակցությունը՝ «ուղղված ժողովրդավարական հաստատությունների և դատական համակարգի շարունակական բարելավմանը, մարդու իրավունքների և օրենքի գերակայության խթանմանը, արդյու-

<sup>47</sup> Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն, մուտք՝ մայիսի 12, 2015 թ., [http://www.mfa.am/u\\_files/file/doctrine/Doctrinearm.pdf](http://www.mfa.am/u_files/file/doctrine/Doctrinearm.pdf)

<sup>48</sup> Հայաստանի Հանրապետության նախագահ, Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը Արևելյան գործընկերության երրորդ գագաթաժողովում, 29 նոյեմբեր, 2013 թ., մուտք՝ մայիսի 11, 2015 թ., <http://www.president.am/hy/statements-and-messages/item/2013/11/29/President-Serzh-Sargsyan-at-the-third-Eastern-Partnership-summit-speech/>

<sup>49</sup> European Council; Council of the European Union, “Eastern Partnership,” accessed June 2, 2015, <http://www.consilium.europa.eu/en/policies/eastern-partnership/>

նավետ կառավարմանը, կոռուպցիայի դեմ պայքարին, քաղաքացիական հասարակության ամրապնդմանը, առևտրի ու ներդրումների ընդլայնման համար միջավայրի հետագա կատարելագործմանը, շարժունակության գործընկերության շարունակական իրականացմանը և ոլորտային համագործակցության ընդլայնմանը»<sup>50</sup>: Նույն գազաթափոցի ընթացքում Հայաստանի նախագահը հայտարարեց. «Մեր գլխավոր նպատակն է Եվրոպական միության հետ ձևավորել այնպիսի գործունե կառուցակարգեր, որոնք մի կողմից՝ արտացոլում են մեր սոցիալ-քաղաքական և տնտեսական հարաբերությունների խորքային բնույթը, մյուս կողմից՝ համատեղելի են համագործակցության այլ ձևաչափերի հետ»<sup>51</sup>:

2014 թ. հունվարից վիզաների դյուրացման և հետընդունման համաձայնագրի, իսկ 2014 թ. մարտից՝ ԵՄ ծրագրերին Հայաստանի մասնակցության ընդհանուր սկզբունքների վերաբերյալ արձանագրության ուժի մեջ մտնելը, որը հնարավորություն է տալիս Հայաստանին մասնակցելու ԵՄ ոլորտային ծրագրերում և գործակալություններում, ինչպես նաև 2014–2017 թթ. 140–170 մլն եվրոյի աջակցության տրամադրումը՝ ուղղված մասնավոր հատվածի զարգացմանը, պետական կառավարման և արդարադատության ոլորտի բարեփոխումներին, ցույց տվեցին, որ եվրոպական կողմը, չնայած սկզբնական շրջանում Հայաստանի նկատմամբ ցուցաբերած որոշակի «սառնությանը», հետաքրքրված է համագործակցության հետագա խթանմամբ: Այս առումով, առաջին հերթին, անհրաժեշտ է կողմերի միջև ձևավորել նոր իրավական շրջանակ, որը հիմնված կլինի արդեն իսկ կատարված հսկայական աշխատանքի վրա:

Հասկանալի է, որ այժմ ԵՄ-ի և Հայաստանի միջև գործող, դեռևս 1996 թ-ին կնքված և 1999 թ-ից ուժի մեջ մտած գործընկերության և համագործակցության համաձայնագիրը և իրավականորեն դրա վրա հենվող 2006 թ. ԵՀԲ շրջանակներում ընդունված ԵՄ – Հայաստան Գործողությունների ծրագիրը վաղուց արդեն հնացել են և չեն արտահայտում կողմերի հավակնությունները և համագործակցության կարողությունները: Ամենայն հավանականությամբ, նոր համաձայնագիրը, որն այժմ պատրաստվում է կողմերի միջև, կտատանվի ԳՀՀ պլուս և ԱՀ մինուս տիրույթում, և նրանում ներառվելու է համագործակցության թե՛ քաղաքական, թե՛

<sup>50</sup> Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության ու Եվրոպական միության միջև համատեղ հայտարարություն, մամուլի հաղորդագրություն, 29 նոյեմբեր, 2013 թ., մուտք՝ մայիսի 21, 2015 թ., [http://www.mfa.am/hy/press-releases/item/2013/11/29/eu\\_js/](http://www.mfa.am/hy/press-releases/item/2013/11/29/eu_js/)

<sup>51</sup> Հայաստանի Հանրապետության նախագահ, Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը Արևելյան գործընկերության երրորդ գազաթափոցովում, 29 նոյեմբեր, 2013 թ., մուտք՝ մայիսի 11, 2015 թ., <http://www.president.am/hy/statements-and-messages/item/2013/11/29/President-Serzh-Sargsyan-at-the-third-Eastern-Partnership-summit-speech/>



տնտեսական հատվածը՝ չհաշված այն ոլորտները, որոնք կարգավորվում են Եվրասիական միության կողմից<sup>52</sup>: Համաձայնագիրը կարող է ներառել բանակցված ԱՀ-ի 4 գլուխներից երեքը, այն է՝ Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականություն, Արդարադատություն և ներքին գործեր, շրջակա միջավայրին, գիտությանը, տրանսպորտին, կրթությանը և այլ ոլորտային համագործակցությանը վերաբերող հարցեր<sup>53</sup>: Ըստ էության, ԵՄ-ն և Հայաստանը հնարավորություն ունեն խորացնելու համագործակցությունը բոլոր ոլորտներում՝ հանած առևտրի հետ կապված հարցերը:

Պետք է նշել, որ կողմերի հարաբերությունների ապագայի մասին ընդհանուր հայտարարի գալու համար զգալի ժամանակ պահանջվեց՝ պայմանավորված Եվրախորհրդարանի ընտրությունների և Եվրահանձնաժողովի նոր կազմի ձևավորման, ինչպես նաև Եվրասիական միությանը Հայաստանի անդամակցության գործընթացով, քանի որ անհրաժեշտ էր հասկանալ Հայաստանի պարտականություններն այդ կառույցի նկատմամբ:

Անցած տարվա նոյեմբերից ԵՄ – Հայաստան ինտենսիվ խորհրդատվություններ էին անցկացվում, և ուսումնասիրվում էին բոլոր այն ուղղությունները, որոնցում հնարավորություն կա համագործակցությունն էլ ավելի խորացնելու և ընդլայնելու: Այս գործընթացի բարձրակետը հանդիսացավ մարտ ամսվա ընթացքում իրար հետևող մի շարք կարևոր իրադարձությունները ԵՄ – Հայաստան հարաբերություններում. Եվրանեսթ խորհրդարանական վեհաժողովի 4-րդ պլենար և ԵՄ – Հայաստան խորհրդարանական կոմիտեի 15-րդ նիստը Երևանում, նախագահ Սարգսյանի այցը Բրյուսել՝ մասնակցելու Եվրոպական ժողովրդական կուսակցության գագաթաժողովին, որի շրջանակներում նախագահը հանդիպեց նաև Եվրոպական խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկի և Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի հետ, և, վերջապես, Եվրահանձնաժողովի ԵՀԲ և ընդլայնման բանակցությունների հարցերով հանձնակատար Հանի այցը Հայաստան, երբ հայտարարվեց, որ արդեն ավարտվել են խորհրդատվությունները, և կողմերը կսպասեն անդամ պետությունների կողմից Հանձնաժողովին մանդատ տալուն՝ նոր համաձայնագիր բանակցելու համար: Այս «Եվրոպական շաբաթը» ցույց տվեց կողմերի հանձնառությունը և քաղաքական կամքը հարաբերությունները նոր մակարդակի հասցնելու համար:

<sup>52</sup> Սարգիս Հարությունյան, ԵՄ – Հայաստան բանակցություններում «կարտացոլվի նաև տնտեսական հատվածը», Ազատություն ռադիոկայան, մայիսի 12, 2015 թ., մուտք՝ հունիսի 3, 2015 թ., <http://www.azatutyun.am/content/article/27012052.html>

<sup>53</sup> “EU-Armenia relations: future developments and prospects”, European Friends of Armenia, March 2014, 11, accessed June 3, 2015, <http://www.eufoa.org/uploads/FutureofEUAMRelations.pdf>

Արդեն Ռիգայի գագաթաժողովի ընթացքում ի հայտ եկան առաջին արդյունքները: Մասնավորապես, մի շարք զարգացումներ կան ոլորտային համագործակցության առումով: Կողմերը պատրաստվում են ամփոփելու բանակցությունները հետազոտությունների և նորարարությունների՝ «Հորիզոն 2020» շրջանակային ծրագրի ասոցացման վերաբերյալ: Բացի այդ՝ մոտ ապագայում բանակցություններ կսկսվեն Ձեռնարկությունների և Փոքր ու միջին ձեռնարկությունների մրցունակության ծրագրերին (COSME) Հայաստանի մասնակցելու և Ընդհանուր ավիացիոն համաձայնագրին միանալու շուրջ<sup>54</sup>: Հարաբերությունների օրակարգում հիմնարար տեղ է գրավում և Հայաստանի համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում ԵՄ-ի հետ վիզային ռեժիմի ազատականացումը: Ինչպես հայտնի է, ԵՄ – Հայաստան վիզային ռեժիմի դյուրացման և հետընդունման համաձայնագրերը ուժի մեջ մտան 2014 թ. հունվարին, ավելի վաղ՝ 2013 թ. հունվարից, Հայաստանը վերացրել էր մուտքի վիզայի պահանջը ԵՄ քաղաքացիների համար: Այս գործընթացի հաջորդ քայլը կլինի վիզային ռեժիմի ազատականացման շուրջ երկխոսության սկսումը, որը նախատեսում է հայկական կողմից մի շարք բարեփոխումների իրականացում: Երկխոսության հիմնական գործիքը կլինի վիզաների ազատականացման գործողությունների ծրագիրը, որը կազմված է չորս հատվածից. փաստաթղթերի անվտանգություն, ներառյալ կենսաչափական փաստաթղթեր, սահմանների համալիր կառավարում, միգրացիայի կառավարում, ապաստանի քաղաքականություն, հանրային կարգ և անվտանգություն, արտաքին հարաբերություններ և հիմնարար իրավունքներ: Գործողությունների ծրագիրը բաժանված է երկու մասի՝ համապատասխան օրենսդրության ընդունում ու ինստիտուտների ստեղծում և, այնուհետև, արդյունավետ իմպլեմենտացում<sup>55</sup>: Գործընթացի ավարտին երկիրը հնարավորություն է ստանում հաստատելու ազատ վիզային ռեժիմ ԵՄ-ի հետ:

Հանդիսանալով Եվրամիության փափուկ ուժի կարևոր գործիքներից մեկը՝ առանց վիզաների մուտքի ռեժիմը մեծապես կընդլայնի ԵՄ ազդեցությունը հայ հասարակությունում: Առանց վիզայի ռեժիմը զգալիորեն կմեծացնի մարդկային շփումները՝ նպաստելով ժողովրդավարացմանը և

<sup>54</sup> Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն, ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի ելույթը Եվրանեսթ ԽՎ Քաղաքական, մարդու իրավունքների և ժողովրդավարության հարցերի հանձնաժողովի նիստին, ապրիլի 16, 2015 թ., մուտք՝ մայիսի 20, 2015 թ., [http://www.mfa.am/hy/speeches/item/2015/03/16/min\\_euronest/](http://www.mfa.am/hy/speeches/item/2015/03/16/min_euronest/); European Council; Council of the European Union, “Joint Declaration of the Eastern Partnership Summit (Riga, 21–22 May 2015),” accessed May 23, 2015, [http://www.consilium.europa.eu/en/meetings/international-summit/2015/05/riga-declaration-220515-final\\_pdf/](http://www.consilium.europa.eu/en/meetings/international-summit/2015/05/riga-declaration-220515-final_pdf/)

<sup>55</sup> European Commission, “Commission assesses the implementation of Visa Liberalisation Action Plans by Ukraine and Georgia,” Press release, May 8, 2015, accessed May 25, 2015. [http://europa.eu/rapid/press-release\\_IP-15-4949\\_en.htm](http://europa.eu/rapid/press-release_IP-15-4949_en.htm)

հասարակության եվրոպականացմանը, Եվրոպայի ավելի լավ ընկալմանը, կրթի տնտեսական օգուտներ թե՛ Հայաստանի, թե՛ ԵՄ-ի համար՝ ի հաշիվ ընդլայնված տուրիզմի, առևտրի և բիզնեսի նոր հնարավորությունների<sup>56</sup>: Այս առումով պետք է նշել, որ մի շարք հեղինակավոր փորձագետների կարծիքով ԵՄ պետք է շատ ավելի ուշադրություն դարձնի հասարակությունների ինտեգրմանը Հարավային Կովկասի երկրների հետ հարաբերություններում՝ իր քաղաքականության ելակետը փոխելով նեղ իրավական և տեխնիկական մոտարկումից հասարակությունների հետ ինտեգրմանը, այդ թվում՝ մարդկային կապերի միջոցով, քանի որ իրականում քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունը, վիզային ռեժիմի ազատականացումը և կրթական փոխանակումները մնացել են ԵՄ՝ ԱՀ/ԽՀԱԱԳ բանակցելու ձգտումների ստվերի տակ: Մինչդեռ, հասարակական կապերը պետք է հարաբերությունների հիմնարար կետ լինեն և կազմեն ավելի խոր, երկարաժամկետ հարաբերությունների հիմքը<sup>57</sup>:

Ռիզայի գազաթափողովում կողմերը ողջունեցին. «...ձեռք բերված ընդհանուր փոխըմբռնումը ԵՄ – Հայաստան ապագա համաձայնագրի մասշտաբների վերաբերյալ՝ ուղղված ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող բոլոր ոլորտներում համապարփակ համագործակցության հետագա զարգացման և ամրապնդման»<sup>58</sup>: Իսկ գազաթափողվից մի քանի օր առաջ Եվրահանձնաժողովը դրական եզրակացությամբ դիմել էր ԵՄ խորհրդին՝ ստանալու մանդատ՝ Հայաստանի հետ նոր համաձայնագրի շուրջ բանակցություններ սկսելու համար<sup>59</sup>: Ընդ որում, ինչպես նշել է Հայաստանում ԵՄ դեսպան Տրայան Հրիսթեան, մանդատի ստացումից հետո բանակցությունները շատ արագ առաջընթաց կգրանցեն, քանի որ հենվելու են արդեն իսկ բանակցված ԱՀ-ի վրա<sup>60</sup>:

Պետք է նշել, որ ԵՄ-ն Հարավային Կովկասի հանդեպ ի սկզբանե որդեգրել էր տարածաշրջանային մոտեցում՝ փորձելով բոլոր երեք պետությունների հետ կառուցել հավասարահեռ հարաբերություններ և մի պե-

<sup>56</sup> Jos Boonstra et al., “The Eastern Partnership after Vilnius: stay the course and engage the people,” FRIDE Policy Brief, no. 169 (December 2013), accessed June 9, 2015, [http://fride.org/download/PB\\_169\\_The\\_EaP\\_after\\_Vilnius.pdf](http://fride.org/download/PB_169_The_EaP_after_Vilnius.pdf)

<sup>57</sup> Jos Boonstra and Laure Delcour, “A broken region: evaluating EU policies in the South Caucasus,” FRIDE Policy Brief, no. 193 (January 2015), accessed May 17, 2015, [http://fride.org/download/PB193\\_Evaluating\\_EU\\_policies\\_in\\_the\\_South\\_Caucasus.pdf](http://fride.org/download/PB193_Evaluating_EU_policies_in_the_South_Caucasus.pdf)

<sup>58</sup> European Council; Council of the European Union, “Joint Declaration of the Eastern Partnership Summit (Riga, 21–22 May 2015),” accessed May 23, 2015, [http://www.consilium.europa.eu/en/meetings/international-summit/2015/05/riga-declaration-220515-final\\_pdf/](http://www.consilium.europa.eu/en/meetings/international-summit/2015/05/riga-declaration-220515-final_pdf/)

<sup>59</sup> “EU Moves to Start Talks on New Armenia Deal,” Asbarez, May 19, 2015, accessed May 25, 2015, <http://asbarez.com/136202/eu-moves-to-start-talks-on-new-armenia-deal/>

<sup>60</sup> Հրայր Թամրազյան, Տրայան Հրիսթեան, Մենք ունենք ընդհանուր հասկացողություն, թե ինչ ուղղությամբ ենք առաջ շարժվելու, Ազատություն ռադիոկայան, մարտ 30, 2015 թ., մուտք մայիսի 12, 2015 թ., <http://www.azatutyun.am/content/article/26927592.html>

տության առաջընթացը որևէ հարցում կապելով մյուսի հետ: Այս առումով կարելի է, օրինակ, հիշել ԵՀՔ Գործողությունների ծրագրի ստորագրման հետաձգումը Հայաստանի և Վրաստանի հետ՝ պայմանավորված Ադրբեյջանի և Հյուսիսային Կիպրոսի միջև ավիաչվերթի բացման արդյունքում ադրբեյջանական Գործողությունների ծրագրի նկատմամբ Կիպրոսի կիրառած վետոյով<sup>61</sup>: Եվ սա այն դեպքում, երբ շատ դժվար է խոսել Հարավային Կովկասի տարածաշրջանային ինքնության մասին. տարածաշրջանի ճանաչված երեք պետություններն էապես տարբեր պատմական փորձառություններ ունեն, տարբեր կերպ են ընկալում Եվրոպան և ԱԳ-ից ունեն տարբեր ակնկալիքներ: Այս առումով ԵՀՔ վերանայման գործընթացը կարևոր հետևանքներ կարող է ունենալ: Հանձնաժողովի այս թեմայով հրապարակած փաստաթղթում կարևոր սկզբունքներից մեկն է հռչակվում տարբերակումը, համաձայն որի՝ ԵՄ-ն արևելյան յուրաքանչյուր գործընկերոջ հանդեպ ցուցաբերելու է անհատական մոտեցում՝ հաշվի առնելով վերջինիս արտաքին ու ներքին պայմանները և ցուցաբերած հավակնությունների չափը<sup>62</sup>:

Տարբերակման սկզբունքին գումարելով նաև ԵՀՔ նախորդ՝ 2011 թ-ի վերանայման ժամանակ հայտարարված «ավելին ավելի դիմաց» սկզբունքը, համաձայն որի՝ երկրները, որոնք կկատարեն առավել լայն ժողովրդավարական բարեփոխումներ, կստանան ավելի շատ առավելություններ և ֆինանսական օգուտներ<sup>63</sup>, ակնհայտ է դառնում, որ զգալի հնարավորություններ են ստեղծվում Հայաստանի համար՝ ԵՄ-ի հետ առավելագույնս մերձենալու: Միաժամանակ, Ռիգայի գագաթաժողովին նախագահի մակարդակով Հայաստանի մասնակցությունը (ասոցացման համաձայնագիրը չստորագրած, ԱԳ անդամներ Բելառուսը և Ադրբեյջանը ներկայացել էին արտգործնախարարների մակարդակով) ցույց տվեց, որ Հայաստանը լրջորեն է մտադրված հարաբերությունների նոր որակ կառուցելու հարցում, իսկ ԵՄ-ի կողմից արված առաջարկները և սկսված գործընթացը ցույց են տալիս, որ Միությունը հենց Հայաստանի օրինակով ցուցադրում է իր կարողությունն արևելյան գործընկերների հետ հարաբերություններում

<sup>61</sup> Laure Delcour and Hubert Duhot, “Bringing South Caucasus Closer to Europe: Achievements and Challenges in ENP Implementation”, Natolin Research Papers 3 (April 2011): 11.

<sup>62</sup> Joint consultation paper, JOIN(2015) 6 final, “Towards a new European Neighbourhood Policy,” European Commission And High Representative of the European Union for Foreign Affairs and Security Policy, March 4, 2015, 7, accessed May 23, 2015, <http://ec.europa.eu/enlargement/ neighbourhood/consultation/consultation.pdf>

<sup>63</sup> Joint Communication to the European Parliament, the Council, the European Economic and Social Committee and the Committee of the Regions, COM(2011) 303, “A new response to a changing Neighbourhood,” European Commission and the High Representative of the Union for Foreign Affairs and Security Policy, May 25, 2011, accessed June 5, 2015, [http://eeas.europa.eu/enp/pdf/pdf/com\\_11\\_303\\_en.pdf](http://eeas.europa.eu/enp/pdf/pdf/com_11_303_en.pdf)

լինել ավելի ճկուն:

Բացի նրանից, որ ԵՄ դերը մեծ է Հայաստանում իրականացվող բարեփոխումների և երկրի արդիականացման համատեքստում, եվրոպական չափումը նաև մեր արտաքին քաղաքականության կարևոր ուղղություններից է, ինչին էլ նվիրված է հաջորդ գլուխը:

### **ԵՄ դերը ՀՀ բազմավեկտոր արտաքին քաղաքականության մեջ**

Անկախությունից ի վեր Հայաստանի Հանրապետությունը վարել է բազմավեկտոր արտաքին քաղաքականություն՝ հարաբերությունները զարգացնելով տարածաշրջանում ներգրավված հիմնական բոլոր խաղացողների հետ: Հայաստանի ռազմավարությունը այդ խաղացողների շահերի համադրման, այլ ոչ թե տարբերությունների և հակասությունների շահագործման մեջ է. մի քաղաքականություն, որը կիրառվում է հետխորհրդային որոշ պետությունների կողմից:

Մի կողմից՝ Հայաստանը ռազմավարական դաշինք է հաստատել Ռուսաստանի հետ, անդամակցում է ՀԱՊԿ-ին ու Եվրասիական միությանը, և լավ հարաբերություններ է պահպանում Իրանի հետ: Մյուս կողմից՝ երկիրը ամրապնդում է հարաբերությունները Արևմուտքի, հատկապես ԵՄ-ի, ինչպես նաև ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի հետ: Նմանատիպ քաղաքականությունը հնարավորություն է տալիս «օգուտներ քաղելու» բոլոր կողմերից: Ինչպես հայ հետազոտող Ս. Մինասյանն է նշում, ղարաբաղյան պատերազմի ընթացքում «...Երևանը ստանում էր զենք և ռազմական տեխնիկա ռուսներից, տնտեսության զարգացման համար դրամական միջոցներ՝ ամերիկացիներից, պարեն և հումանիտար օգնություն՝ եվրոպացիներից...., իսկ վառելիք բանակի համար՝ Իրանից»<sup>64</sup>: Նաև նշենք, որ ԱՄՆ-ն աշխարհի միակ պետությունն է, չհաշված Հայաստանը, որը ֆինանսական օժանդակություն է ցուցաբերում Լեռնային Ղարաբաղին, մեկ շնչի հաշվով Հայաստանը ամերիկյան օգնության ամենամեծ ստացողն է Իսրայելից հետո<sup>65</sup>, իսկ ԵՄ հարևանության քաղաքականության շրջանակներում եվրոպական ֆինանսական աջակցությունը Հայաստանին մեկ շնչի հաշվով Մոլդովայից հետո ամենամեծն է<sup>66</sup>:

<sup>64</sup> Сергей Минасян, “Внешняя политика Армении: двадцать лет сидения на нескольких стульях”, *Мировая экономика и международные отношения*, № 1 (2013): 86.

<sup>65</sup> Նույն տեղում, էջ 89:

<sup>66</sup> Հրայր Թամրազյան, Տրայան Հրիսթեա. «Մենք ունենք ընդհանուր հասկացողություն, թե ինչ ուղղությամբ ենք առաջ շարժվելու», մարտ 30, 2015, մուտք՝ մայիսի 12, 2015 թ., <http://www.azatutyun.am/content/article/26927592.html>

Նման բալանսի պահպանումը և տարբեր, երբեմն թվացյալ հակադիր ուղղություններով հարաբերությունների զարգացումը պայմանավորված են Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքով, պատմական փորձառությունով և թուրք – ադրբեջանական հակահայկական դաշինքի ստեղծած վտանգը չեզոքացնելու անհրաժեշտությամբ:

Ավելի քան քսան տարի Հայաստանը բլոկադայի ենթարկած Թուրքիայի և Ադրբեջանի քաղաքականությունը ուղղված է եղել՝ մեկուսացնելու երկիրը տարածաշրջանային կարևոր գործընթացներից և նախագծերից, ստեղծելու նրան շրջանցող տրանսպորտային և էներգետիկ ենթակառուցվածքներ: Միաժամանակ, վերջին տասնամյակի ընթացքում օգտագործելով նավթադուլարների մեծ հոսքը՝ Ադրբեջանը տարածաշրջանում սպառազինությունների մրցավազք է հրահրել՝ իր ռազմական բյուջեն 2003 թ–ի 163 միլիոն ԱՄՆ դոլարից 2013 թ–ին հասցնելով 3,7 միլիարդի<sup>67</sup>: Այս պայմաններում Հայաստանը բոլոր հնարավորությունները պետք է օգտագործի՝ իր զարգացմանը և անվտանգությանը խոչընդոտող վերոնշյալ բացասական գործոնները չեզոքացնելու ու ռազմավարական հնարավորությունները տարածաշրջանում ընդլայնելու համար: Այդ ամենում կարևոր դերակատարություն ունի ԵՄ–ի հետ համագործակցությունը, որը լրացուցիչ ֆինանսական, ինստիտուցիոնալ, քաղաքական և դիվանագիտական հնարավորություններ է տալիս ստեղծելու էլ ավելի ամուր ու կենսունակ պետություն՝ հիմնված եվրոպական արժեքների վրա, ներգրավվելու գլոբալացման և ինտեգրման գործընթացներին: Իր հերթին, ԵՄ–ն (ինչպես նաև ԱՄՆ–ն), հանձին Հայաստանի, տեսնում է Հարավային Կովկասում կարևոր գործընկերոջ, որն իր ներդրումն ունի տարածաշրջանի կայունության և անվտանգության մեջ, և շահագրգռված է տարածաշրջանում ուժեղ Հայաստանի դերակատարությամբ՝ որպես Թուրքիայի չափազանց հավակնոտ տարածաշրջանային նկրտումներին հակակշիռ, որի՝ վերջին տարիների ընթացքում վարած քաղաքականությունը շատ հարցերում հակասում է ԵՄ շահերին:

Անհրաժեշտ է ընդգծել, որ եթե ԵՄ–15–ի համար Հարավային Կովկասն այդքան էլ զգալի նշանակություն չուներ և աշխարհագրորեն հեռու էր, ապա 2004 թ. և 2007 թ. ընդլայնումներից հետո ԵՄ–27–ը սկսեց ներգրավվել Հարավային Կովկասում: Դա պայմանավորված էր նախ՝ էներգետիկ գործոնով. Կասպյան ավազանում առկա հարուստ ածխաջրածնային ռեսուրսները կարևոր են ԵՄ–ի էներգետիկ անվտանգության ապահովման

<sup>67</sup> “Aliyev Highlights Baku’s Boosted Military; Yerevan Concerned” Radio Free Europe/Radio Liberty, June 26, 2013, accessed May 30, 2015, <http://www.rferl.org/content/azerbaijan-military-buildup-armenia-aliyev/25028461.html>

համար, իսկ Հարավային Կովկասն այս համատեքստում նշանակալի է Միության նախաձեռնած Հարավային գազային միջանցքը կյանքի կոչելու համար: Աշխարհագրական մերձությունը մի այլ գործոն է. տարածաշրջանում ցանկացած անկայունության դրսևորում իր ուղղակի ազդեցությունը կունենա Միության հարավարևելյան հատվածի և ընդհանուր Միության վրա: Ի վերջո, տարածաշրջանը կարևոր աշխարհագրական միջանցք և տրանսպորտային հանգույց է ԵՄ-ի համար: Հայաստանը մեծ կարևորություն տվեց 2000-ականների սկզբներից ԵՄ ակտիվացմանը Հարավային Կովկասում, և Միության բերած տարբեր ծրագրերը ու տեխնիկատնտեսական գործիքները դիտարկվեցին որպես հնարավորություն պետության արդիականացման և ժողովրդավարական զարգացման համար: Հատկանշական է, որ երբ 2003 թ. հայտնի դարձավ, որ Հարավային Կովկասի երկրները ընդգրկված չեն «Նոր հարևաններ. ավելի լայն Եվրոպա» նախաձեռնության նախնական տարբերակում, Հայաստանի ղեկավարությունը ամենաբարձր մակարդակում գործնական քայլերի միջոցով իր լուծման ներդրեց՝ այդ որոշման վերանայման և հարավկովկասյան երեք երկրներին ԵՀԲ-ում ներգրավվելու գործում<sup>68</sup>:

ԵՄ-ի դերը զգալի կարող է լինել նաև Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգի կարևորագույն կետը հանդիսացող Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ լուծմանը նպաստելու առումով: 2003 թ. ընդունված Եվրոպական անվտանգության ռազմավարությունը տարածաշրջանային հակամարտությունները դիտարկում է որպես Միությանը սպառնացող հինգ հիմնական վտանգներից մեկը<sup>69</sup>: Իսկ այդ ռազմավարությունում ամրագրված նպատակներին հասնելու և մարտահրավերներին պատասխաններ տալու համար ստեղծվեց ԵՀԲ-ն, որի ռազմավարական փաստաթղթում ամրագրված է. «ԵՀԲ-ն կամրապնդի կայունությունը և անվտանգությունը ու կնպաստի հակամարտությունների կարգավորման ջանքերին»<sup>70</sup>: Ինչպես հայտնի է, ԵՄ-ն բազմիցս է հայտարարել, որ կնպաստի Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանը, մասնավորապես կողմերի միջև վստահության կառուցման միջոցառումներ իրականացնելու միջոցով, իսկ 2012 թ. փետրվարի 27-ին ԵՄ Արտաքին հարաբերությունների խորհրդի Հարավային Կովկասի վերաբերյալ ըն-

<sup>68</sup> Alla Mirzoyan, *Armenia, the Regional Powers, and the West: Between History and Geopolitics* (New York: Palgrave Macmillan, 2010): 172.

<sup>69</sup> European Council, “A Secure Europe in a Better World: The European Security Strategy,” December 12, 2003, accessed May 17, 2015, <http://www.consilium.europa.eu/uedocs/cmsUpload/78367.pdf>

<sup>70</sup> Communication from the Commission, COM(2004) 373 final “European Neighbourhood Policy: Strategy Paper,” European Commission, May 12, 2004, accessed May 19, 2015, <http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:52004DC0373&from=EN>

դունած եզրակացություններում, ի հեճուկս Ադրբեջանի, առաջին անգամ նշվեց և հետագայում բազմաթիվ անգամ վերահաստատվեց ԵՄ ներկայացուցիչների՝ Լեոնային Ղարաբաղ անխոչընդոտ մուտքի անհրաժեշտությունը<sup>71</sup>: Սա իրական հիմք կարող էր ստեղծել, Աբխազիայի համանմանությամբ, ԵՄ-ի կողմից Լեոնային Ղարաբաղի նկատմամբ «ներգրավվածություն առանց ճանաչման» քաղաքականություն վարելուն: Սակայն, չհաշված հասարակական ոլորտում մի քանի ոչ այնքան մեծ ծրագրերն այս հայտարարությունները չեն բերել իրական քայլերի դաշտ, և ԵՄ դրական ազդեցությունը և «ավելացրած արժեքը» հիմնախնդրի կարգավորման մեջ առայժմ մնում են նվազագույնը<sup>72</sup>: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ ԵՀԲ այս տարի սկսված վերանայման գործընթացում մեծ տեղ է հատկացվում ազգամիջյան հակամարտությունների կարգավորման հարցին: Ինչպես նշված է վերանայման ռազմավարությունում. «ԵՄ-ն և նրա անդամ պետությունները գործընկերների հետ ավելին պետք է անեն լուծում տալու այն վտանգներին, որոնք առաջանում են հակամարտային իրավիճակներից ... և զարգացնեն ճգնաժամները միասնաբար կառավարելու կարողությունը...»<sup>73</sup>:

Մինչ այժմ Ղարաբաղյան հիմնախնդրի հանդեպ ԵՄ դիրքորոշումը հավասարակշռված է եղել, և ի տարբերություն Մերձդնեստրի՝ Աբխազիայի և Հվ. Օսիայի, որտեղ Միությունը գրեթե միանշանակ աջակցում է Մոլդովային և Վրաստանին, Լեոնային Ղարաբաղի դեպքում այն աջակցում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին՝ Մադրիդյան սկզբունքների հիման վրա խաղաղ հանգուցալուծմանը հասնելու համար: Այս «տարբերակված» մոտեցումը մշտապես դժգոհության առիթ է Ադրբեջանի համար, ով ձգտում է, Միության էներգետիկ անվտանգության ապահովման հարցում ունեցած նշանակությունը շահարկելով, հասնել իր համար ավելի բարենպաստ մոտեցման, սակայն անարդյունք: Հայաստանի Եվրասիական միությանն անդամակցության որոշումից հետո մտահոգություններ էին հնչում, թե իբր Լեոնային Ղարաբաղի հիմնախնդրում ԵՄ-ն կորդեգրի ավելի ադրբեջանամետ վարքագիծ: Անցած ժամանակաշրջանը ցույց

<sup>71</sup> Council of the European Union, “Council conclusions on the South Caucasus,” February 27, 2012, accessed May 18, 2015, [http://www.consilium.europa.eu/uedocs/cms\\_data/docs/pressdata/EN/foraff/128197.pdf](http://www.consilium.europa.eu/uedocs/cms_data/docs/pressdata/EN/foraff/128197.pdf)

<sup>72</sup> Ավելի մանրամասն տե՛ս Վահան Հունանյան, Հակամարտությունների կարգավորման ԵՄ մոդելի անարդյունավետությունը Ղարաբաղյան հիմնախնդրի դեպքում, 21-րդ դար, թիվ 4 (2013): 154—175 [http://www.noravank.am/upload/pdf/8.Vahan\\_Hunanyan\\_21\\_DAR\\_04\\_2013.pdf](http://www.noravank.am/upload/pdf/8.Vahan_Hunanyan_21_DAR_04_2013.pdf)

<sup>73</sup> Joint consultation paper, JOIN(2015) 6 final, “Towards a new European Neighbourhood Policy,” European Commission And High Representative of the European Union for Foreign Affairs and Security Policy, March 4, 2015, 7, accessed May 23, 2015, <http://ec.europa.eu/enlargement/neighbourhood/consultation/consultation.pdf>



տվեց, որ նման զարգացումներ տեղի չունեցան, իսկ Ռիգայի գագաթաժողովի հոչակագրում ԵՄ-ն ևս մեկ անգամ վերահաստատեց իր լիակատար աջակցությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդական առաքելությանը<sup>74</sup>: Իսկ գագաթաժողովի ընթացքում Ադրբեջանի հրաժարումը ստորագրելու հոչակագիրը՝ կապված նրանում Լեռնային Ղարաբաղի մասով առկա կետերի հետ, և դրա պատճառով գագաթաժողովի աշխատանքներում առաջացած թնջուկը ցույց տվեց, որ Հայաստանը կարողացավ ճիշտ կերպով օգտագործել այս հարթակը և, ի հակառակ պաշտոնական Բաքվի փորձերին՝ մեկուսացնելու Հայաստանը, իրականում մեկուսացավ Ադրբեջանը<sup>75</sup>: Իլիամ Ալիևի Ռիգա չմեկնելը և այդ փաստը օգտագործելու փորձը՝ Ռուսաստանին հաճոյանալու համար, հազիվ թե որևէ արդյունքներ տա: Այս ամենի համատեքստում անհրաժեշտ է ամրագրել, որ Հայաստանը շատ ավելի մոտ է, ինտեգրման շատ ավելի բարձր աստիճան ունի Եվրամիության հետ, քան Ադրբեջանը, և շատ ավելի սերտ հարաբերություններ ունի Ռուսաստանի հետ, քան Ադրբեջանը:

Ի վերջո, ԵՄ-ի հետ սերտ հարաբերություններ հաստատած Հայաստանը էլ ավելի մեծ արժեք և դերակատարություն կունենա իր ռազմավարական դաշնակից Ռուսաստանի համար և իր հերթին, խոր փոխգործակցություն հաստատելով Ռուսաստանի առավել մերձավոր դաշնակից Հայաստանի հետ, ԵՄ-ն ևս մեկ անգամ ցույց կտա, որ ԱլԳ-ն ուղղված չէ Ռուսաստանի դեմ: Թե ինչպես կարող է երկրի կարևորությունը տվյալ դաշինքի, աշխարհաքաղաքական ուղղության նկատմամբ պայմանավորված լինել մի այլ աշխարհաքաղաքական ձևաչափում նրա ունեցած քաշով, հիանալիորեն արտացոլվում է Լեհաստանի օրինակով: Ժամանակակից Լեհաստանի արտաքին քաղաքականության ռազմավարության գաղափարախոսներից մեկը՝ Յուլիուշ Միեռոշևսկին, առաջարկել էր այն թեզը, որ Եվրոպայի և ԱՄՆ-ի հետ հարաբերություններում Լեհաստանի քաշը և հեղինակությունը կախված է իրենից արևելք ընկած հետխորհրդային պետությունների հետ ստեղծած հարաբերություններով և այնտեղ ունեցած ազդեցությամբ<sup>76</sup>: Իրապես, Լեհաստանը 90-ականների վերջից, երբ դեռ ԵՄ անդամ չէր, օգտագործելով Արևելյան Եվրոպայի երկրների հետ պատմամշակութային

<sup>74</sup> European Council; Council of the European Union, “Joint Declaration of the Eastern Partnership Summit (Riga, 21–22 May 2015),” accessed May 23, 2015, [http://www.consilium.europa.eu/en/meetings/international-summit/2015/05/riga-declaration-220515-final\\_pdf/](http://www.consilium.europa.eu/en/meetings/international-summit/2015/05/riga-declaration-220515-final_pdf/)

<sup>75</sup> Հրայր Թամրազյան, Նալբանդյան. «Այն, ինչ որ սպասվում էր, մենք այսօր ունենք», Ազատություն ռադիոկայան, մայիսի 22, 2015 թ., մուտք՝ մայիսի 29, 2015 թ., <http://www.azatutyun.am/content/article/27031103.html>

<sup>76</sup> Malgorzata Klatt, “Poland and its Eastern Neighbours: Foreign Policy Principles” *Journal of Contemporary European Research* 7, no. 1 (2011): 5, accessed June 2, 2015, <http://www.jcer.net/ojs/index.php/jcer/article/view/242/233>

և քաղաքական լայն կապերի առկայությունը, մեծ ներդրում է ունեցել Միության արևելյան քաղաքականության ձևակերպման գործում և ԵՄ ներսում Արևելյան Եվրոպայի շահերի առաջնորդման հարցում: Արդյունքում այսօր երկիրը, չնայած միջին կարգի տերություն լինելուն, դարձել է Եվրամիությունում արևելյան ուղղության հետ կապված հարցերի «մասնագետը», ում կարծիքի հետ հաշվի են նստում: Լեհաստանի այդ դերակատարման արտացոլումը եղավ Շվեդիայի հետ միասին ԱԳ ծրագրի ստեղծումը, ինչպես նաև բոլորովին վերջերս երկրի վարչապետ Դոնալդ Տուսկի ընտրվելը Եվրոպական խորհրդի նախագահ: Նմանապես, Հայաստանի կարևորությունը և քաշը թե՛ Ռուսաստանի հետ հարաբերություններում, թե՛ Եվրասիական միությունում զգալիորեն կավելանան՝ կախված ԵՄ-ի և ԱՄՆ-ի հետ հարաբերությունների մակարդակից, ու հակառակը: Եվ այդ պարագայում Հայաստանը կապող օղակ կարող է դառնալ Եվրոպական և Եվրասիական միությունների միջև, ինչը և կքննարկվի հաջորդ գլխում:

### **Հայաստանը որպես հարթակ ԵՄ և Եվրասիական միության համագործակցության համար**

1990-ականների ընթացքում Արևմուտք – Ռուսաստան հարաբերությունների մակարդակը և տարածաշրջանային իրողություններն առավել լայն հնարավորություններ էին ընձեռնում Հայաստանին՝ իր բազմավեկտոր արտաքին քաղաքականությունն իրականացնելու համար: Վերջին շրջանի աշխարհաքաղաքական վերադասավորումները համեմատաբար ավելի քիչ դաշտ են թողնում Հայաստանին մանևրելու համար, և Արևմուտք – Ռուսաստան հակադրության պայմաններում երկիրը հմուտ և զգույշ քաղաքականություն պիտի վարի՝ հակասությունների բեկման կետում չհայտնվելու համար: Միաժամանակ, ցանկացած մարտահրավեր իր մեջ հնարավորություն է պարունակում, և այս պարագայում Հայաստանը լավ հնարավորություն ունի կամրջի կամ ընդհանուր հարթակի դեր խաղալու Արևելքի և Արևմուտքի միջև:

Չնայած ուկրաինական ճգնաժամի արդյունքում ԵՄ-ն և Ռուսաստանն ապրում են իրենց հարաբերությունների թերևս ամենավատ ժամանակաշրջանը՝ Սառը պատերազմից ի վեր, կարծում ենք, որ զարգացումները տանելու են լիցքաթափման, այլ ոչ թե հետագա սրացման: Ժամանակակից գլոբալացվող աշխարհում Արևմուտքը և Ռուսաստանն ունեն բավականին բարձր փոխկախվածության աստիճան և ընդհանուր շահեր, որ հիմք են ստեղծում հարաբերությունների հետագա բարելավման համար: Այսպես, 2015 թ. հունվարի 19-ին ԵՄ արտաքին հարաբերությունների և անվտան-

գույթան քաղաքականության հարցերով Բարձր ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոզերինի հրապարակած Ռուսաստանի հետ հարաբերությունների մասին փաստաթղթում նշվում են մի շարք տարածաշրջանային և միջազգային հիմնախնդիրներ, որտեղ անհրաժեշտ են Ռուսաստանի մասնակցությունը և համագործակցությունը, ինչպես, օրինակ, Սիրիայում և Իրաքում Իսլամական պետության դեմ պայքարը, պաղեստինա-իսրայելական հիմնախնդրի կարգավորումը, Իրանի միջուկային խնդրի շուրջ բանակցությունները և այլն<sup>77</sup>: Այստեղ հետաքրքիր է նշել, որ աշխարհի լավագույն ռազմավարագետներից մեկը՝ Ջեյմս Բեյզլինսկին, ով ամենևին հայտնի չէ իր պրոռուսական մոտեցումներով, 2012 թ. հրատարակած իր «Ռազմավարական տեսլական» գրքում Արևմուտքի հիմնական մրցակից է դիտարկում Չինաստանը և Ռուսաստանի դերը հիմնարար համարում Արևմուտքի առաջատար դերը աշխարհում պահպանելու համար: Նա առաջարկում է ԱՄՆ-ի, Եվրոպայի և Ռուսաստանի միջև կազմավորել խոր գործընկերային, նույնիսկ դաշնակցային հարաբերություններ և այս երեքի ուժերով ստեղծել, այսպես կոչված, «ավելի մեծ ու կենսունակ Արևմուտք»<sup>78</sup>:

Այս պարագայում, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում կողմերին անհրաժեշտ է գտնել ընդհանուր համակցության սկզբունքներ՝ իրենց ընդհանուր հարևանությունը կազմող տարածաշրջանում: Այս ուղղությամբ կարևոր քայլ կարող է լինել ազատ առևտրի գոտու ստեղծումը Եվրոպական և Եվրասիական միությունների միջև: Դեռևս 2011 թ. «Իզվեստիա» թերթում հրապարակած Եվրասիական միության մասին իր հայեցակարգային հոդվածում ՌԴ նախագահ Վ. Պուտինն առաջարկել էր Եվրամիության և Եվրասիական միության միջև ստեղծել ազատ առևտրի գոտի, հետագայում էլ՝ ընդհանուր տնտեսական տարածք, որը կտարածվեր Լիսաբոնից մինչև Վլադիվոստոկ<sup>79</sup>: Իսկ այս տարվա սկզբին՝ արդեն Եվրասիական միության մեկնարկից հետո, ԵՄ-ում Ռուսաստանի դեսպան Չիժովը կոչ արեց Եվրամիությանը, չնայած պատժամիջոցների առկայությանը, բանակցություններ սկսելու Եվրասիական միության հետ՝ ընդհանուր տնտեսական տարածք ստեղծելու շուրջ<sup>80</sup>:

Եթե սկզբնապես եվրոպական քաղաքական շրջանակներում բավակա-

<sup>77</sup> Foreign Affairs Council, “Issues Paper on relations with Russia,” January 19, 2015, accessed May 15, 2015, <http://blogs.ft.com/brusselsblog/files/2015/01/Russia.pdf>

<sup>78</sup> Zbigniew Brzezinski, *Strategic Vision: America and the Crisis of Global Power* (New York: Basic Books, 2012): 132—155.

<sup>79</sup> Владимир Путин, “Новый интеграционный проект для Евразии — будущее, которое рождается сегодня,” *Известия*, 3 октября, 2011, дата обращения: 15 Мая, 2015, <http://izvestia.ru/news/502761>

<sup>80</sup> Andrew Rettman, “Russia calls for EU talks with newly born Eurasian Union,” *EUobserver*, January 2, 2015, accessed May 21, 2015, <https://euobserver.com/economic/127081>

նին մեծ թերահավատությամբ էին վերաբերվում Եվրասիական միության հետ հարաբերությունների գաղափարին, ապա այժմ այս մոտեցումն արդեն իսկ փոխվում է: Այսպես, դեռևս անցյալ տարվա վերջին ԵՄ առաջատար երկիր Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը կոչ էր արել առևտրին վերաբերող հարցերում երկխոսություն սկսելու ԵՄ և Եվրասիական միության միջև<sup>81</sup>: Իսկ արդեն նշված «Ռուսաստանի հետ հարաբերությունների մասին» փաստաթղթում այս ուղղությամբ հավանական քայլերից մեկն է համարվում ներքին ուսումնասիրության անցկացումը՝ գնահատելու Եվրասիական միության հետ համագործակցություն սկսելու հեռանկարները և հավանական հետևանքները: Նմանապես, Եվրոպական փորձագիտական շրջանակներում վերջին շրջանում ավելի ու ավելի ազդեցիկ ծայներ են հնչում՝ կոչ անելով ԵՄ–ին «ճանաչել» Եվրասիական միությունը և նրա հետ համագործակցային հարաբերություններ ստեղծել: Այսպես, Կրացկը և Լեոնարդը իրենց՝ մեծ քննարկումների տեղիք տված էսսեում առաջարկում են ԵՄ – Ռուսաստան հարաբերություններում դասեր քաղել ԱՄՆ – Չինաստան ձևավորված «համաէվոյուցիայի» շրջանակից, որի դեպքում կողմերը, ընդունելով իրենց փոխկախվածության բարձր աստիճանը, միաժամանակ թե՛ համագործակցում են, թե՛ մրցակցում միմյանց հետ՝ չզնալով, սակայն, հարաբերությունների սրացման, քանի որ դա կարող է վնասել երկուսին էլ, իսկ ԵՄ – Ռուսաստան «համաէվոյուցիայի» շրջանակում կարևոր դեր պետք է խաղա Եվրասիական միությունը<sup>82</sup>:

Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ այժմ Ռուսաստանի և ԵՄ–ի միջև գործող բազմաթիվ դիվանագիտական և քաղաքական խողովակներ փակվել կամ սառեցվել են, Հայաստանին լավ հնարավորություն է ընձեռվում միջնորդի դեր խաղալու Մոսկվայի և Բրյուսելի միջև՝ առկա խնդիրների շուրջ երկխոսություն պահպանելու և հատկապես ԵՄ ու Եվրասիական միության միջև հպման կետեր գտնելու հարցում: Թերևս հենց Հայաստանն է լավագույնս համապատասխանում այդ դերին. մի կողմից՝ երկրի առավել սերտ հարաբերությունները ԵՄ–ի հետ, ինչպես նաև ազդեցիկ հայկական սփյուռքի առկայությունը Եվրոպայում, մյուս կողմից՝ Ռուսաստանի հետ երկկողմ և բազմակողմ ձևաչափերով ամրապնդված ռազմավարական դաշինքը լուրջ նախադրյալներ են ստեղծում միջնորդական առաքելության համար: Հատկանշական է, որ ԱԳ–ն նախաձեռնած երկրներից մեկի՝ Շվեդիայի վարչապետը, Ռիգայի գազաթա-

<sup>81</sup> “Merkel offers Russia trade talks olive branch,” Financial Times, November 26, 2014, accessed May 15, 2015, <http://www.ft.com/intl/cms/s/0/93e5e066-757a-11e4-b1bf-00144feabdc0.html>

<sup>82</sup> Ivan Krastev and Mark Leonard, “The New European Disorder,” European Council on Foreign Relations, Essay (November 2014): 6, accessed May 15, 2015, [http://www.ecfr.eu/page/-/ECFR117\\_TheNewEuropeanDisorder\\_ESSAY.pdf](http://www.ecfr.eu/page/-/ECFR117_TheNewEuropeanDisorder_ESSAY.pdf)

ժողովի շրջանակներում հանդիպում ունենալով Հայաստանի նախագահի հետ, ողջունել է Հայաստանի՝ Եվրոպական և Եվրասիական միությունների միջև կամուրջ դառնալուն ուղղված քաղաքականությունը<sup>83</sup>: Եվրոպական փորձագիտական շրջանակներում Եվրասիական միության անդամ Հայաստանի՝ ԵՄ-ի հետ ապագա պայմանագրային հարաբերությունները և դրա արդյունքում ստեղծված ռեժիմը դիտարկվում են յուրօրինակ լակմուսի թուղթ՝ ստուգելու երկու ինտեգրացիոն խմբավորումների համատեղելիությունը<sup>84</sup>: Այս առումով նախագահ Սարգսյանը Եվրանեսթի երևանյան պլենար նիստի ընթացքում նշել է. «...Մենք փորձելու ենք համադրելի եզրեր գտնել և տարբեր ինտեգրացիոն գործընթացների միջև սերտ կապեր հաստատելու միջոցով նպաստել համագործակցությանը և երկխոսությանը»<sup>85</sup>:

Հաշվի առնելով վերևում ասվածը՝ միանշանակ պարզ է դառնում, որ Հայաստանն է առավել հարմար թեկնածուն երկու ինտեգրացիոն խմբավորումների մերձեցման համար:

Հայաստանի այս պոտենցիալ դերակատարությունը կարող է զգալի օգուտներ բերել պետությանը: Հանդիսանալով Եվրասիական միության ԵՄ-ին առավել «մերձեցած» պետությունը՝ Հայաստանը գայթակղիչ հեռանկար է առաջարկում Եվրասիական միության այլ պետությունների գործարարների համար իրենց բիզնեսները տեղաբաշխելու Հայաստանում, և հակառակը՝ կրկին նույն պատճառով Եվրոպական գործարարների համար Հայաստանը առավել հրապուրիչ պետք է լինի: Իրապես, ինչպես ցույց են տվել Դելկուրը և Վոլչուկը, անցած տարիների ընթացքում Հայաստանը զգալի հաջողություններ է գրանցել ԵՄ նորմերի հետ մոտարկման և Եվրոպական ստանդարտների ընդունման գործում և շարունակում է հետաքրքրված լինել այս գործընթացով<sup>86</sup>: Ավելին, Հայաստանը միակն է Եվրասիական միության անդամ պետություններից, որ ԵՄ-ի հետ ու-

<sup>83</sup> Հայաստանի Հանրապետության նախագահ, «Նախագահը Ռիգայում հանդիպում է ունեցել Շվեդիայի վարչապետ Ստեֆան Լյովենի հետ», մայիսի 22, 2015 թ., մուտք՝ մայիսի 29, 2015 թ., <http://www.president.am/hy/press-release/item/2015/05/22/President-Serzh-Sargsyan-meeting-with-Prime-Minister-of-Sweden-Latvia/>

<sup>84</sup> Տեն, օրինակ, Rilka Dragneva-Lewers and Katarzyna Wolczuk, “Trade and geopolitics: should the EU engage with the Eurasian Economic Union?,” European Policy Centre Policy Brief; (2 April 2015), accessed June 5, 2015, [http://www.epc.eu/documents/uploads/pub\\_5462\\_trade\\_and\\_geopolitics.pdf](http://www.epc.eu/documents/uploads/pub_5462_trade_and_geopolitics.pdf); Richard Youngs, “Armenia as a Showcase for the New European Neighborhood Policy?” CarnegieEurope, April 2, 2015, accessed June 5, 2015, <http://carnegieeurope.eu/strategieurope/?fa=59617>

<sup>85</sup> Հայաստանի Հանրապետության նախագահ, «Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը «Եվրանեսթ» Խորհրդարանական վեհաժողովի չորրորդ լիագումար նիստի բացմանը», մարտի 17, 2015 թ., մուտք՝ մայիսի 29, 2015 թ., <http://www.president.am/hy/press-release/item/2015/03/17/President-Serzh-Sargsyan-National-Assembly-Euronest-Parliamentary-Assembly/>

<sup>86</sup> Laure Delcour and Katarzyna Wolczuk, “The EU’s Unexpected “Ideal Neighbour”? The Perplexing Case of Armenia’s Europeanisation,” *Journal of European Integration* 37, no. 4 (2015): 491–507.

նի, այսպես կոչված, «Արտոնությունների ընդհանուր համակարգ պլյուս (GSP+)» ռեժիմը, որը հնարավորություն է տալիս 7200 անուն ապրանքատեսակ ԵՄ արտահանելու զրոյական կամ նվազեցված մաքսային տուրքերով<sup>87</sup>: Բացի այդ՝ Հայաստանը մի շարք հեղինակավոր տնտեսական միջազգային վարկանիշներում առաջատարն է Եվրասիական միությունում. օրինակ՝ Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը գնահատող Doing business 2015 վարկանիշում կամ The Heritage Foundation և The Wall Street Journal-ի «Տնտեսական ազատության ցուցիչը» վարկանիշում, ինչը ևս մեկ գայթակղիչ կետ է թե՛ Եվրասիական, թե՛ Եվրոպական բիզնեսների համար:

## Ամփոփում

ԱլԳ Ռիգայի գազաթաժողովը նոր էջ բացեց ԵՄ – Հայաստան հարաբերություններում: Ակնհայտ է, որ երկու կողմից էլ առկա է մեծ հետաքրքրվածություն՝ նոր պայմաններում հնարավորինս հավակնոտ նպատակների հասնելու: Չնայած Եվրասիական միության անդամակցությունն առայժմ օրակարգից դուրս է թողնում առևտրի հետ կապված հարցերը, առկա են փոխգործակցության հսկայական դաշտ և մեծ ներուժ:

ԱլԳ շրջանակներում ԵՄ տրամադրած աջակցությունը հիմնարար է Հայաստանի ժողովրդավարական բարեփոխումների շարունակականությունն ապահովելու առումով: Մեզ համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև վիզաների ազատականացման գործընթացը, տրանսպորտի, առանձնապես ավիացիայի ոլորտում համագործակցությունը և այլն: Ներկայումս կողմերի հարաբերություններում շատ կարևոր է նոր իրավապայմանագրային շրջանակի ձևավորումը, հնացած գործընկերության և համագործակցության համաձայնագրի փոխարինումը նոր, հավակնոտ համաձայնագրով, որը, հենվելով արդեն իսկ բանակցված ասոցացման համաձայնագրի վրա, հաշվի կառնի Հայաստանի նոր միջազգային պարտավորությունները: Բացի այդ՝ Եվրամիությունն արդեն իսկ ցույց է տալիս իր վերանայման գործընթացում հռչակած ճկունության և տարբերակման սկզբունքների կիրառումը Հայաստանի հետ հարաբերություններում, այնպես որ, մեղմ ասած, փոքր-ինչ շտապեցին նրանք, ովքեր Եվրասիական միության անդամակցության մեջ տեսան Հայաստանի Եվրոպական ուղու ավարտը:

Եվրամիությունը Հայաստանի համար կարևորագույն դեր է խաղում ար-

<sup>87</sup> Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն, «Արտոնյալ ռեժիմ (GSP+)», մուտք՝ մայիսի 30, 2015 թ., [http://eeas.europa.eu/delegations/armenia/eu\\_armenia/trade\\_relation/pref\\_reg\\_gsp/index\\_hy.htm](http://eeas.europa.eu/delegations/armenia/eu_armenia/trade_relation/pref_reg_gsp/index_hy.htm)

տաքին քաղաքականության մեջ բալանսը պահպանելու և մեր բավականին բարդ տարածաշրջանում բազմավեկտոր քաղաքականություն վարելու համար: Փոխգործակցությունը ԵՄ-ի հետ լրացուցիչ հնարավորություն է տալիս մեզ հաղթահարելու Թուրքիայի և Ադրբեջանի շրջափակումը ու Հայաստանին տարածաշրջանային զարգացումներից մեկուսացնելու քաղաքականությունը, ընդլայնելու մեր ռազմավարական հնարավորությունները: Միաժամանակ, ՀՀ արտաքին քաղաքականության կարևորագույն հիմնախնդրի՝ Լեռնային Ղարաբաղի առումով Եվրամիությունը ցուցաբերում է հավասարակշիռ մոտեցում և կարող է համապատասխան կամքի առկայության դեպքում իր նպաստը բերել կարգավորմանը՝ վստահության կառուցման միջոցառումների և Լեռնային Ղարաբաղում «ներգրավվում առանց ճանաչման» քաղաքականության օգտագործման միջոցներով:

Ուկրաինական ճգնաժամի արդյունքում Արևմուտք – Ռուսաստան հարաբերությունների կտրուկ վատացումը իր մեջ մարտահրավեր է ներառում Հայաստանի բազմավեկտոր արտաքին քաղաքականության համար: Միաժամանակ, կողմերի միջև ընդհանուր շահագրգռվածություն կա գնալու հետագա լիցքաթափման, այլ ոչ թե սրացման: Հայաստանը կարող է իր ներդրումն ունենալ այդ գործընթացում և օգտագործելով ԵՄ-ի հետ շատ լավ հարաբերությունների և ինտեգրման բարձր աստիճանի առկայությունը՝ կապող հարթակի կամ կամրջի դեր ստանձնել: Եվրոպական քաղաքական և փորձագիտական շրջանակներում վերջին շրջանում սկսում է կոնսենսուս հասունանալ, համաձայն որի՝ հենց Հայաստանը կարող է դառնալ այն սկզբնակետը, որտեղից կսկսվի Եվրոպական և Եվրասիական միությունների համատեղելիության ճանապարհը:

## AFTER RIGA: PROSPECTS OF EUROPEAN UNION– ARMENIA RELATIONS IN THE CHANGING WORLD

*VAHAN HUNANYAN*

### **Introduction**

As far back as at the Vilnius Summit of the Eastern Partnership the EU and Armenia expressed the intention— by the adopted joint declaration — to develop their relations taking into account the progress achieved between the Parties, as well as Armenia’s obligations in other integration formats. As recently as on 2 January 2015 Armenia became a member of the Eurasian Union; in May Armenia and the European Union terminated consultations on exploring all possible areas of further development of relations and in May the European Commission addressed the EU Council with the view of receiving a mandate for negotiations on a new agreement with Armenia. And, in the near future— when the Council shall approve the mandate— negotiations will commence on new legal and contractual framework due to which EU–Armenia relations will enter a new stage.

Armenia is deemed to be an integral part of the European family and civilisation with the principles of the European value system underlying its development. The continuous support provided by the European Union since the country gained independence has played a crucial role in public and private sector modernisation in Armenia, as well as in raising the level of overall sustainability of the country; and deepening of cooperation with the Union is fundamental with the view of further promotion of reforms in the areas of democracy, human rights, rule of law, competitive market economy, etc. This year the European Union has launched the review of its Concept Paper on the Neighbourhood Policy aimed at demonstrating individual approach towards each Eastern partner depending on foreign and domestic conditions of the latter, as well as on the extent to which it is willing and able to develop relations with the EU; this engages for new opportunities for Armenia. Moreover, the “more for more” principle allows Armenia to receive maximum support from the EU in return for carrying out relevant reforms.

At the same time, if the matter is considered in the light of its geopolitical perspective, the deepening of relations with the European Union is the reflection of the principle of pursuing a balanced and multi–vector foreign policy adopted by Armenia. Taking into consideration the necessity to address



the contradictions currently present in the system of Russia– EU relations, as well as Armenia’s aspiration for building up the foreign policy on the formulae of complementarity of various systems, combination of interests of great powers, the Armenia’s possibility and capacity for becoming a platform– where Eurasian and European integration programmes can find a common ground– is extensively discussed within both expert and political circles.

Taking into consideration the aforementioned this Article will be aimed at exploring future development prospects of EU–Armenia relations and the accompanying geopolitical processes. Firstly, a reference will be made to the potential development path of the EU–Armenia cooperation, to the framework of new legal and contractual relations to be established taking into account the outcomes of the Riga Summit of Eastern Partnership (hereinafter referred to as “EaP”) and the European Neighbourhood Policy (hereinafter referred to as “ENP”) review process currently in progress. Further, the geopolitical dimension of EU–Armenia relations, as well as the role of the EU in maintaining the balance of foreign policy will be considered. Finally, the capacity of the Republic of Armenia for becoming a platform for two– European and Eurasian integration groups will be discussed.

### **The Potential Scope of the EU– Armenia Cooperation**

In accordance with the National Security Strategy of the Republic of Armenia: “The development and consolidation of Armenia’s relations with the European structures, and with the European Union (EU) above all, is a priority direction for the country’s foreign policy”<sup>88</sup>. The EU, European values serve as a development model and modernisation framework for Armenia. As it was mentioned in the statement by S. Sargsyan, President of the Republic of Armenia at the EaP Vilnius Summit: “Building and strengthening Armenian nationhood upon European model has been the conscious choice of ours, and that process is hence irreversible”<sup>89</sup>.

In 2009 the EaP—deemed to be the Eastern dimension of the EU Neighbourhood Policy— was launched with the aim of promoting “political association and economic integration”<sup>90</sup> of six states of Eastern Europe and

<sup>88</sup> National Security Strategy of the Republic of Armenia, accessed: 12 May 2015, [http://www.mfa.am/u\\_files/file/doctrine/Doctrinearm.pdf](http://www.mfa.am/u_files/file/doctrine/Doctrinearm.pdf)

<sup>89</sup> President of the Republic of Armenia, “Statement by Serzh Sargsyan, President of the Republic of Armenia at the Third Eastern Partnership Summit”, 29 November 2013, accessed: 11 May 2015, <http://www.president.am/hy/statements-and-messages/item/2013/11/29/President-Serzh-Sargsyan-at-the-third-Eastern-Partnership-summit-speech/>

<sup>90</sup> European Council; Council of the European Union, “Eastern Partnership,” accessed: 2 June 2015, <http://www.consilium.europa.eu/en/policies/eastern-partnership/>

Ասոցացման համաձայնագիրը ստորագրած երեք երկրները՝ Ուկրաինան, Վրաստանը և Մոլդովան, ցանկանում էին ամրագրել ԵՄ–ին իրենց անդամակցության հեռանկարը և հնարավորությունը: Սակայն այդ դրույթը բացակայում էր ինչպես գագաթաժողովի եզրափակիչ հայտարարությունից, այնպես էլ հնչած հայտարարություններից: Գագաթաժողովի ամփոփիչ հոչակագրում Մոլդովայի, Ուկրաինայի և Վրաստանի հետ ասոցացման համաձայնագրի ստորագրումը և նախնական կիրառումը որակվեցին որպես կարևոր քայլ գործընկերների միջև քաղաքական ասոցացման և ԵՄ–ի հետ տնտեսական ինտեգրացիայի արագացման համար: Շեշտվեց, որ ԱՀ/ԽՀԱԱՀ իրականացումը պետք է լինի ԵՄ–ի և գործընկերների գլխավոր առաջնայնությունը առաջիկա տարիներին: Բացի այդ՝ նշվեց, որ ԵՄ–ն ապահովել է և կշարունակի ԵՀՔ գործիքի միջոցով ապահովել նշանակալի աջակցություն և հատուկ ծրագրեր, այդ թվում՝ ինստիտուտների ամրապնդման ու հանրային կառավարման բարեփոխումների ոլորտում՝

խրախուսելով բոլոր երեք գործընկերների բազմակողմանի բարեփոխումներ կատարելու կարողությունը<sup>129</sup>:

Առաջընթաց չարձանագրվեց նաև վիզային ռեժիմի ազատականացման գործընթացում, որի ներքո մասնակից երկրները տարբեր փուլերում են, սակայն յուրաքանչյուրը, բացի Մոլդովայից, որն արդեն իսկ անցել է առանց վիզայի ռեժիմի, ուներ քայլ առաջ անելու ակնկալիք: Գազաթափողովի մասնակիցները փաստեցին, որ Վրաստանը և Ուկրաինան առաջընթաց են գրանցել Վիզայի ազատականացման գործողության ծրագրերի իրականացման հարցում: Ամրագրվեց, որ ակնկալում են Վրաստանի և Ուկրաինայի կողմից իրենց վիզայի ազատականացման գործողության ծրագրերի երկրորդ փուլի իրականացման ավարտն այն բանից հետո, երբ պահանջվող բարեփոխումների իրականացման միջոցով բոլոր նշաձողերը կհաղթահարվեն<sup>130</sup>:

Գազաթափողովն արձանագրեց, որ Արևելյան գործընկերությունը շարունակելու է իր գոյությունը՝ որպես միասնական ծրագիր, այդ թվում՝ ներառող բազմակողմանի հարաբերությունները, սակայն առավել մեծ ուշադրություն է հատկացվելու մասնակից երկրների հանդեպ մոտեցումների դիֆերենցմանը:

Ինչ վերաբերում է ՀՀ – ԵՄ հարաբերություններին, ամրագրվեց բոլոր հնարավոր ուղղություններով համագործակցությունը շարունակելու մտադրությունը: Այդ թվում՝ ամրագրվեց, որ ավարտվել են խորհրդակցությունները, և մանդատի տրամադրումից հետո կմեկնարկեն երկկողմ իրավական նոր հիմք հանդիսացող փաստաթղթի շուրջ բանակցությունները:

Սակայն կան մի շարք հարցեր, որոնք խնդրահարույց են և առավել խորքային դիտարկման կարիք են զգում:

Առաջինը դիֆերենցման մոտեցման ոչ լիարժեք կիրառումն է: Անցացման համաձայնագրի ստորագրել – չստորագրելը չի կարող երկրների խմբավորման միակ գործոն լինել, ինչի միտումները նկատվում էին մի շարք հայտարարություններում: Օրինակ՝ Բոլոյսելում Ուկրաինայի դեսպան Կոնստանտին Ելիսենը հայտարարել է, որ դիֆերենցման քաղաքականությունը կարելի է ապահովել՝ տարանջատելով Ուկրաինան, Վրաստանը և Մոլդովան Հայաստանից, Ադրբեյջանից և Բելառուսից: Նա նշել է, որ Ռիգայում դա իրականացնելու փորձ արվել է, և նույնիսկ եռակողմ հայտարարություն է պատրաստվել Ուկրաինայի, Վրաստանի և Մոլդովայի վերաբերյալ<sup>131</sup>:

<sup>129</sup> Joint Declaration of the Eastern Partnership Summit (Riga, 21–22 May 2015), pp. 4–5.

<sup>130</sup> Joint Declaration of the Eastern Partnership Summit (Riga, 21–22 May 2015), p. 9.

<sup>131</sup> Украина предложила отделить Азербайджан, Белоруссию и Армению от “Восточного партнерства”, ТАСС, 29.05.2015, <http://tass.ru/mezhdunarodnaya-panorama/2005209>

Հայաստանը 2013 թ. հրաժարվել է ստորագրել ասոցացման համաձայնագիրը, սակայն այդ պահի դրությամբ իսկ բավարարում էր ԵՄ-ի կողմից առաջադրած բոլոր պահանջներին և ԵՄ-ի գնահատականով պատրաստ էր համաձայնագրի նախաստորագրմանը: Այդ մասին հայտարարությունն արվել է 2013 թ. հուլիսի 25-ին<sup>132</sup>: Մինչդեռ մյուս երկու երկրներին՝ Բելառուսին և Ադրբեջանին, ելնելով այդ երկրներում ժողովրդավարության ու ԵՄ-ի հետ հարաբերությունների ցածր մակարդակից, չի էլ առաջարկվել ստորագրել ասոցացման համաձայնագիրը:

Բացի այդ՝ Հայաստանը դեռևս Վիլնյուսի գազաթափողովի ժամանակ հայտարարել է ԵՄ-ի հետ բազմակողմանի հարաբերությունները շարունակելու և բարեփոխումները խորացնելու իր մտադրության մասին<sup>133</sup>: Սա վկայում է հարաբերությունների բարձր մակարդակի մասին: Եվ շատ չափորոշիչներով Հայաստանն այսօր չի զիջում կամ նույնիսկ առաջ է Վրաստանից, Մոլդովայից ու Ուկրաինայից, ինչը ցույց է տալիս, որ դիֆերենցման սկզբունքը պետք է առավել կոռեկտ գործի և հաշվի առնի երկրների գրանցած առաջընթացը բոլոր ոլորտներում:

Այս համատեքստում կարևոր է Հայաստանի կողմից քաղաքական կամք ու մի շարք հարցերում նախաձեռնողականություն ցուցաբերելը:

Բազմիցս հայտարարվել է այն մասին, որ Հայաստանը շարունակելու է բարեփոխումները բոլոր ոլորտներում և նպատակ ունի խորացնելու մինչ այժմ ունեցած ձեռքբերումները: Հայաստանը կարող է հանդես գալ Հայաստանում բարեփոխումների և մի շարք ոլորտների հանդեպ ԵՄ մոնիթորինգի միևնույն մեխանիզմի կիրառման վերաբերյալ պահանջով, ինչ գործարկվել է ասոցացման համաձայնագիրը ստորագրած Ուկրաինայում, Վրաստանում և Մոլդովայում: Նույն մեխանիզմով իրականացված մոնիթորինգը թույլ կտա գործնականում ապացուցելու, որ Հայաստանը, չնայած ասոցացման համաձայնագիրը ստորագրած չլինելուն, չի զիջում ԱլԳ առաջատար երկրներին և չի կարող որևէ կերպ դասվել Ադրբեջանի և Բելառուսի շարքերին: Բացի այդ՝ մոնիթորինգի այս մեխանիզմի կիրառումը կխթանի բարեփոխումներն ու թույլ չի տա նահանջել արդեն իսկ հաջողություն արձանագրած ոլորտներում:

Մյուս կարևոր հարցն ընթացող գործընթացի վերաբերյալ տեղեկացվածության և դրանց հանդեպ վստահության խնդիրն է թե՛ հայ հասարակու-

(10.06.2015).

<sup>132</sup> Joint Statement by High Representative Catherine Ashton and Commissioner Štefan Füle on completion of negotiations on the future Association Agreement with Armenia, 25.07.2013, [http://www.consilium.europa.eu/uedocs/cms\\_Data/docs/pressdata/EN/foraff/138404.pdf](http://www.consilium.europa.eu/uedocs/cms_Data/docs/pressdata/EN/foraff/138404.pdf) (10.06.2015).

<sup>133</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության ու Եվրոպական միության միջև համատեղ հայտարարություն, 29.11.2013, [http://mfa.am/hy/press-releases/item/2013/11/29/eu\\_js/](http://mfa.am/hy/press-releases/item/2013/11/29/eu_js/) (10.06.2015):

թյան, թե՛ միջազգային հանրության կողմից: ՀՀ-ի և ԵՄ-ի միջև բանակցությունների մեկնարկից հետո և ողջ գործընթացում կարևոր է առավելագույն թափանցիկության ապահովումը: Բնական է, որ բանակցությունների ընթացքը չի կարող հրապարակվել, սակայն հանրության համար պետք է հստակ լինեն բանակցություններից կողմերի ունեցած ակնկալիքները, բանակցման առարկան ու այն ժամանակային սահմանները, որոնց ընթացքում ենթադրվում է ավարտին հասցնել գործընթացը: Թափանցիկությունը վստահության բարձրացման և իրական գործընթացի առկայության վերաբերյալ հանրային ընկալման ապահովման գրավականն է: Իսկ հանրության աջակցությունը բարեփոխումներին և ԵՄ-ի հետ համագործակցության խորացմանը խիստ կարևոր է:

Բանակցությունների ժամկետը ևս մեկ կարևոր հարց է, որը պետք է լինի ուշադրության կենտրոնում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ – ԵՄ ասոցացման համաձայնագրի շուրջ երկարատև բանակցությունների արդյունքում համաձայնություն էր ձեռք բերվել բոլոր հարցերի շուրջ, այժմ դրանց մեծ մասը որևէ փոփոխություն չի կրի, և բանակցությունները, տրամաբանական է, որ բավական կարճ տևեն: Արիեստական ձգձգումն ու խոչընդոտների ստեղծումը միայն կնվազեցնեն գործընթացի հանդեպ վստահությունը:

Կարևոր է նաև նախաձեռնողականության ցուցաբերումը: ՀՀ – ԵՄ համագործակցության ներքո բարեփոխումների առավել մեծ արդյունավետության ապահովման տեսակետից Հայաստանի կարևոր նախաձեռնություն էր ԵՄ խորհրդատվական խմբի ձևավորումը: Վերջինս նախորդ տարվա վերջում ավարտեց իր գործունեությունը, և որևէ հայտարարություն չարվեց դրա պատճառների կամ գործունեության շարունակման մտադրության մասին<sup>134</sup>: Սա կարևոր նախաձեռնություն է, որը պետք է շարունակի գործել, և ցանկալի է, որ քայլեր ձեռնարկվեն դրա արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Մյուս կարևոր նախաձեռնությունը կարող է լինել որոշ ոլորտներին վերաբերող իրավարար ակտերի փորձագիտական քննության մեխանիզմի ներդրումը՝ եվրոպական չափանիշներին դրանց համապատասխանության վերաբերյալ: Այդ փորձաքննությունը լրացուցիչ խթան կձառայի՝ մոտեցնելու ՀՀ օրենսդրական դաշտը եվրոպական չափանիշներին, և ցույց կտա Հայաստանի՝ բարեփոխումների խորացման մտադրությունը:

Հայաստանը, ի հաշիվ իր աշխարհագրական դիրքի, կարող է զգալի դերակատարում ունենալ նաև ԵՄ – ԵԱՏՄ հարաբերությունների զարգաց-

<sup>134</sup> Տե՛ս The EU Advisory Group finalizes its activities in Armenia, 12.11.2014, <http://www.euadvisorygroup.eu/node/531> (10.06.2015):

ման համատեքստում:

Հայաստանն ու Վրաստանը, տնտեսական տարբեր գոտիներում գտնվելով հանդերձ, կարողացան պահպանել միմյանց միջև գործող պայմանավորվածություններն ու առևտրատնտեսական հարաբերությունները կառուցում են որոշակի արտոնյալ պայմաններով<sup>135</sup>: Հայաստանի՝ ԵԱՏՄ անդամ դառնալուց, իսկ Վրաստանի՝ ասոցացման համաձայնագիրն ու «Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու» մասին համաձայնագիրը ստորագրելուց հետո հարևան երկու երկրները փաստացի հայտնվեցին տնտեսական տարբեր գոտիներում: Սակայն, հաշվի առնելով Հայաստանի մասնակի շրջափակումը Ադրբեյջանի և Թուրքիայի կողմից և Իրանի միջուկային ծրագրի պատճառով դրա հանդեպ մի շարք երկրների կողմից կիրառվող պատժամիջոցները, Հայաստան – Վրաստան սահմանը փաստացի շարունակում է մնալ արտաքին աշխարհի, այդ թվում՝ ԵԱՏՄ մյուս անդամ երկրների հետ Հայաստանը կապող միակ ուղին: Այդ համատեքստում երկու երկրների կառավարությունների միջև ձեռք բերվեցին պայմանավորվածություններ՝ միմյանց հետ մինչև այդ գործող պայմանագրերը պահպանելու և համագործակցությունը զարգացնելու վերաբերյալ<sup>136</sup>: Փաստացի, Հայաստանն ու Վրաստանն այսօր տարածաշրջանային մոդել են ծառայում ԵՄ–ի և ԵԱՏՄ–ի տնտեսական համագործակցության հնարավորությունների, բարդությունների և առկա խնդիրների ուսումնասիրության և հարթման համար: Համապատասխան քաղաքականություն վարելու դեպքում հնարավոր է այդ մոդելի կարևորությունը տարածաշրջանայինից բարձրացնել առավել բարձր մակարդակի և դրանով մեծացնել մեր դերակատարումը թե՛ ԵԱՏՄ–ում, թե՛ Արևելյան գործընկերության ծրագրում:

Հայաստանի կարևոր դերակատարումն Արևելյան գործընկերության ներքո նաև այն էր, որ պաշտոնական երևանը թեկուզ որոշակի բարդությունների միջոցով և բավական երկար ժամանակի ընթացքում կարողացավ կառուցել երկու միությունների հետ համագործակցության և բախումներից խուսափելու հաջողված օրինակ: Հայաստանը, ի տարբերություն Ուկրաինայի, բաժանարար գծեր չկառուցեց տարածաշրջանում և պատճառ չդարձավ ԵՄ–ի և ՌԴ–ի միջև նոր հակասությունների: Դառնալով ԵԱՏՄ անդամ և միաժամանակ հավատարիմ մնալով եվրոպական արժեքներին ու ԵՄ–ի հետ համագործակցությանը՝ Հայաստանը դարձավ երկու

<sup>135</sup> Նախագահ Սերժ Սարգսյանը պաշտոնական այցով Վրաստանում է, 18.06.2014, <http://www.president.am/hy/press-release/item/2014/06/18/President-Serzh-Sargsyan-official-visit-to-Georgia/> (10.06.2014):

<sup>136</sup> Հայաստանի և Վրաստանի վարչապետերն ամփոփել են երկկողմ բարձր մակարդակի բանակցությունների արդյունքները, 21.08.2014, <http://www.aravot.am/2014/08/21/490311/> (10.06.2015):

ինտեգրացիոն գործընթացներն առանց բախումների համատեղելու օրինակ՝ դրանով իսկ մեծացնելով իր դերը տարածաշրջանում:

ԵՄ-ն այժմ բարեփոխումների է ենթարկում Եվրոպական հարևանության քաղաքականությունը՝ հիմքում դնելով առավել մեծ դիֆերենցման և գործընկեր երկրների պահանջներին առավել ճկուն արձագանքելու խնդիրները<sup>137</sup>: Այս բարեփոխումների փուլը լավ հնարավորություն է Հայաստանի համար՝ պահպանելով Արևելյան գործընկերության քաղաքականության ներքո ԵՄ-ի հետ հարաբերությունները՝ քայլեր ձեռնարկելու նաև ԵՀԲ ներքո մեր դերը մեծացնելու ուղղությամբ: Հայաստանն ավանդաբար ամուր կապեր ունի միջերկրածովյան ավազանի երկրների հետ, որոնք ընդգրկված են ԵՀԲ հարավային հարևանության մեջ, միաժամանակ ԱԳ երկիր է, ուստի, օգտագործելով այս երկու տարածաշրջանների հետ առկա կապերն ու դրանց պոտենցիալը, կարող է նախաձեռնություն ցուցաբերել Հայաստանում ԵՀԲ տարածաշրջանային գրասենյակ հիմնելու վերաբերյալ: Սա մի կողմից՝ կամրապնդի Հայաստանի համագործակցությունը ԵՀԲ բոլոր երկրների հետ, մյուս կողմից՝ հնարավորություն կտա ծառայեցնելու Հայաստանի պոտենցիալը՝ ի շահ ԵՄ քաղաքականության:

Ամփոփելով՝ նշենք, որ գործընթացի ներկա և հաջորդ փուլում Հայաստանի համար կարևոր է.

- Կետևորակյան լինել ՀՀ – ԵՄ բանակցությունների ընթացքի նկատմամբ: Այստեղ կարևոր է ինչպես բանակցությունների բովանդակությունը, որը, ըստ էության, պետք է ենթադրի միայն ասոցացման համաձայնագրի այն դրույթների վերանայումը, որոնք ազդեցություն են կրում ԵԱՏՄ-ին ՀՀ անդամակցությունից և նոր հնարավորությունները, նաև բանակցությունների ժամկետները: Հայաստանը պետք է մշտապես բարձրաձայնի և ձգտի հնարավորինս արագ ավարտել բանակցությունները և կնքել նոր պայմանագիրը:
- Բանակցությունների ընթացքում և ընդհանրապես ԵՄ-ի հետ հարաբերություններում թե՛ հայաստանյան կողմը, թե՛ ԵՄ-ն պետք է առավել մեծ թափանցիկություն ցուցաբերեն հանրության հետ շփումներում: Հանրությունը պետք է տեղեկացված լինի բանակցությունների ընդհանուր ընթացքի, առարկայի և Հայաստանի համար ստեղծվող հնարավորությունների մասին: Կարևոր է, որ հանրության մեջ ամրապնդվի այն գիտակցությունը, որ նոր պայմանագրով սահմանվող

<sup>137</sup> Joint press conference by High Representative/ Vice-President Federica MOGHERINI and Commissioner Johannes HAHN on European Neighbourhood Policy Review, 04.03.2015, [http://europa.eu/rapid/press-release\\_SPEECH-15-4553\\_en.htm](http://europa.eu/rapid/press-release_SPEECH-15-4553_en.htm) (10.06.2015).

հարաբերությունները քիչ են զիջում ասոցացման համաձայնագիր ստորագրած երկրներին և շատ ավելին են, քան ԵՄ-ն կկնքի Ադրբեյջանի կամ Բելառուսի հետ՝ անկախ փաստաթղթերի անվանումներից:

- Հայաստանյան կողմը և հանրությունը պետք է խթանեն, որ ԵՄ-ի կողմից սահմանված չափանիշները բավարարելու դեպքում սահմանված պայմանավորվածությունները կյանքի կոչվեն անմիջապես, առանց ձգձգման, ինչը տեղի ունեցավ 2013 թ. ամռանը, հակառակ դեպքում՝ պատճառները բարձրաձայնվեն: Օրինակ՝ վիզայի ազատականացման հաջորդ փուլին անցնելու համար անհրաժեշտ պահանջները բավարարած լինելուց հետո մենք պետք է պահանջենք Գործողությունների ծրագրի անհապաղ տրամադրում:
- Հայաստանը պետք է նախաձեռնողականություն ցուցաբերի Վրաստանում, Մոլդովայում, Ուկրաինայում՝ բարեփոխումների ԵՄ մոնիթորինգի մեխանիզմները մեր նկատմամբ կիրառելու հարցում:
- ԵՄ-ի հետ համագործակցությունը շարունակելու և զարգացնելու վերաբերյալ հայտարարությունները պետք է ուղեկցվեն հստակ նախաձեռնություններով:
- Կարևոր է խորացնել որպես ԵԱՏՄ անդամ ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացման հեռանկարը, այդ թվում՝ երկու միությունների համագործակցության մոդելային օրինակ ծառայելով: Կարելի է անցկացնել հատուկ համաժողովներ եվրոպացի գործարարների մասնակցությամբ, որոնց ընթացքում Հայաստանը՝ որպես գործարարության համար ԵԱՏՄ երկրներից եվրոպական չափորոշիչներին առավել համապատասխանող երկիր, կներկայացնի իր մոտ գործունեություն ծավալելու միջոցով ԵԱՏՄ շուկա մուտք գործելու առավելություններն ու հնարավորությունները:
- Հարկավոր է ԱլԳ մյուս անդամ երկրների և ԵԱՏՄ անդամ երկրների հետ ունեցած ավանդական հարաբերություններն օգտագործել Հայաստանի՝ տարածաշրջանային դերի մեծացման, միջազգային առկա լարվածության թուլացմանը սեփական ներդրումն ունենալու և կապերի խորացման համար:
- Օգտվելով ԵՀԲ բարեփոխումների գործընթացից՝ ընդլայնել սեփա-

կան դերակատարումն ու հանդես գալ նախաձեռնողականությամբ, միաժամանակ քայլեր ձեռնարկել սեփական խնդիրներն ու ակնկալիքներն առավել հստակ ու լսելի դարձնելու ուղղությամբ:

Վերոնշյալ առաջարկները միտված են առավել արդյունավետ դարձնելու ՀՀ – ԵՄ համագործակցությունն այս փուլում և խթանելու դրանց զարգացումը: Տարածաշրջանում Հայաստանի ունեցած դերն ու առկա իրավիճակը մի շարք հնարավորություններ են ստեղծում, որոնց ճիշտ օգտագործումն ու ակտիվությունը քաղաքական գործընթացում Հայաստանի համար կարող են ստեղծել մի շարք հնարավորություններ՝ անկախ ԵՄ-ի հետ ունեցած պայմանագրի անվանումից:



## ARMENIA–EU: EMERGING OPPORTUNITIES

*ANNA KARAPETYAN*

Following Armenia's membership to the Eurasian Economic Union (EEU), Armenia–EU relations entered a phase of transformation. In spite of all pessimistic opinions both sides demonstrated political will to continue cooperation in a wide spectrum of areas, including economic. Now, upon completion of consultations, the areas and directions of further cooperation have been outlined, and shortly thereafter the official negotiations will be launched.

Although this decision and the situation created had some negative impact on Armenia–EU relations, they also contain a number of opportunities. The tensions in West– Russia relations and, in the meantime, the awareness of the need for cooperation, as well as the established high level of Armenia– Georgia relations create a wide range of opportunities for Armenia in terms of carrying on making efforts aimed at deepening of cooperation with the EU, as well as assuming a special role in the region.

Besides, the EU— taking into consideration the faults detected in the previous phases— has launched an ENP reform process, and the principles underlying the announced reform, per se, open up a variety of new opportunities.

The article covers the current phase of Armenia–EU relations and the Eastern Partnership programme on the whole, making a special reference to the Riga Summit held on 20–21 May 2015. It analyses the opportunities currently available for Armenia in the created new geopolitical situation, considering, inter alia, the opportunity—which Armenia is afforded as an EEU member— of paving the ways for cooperation between the EU and the EEU, making the best use of the cooperation with other EaP partners, directing, in an effective manner, the further course of reforms, etc.

A new opportunity is opened up for Armenia also within the broader scope of the current reform phase of the European Neighbourhood Policy (ENP) in the light of traditionally established relations of Armenia with the countries of the Arab world. The opportunities that can be created in consequence of this process are considered.

While addressing a number of issues certain provisions that should be much focused in the process of building relations with the EU are highlighted; furthermore, recommendations are made concerning possible initiatives for the Republic of Armenia.

At present Armenia–EU relations are in the run–up to the launch of a new

phase of negotiations and from that perspective a number of new opportunities are opened up for Armenia. Meanwhile, efforts should be made to bring the further development of the process and interpretations made thereon into the vein that will ensure that the new agreement virtually yields to none of the signatory countries to the Association Agreement— with the exception of specific provisions on economic aspects— and, in parallel, to engage with the community at both national and international level aimed at demonstrating the depth of cooperation, as well as differences in the scope of cooperation as compared to that of other Eastern Partnership countries.

With a view to explore the bilateral relations the Eastern Partnership Summit held in Riga on 20–21 May, as well as the expectations of other participant countries and the outcomes achieved thereby will be reviewed in a more comprehensive sense. The drawbacks identified in the current phase of Armenia–EU relations, the new perspective and the possibilities available for Armenia will also be considered against that background.

It is worth mentioning, that neither of the Eastern partners— and, first of all, the leading countries which had greater expectations— succeeded in achieving considerable outcomes or at least getting impulses indicating that significant steps are being taken towards the fulfillment of their goals.

Ukraine, Georgia and Moldova— the three signatory countries to the Association Agreement— intended to state the perspective and the opportunity offered by their membership to the EU. However, no such provision was contained in the Final Statement of the Summit, as well in other statements made. In the Final Declaration of the Summit the signing and provisional application of the Association Agreements with Moldova, Ukraine and Georgia was qualified as a major step in accelerating these partners' political association and economic integration with the EU. It was stressed that the implementation of the AA/DCFTAs will be a top priority of the EU and the partners concerned for the coming years. Besides, it was noted that the EU has provided and will continue to provide, notably via the European Neighbourhood Instrument, significant support and dedicated programmes, including in institution–strengthening and public administration reform, to bolster all three partners' capacity to carry forward comprehensive reform<sup>138</sup>.

It was stated that no progress was made in Visa Liberalization process as well concerning the implementation thereof the participant countries are in different phases; however each of them, with the exception of Moldova— which

---

<sup>138</sup> Joint Declaration of the Eastern Partnership Summit (Riga, 21–22 May 2015), pp. 4–5.

has already passed to a visa free regime— expected to take a step forward. The Summit participants affirmed that Georgia and Ukraine have made a progress in the implementation of their Visa Liberalization Action Plans. It was specified that they look forward to completion by Georgia and Ukraine of the implementation of the 2nd phase of their Visa Liberalization Action Plans once all benchmarks are fulfilled through the implementation of all required reforms<sup>139</sup>.

The Summit stated that the Eastern Partnership will persist as a joint programme encompassing, *inter alia*, the multilateral relations; nevertheless, much attention will be drawn to the differentiation of approaches towards the participant countries.

With respect to Armenia– EU relations, the intention to further the cooperation through all possible directions was noted. It was stated, *inter alia*, that the consultations are completed and following the issue of the mandate negotiations will be launched on a new bilateral document, which will serve as a new legal basis for cooperation.

However, there are a number of issues that are problematic and need more thorough consideration.

The first issue is that the differentiation approach is not applied in full. Signing or not signing of the Association Agreement cannot be the only factor for the countries to get united; such trends were observed in a number of statements. For instance, Konstantin Yeliseyev, Ukraine's Ambassador to Brussels stated that the policy of differentiation can be pursued by separating Ukraine, Georgia and Moldova from Armenia, Azerbaijan and Belarus. He noted that they had tried to do it in Riga and they had even agreed on a trilateral statement regarding Ukraine, Georgia and Moldova<sup>140</sup>.

In 2013 Armenia refused to sign the Association Agreement, although even at that time Armenia complied with all the requirements put forward by the EU and— according to the EU estimates—was ready for initialing the Agreement. A statement thereon was made on 25 June 2013<sup>141</sup>. Whereas the other two countries namely Belarus and Azerbaijan— owing to the low level of democracy and the EU relations recorded in those countries— were not even offered to sign the Association Agreement.

<sup>139</sup> Joint Declaration of the Eastern Partnership Summit (Riga, 21–22 May 2015), p. 9.

<sup>140</sup> Ukraine urges to separate Azerbaijan, Belarus and Armenia from Eastern Partnership, TASS, 29 May 2015. <http://tass.ru/mezhdunarodnaya-panorama/2005209> (10 June 2015)

<sup>141</sup> See the Joint Statement by High Representative Catherine Ashton and Commissioner Štefan Füle on completion of negotiations on the future Association Agreement with Armenia, 25 July 2013. [http://www.consilium.europa.eu/uedocs/cms\\_Data/docs/pressdata/EN/foraff/138404.pdf](http://www.consilium.europa.eu/uedocs/cms_Data/docs/pressdata/EN/foraff/138404.pdf) (10 June 2015)

Furthermore, back at the Vilnius Summit Armenia stated its intention to further extend the multilateral relations with the EU and to enhance the implementation of reforms<sup>142</sup>. This is an evidence of the high level of relations established. Moreover, in terms of many criteria Armenia does not yield to or is even ahead of Georgia, Moldova and Ukraine which proves that the principle of differentiation must be applied in the most appropriate way and take into consideration the progress made by the countries in all areas.

In this context it is of key importance that Armenia demonstrates a political will and initiative in a number of issues.

It has been repeatedly stated that Armenia will continue the implementation of reforms in all areas and aims to enhance and build on the achievements made so far. Armenia can make a request on applying the same EU monitoring mechanism— for the reforms implemented in Armenia, as well as in a number of areas concerned— which was brought into operation in Ukraine, Georgia and Moldova signatory to the Association Agreement. The monitoring carried out using the same mechanism will make it possible to prove, in practice, that Armenia— in spite of not signing the Association Agreement— yields to none of the EaP leading countries and in no way should fall under the same category with Azerbaijan and Belarus. Besides, the application of the said monitoring mechanism will promote the implementation of reforms and will prevent from taking steps backwards in areas where considerable success has already been achieved.

The next key issue is the level of awareness of the Armenian society, as well as the international community concerning the current processes and the confidence the latter have therein. Ensuring transparency— to the maximum extent possible— after negotiations between Armenia and the EU will be launched, as well as throughout the whole process is of utmost importance. Naturally, the process of negotiations cannot be laid open to public, however the expectations the sides have from negotiations, the subject-matter of the negotiation and the time limits— within which the process is planned to be finalized— should be made clear to the community. Transparency is the guarantee ensuring enhanced confidence and public perception of the real process in place. And public support for reforms, as well as for deeper cooperation with the EU is of critical importance.

Another major issue which should be focused is the timeframe for negotiations. Taking into consideration the fact that an agreement was

---

<sup>142</sup> See the Joint Statement between the Republic of Armenia and the European Union, 29 November 2013. [http://mfa.am/hy/press-releases/item/2013/11/29/eu\\_js/](http://mfa.am/hy/press-releases/item/2013/11/29/eu_js/) (10 June 2015)

reached about all the issues as a result of lengthy negotiations on Armenia–EU Association Agreement, most of those issues now will not undergo any changes, thus, it is much reasonable that quite a short timeframe will be required for negotiations. Non–natural delays and creation of obstacles will only reduce the level of confidence in the process.

Demonstrating initiative is also essential. The establishment of the EU Advisory Group was an important initiative in terms of ensuring greater effectiveness of the reforms implemented within the framework of the Armenia–EU cooperation. The EU Advisory Group finalized its activities at the end of the previous year and no statement was made neither about reasons for this, nor about any intention to continue its activities<sup>143</sup>. This initiative is of key significance and should continue its operation; moreover, preferably, steps should be undertaken aimed at increasing the effectiveness thereof.

Another major initiative can be the introduction of a mechanism for expert examination of arbitration acts covering certain areas for their compliance with the European standards. Such expert examination will serve as an additional stimulus for the approximation of the legislative framework of the Republic of Armenia with the European standards and will show the intention of Armenia to further extend the implementation of reforms.

Armenia— due to its geographical position— can play a significant role in the context of development of the EU–EEU relations.

Armenia and Georgia— in spite of their location in different economic zones— were able to maintain the existing arrangements between them and build up their trade and economic relations on a preferential basis<sup>144</sup>. Following Armenia’s membership to the EEU and Georgia’s becoming signatory to the Association Agreement and the Deep and Comprehensive Free Trade Agreement the two neighboring countries actually found themselves in different economic zones. Nevertheless, taking into consideration the partial blockade of Armenia by Azerbaijan and Turkey, as well as the sanctions imposed on Iran by a number of countries owing to its Nuclear program, Armenia– Georgia border still actually remains the only way connecting Armenia with the external world including other EEU member countries.

In the given context, arrangements were reached between the governments of two countries on maintaining the existing bilateral agreements and further

---

<sup>143</sup> See The EU Advisory Group finalizes its activities in Armenia, 12 November 2014. <http://www.euadvisorygroup.eu/node/531> (10 June 2015)

<sup>144</sup> President Serzh Sargsyan conducts official visit to Georgia, 18 June 2014. <http://www.president.am/hy/press-release/item/2014/06/18/President-Serzh-Sargsyan-official-visit-to-Georgia/> (10 June 2014)

developing the cooperation<sup>145</sup>. Nowadays, Armenia and Georgia, in fact, serve as a regional model making it possible to explore the opportunities, challenges and existing problems of the EU and EEU economic cooperation and to deal with them. With a relevant policy pursued it will be possible to increase the significance of that model from a regional level to a higher dimension thereby enhancing Armenia's role in the EEU, as well as within the framework of the Eastern Partnership programme.

In addition, the significant role assumed by Armenia under the Eastern Partnership was that official Yerevan— though by certain difficulties and during quite a long period of time—managed to build a successful example illustrating cooperation with two unions and avoidance of conflicts. Armenia—as opposed to Ukraine— did not draw dividing lines in the region and did not cause new contradictions between the EU and Russia. Becoming a member to the EEU and, in the meantime, remaining faithful to the European values and the cooperation with the EU, Armenia became an example of combining two integration processes without any conflicts thereby enhancing its role in the region.

At present the EU reforms the European Neighborhood Policy taking as a basis the objectives of increasing differentiation and acting more flexibly in reacting to the requirements of the partner countries<sup>146</sup>. This phase of reforms affords a good opportunity for Armenia— while maintaining relations with the EU under the EaP policy— to undertake steps aimed at enhancement of its role under the ENP as well. Armenia has traditionally maintained solid relationships with the countries of the Mediterranean basin included in the ENP Southern Neighbourhood, at the same time it is an EaP country; thus— making the best use of the current relationships established with these two regions and the potential capacity thereof— Armenia can initiate the establishment of the ENP regional office in Armenia. On the one hand, this initiative will reinforce Armenia's cooperation with all the ENP countries and, on the other hand, it will make it possible to use the potential capacity of Armenia for the benefit of EU policy.

In summary, it should be noted that in the current and follow up stages of the process the following is essential for Armenia:

---

<sup>145</sup> Prime Ministers of Armenia and Georgia summarize the outcome of bilateral high-level talks, 21 August 2014. <http://www.aravot.am/2014/08/21/490311/> (10 June 2015)

<sup>146</sup> Joint press conference by High Representative/ Vice-President Federica MOGHERINI and Commissioner Johannes HAHN on European Neighbourhood Policy Review, 04 March 2015. [http://europa.eu/rapid/press-release\\_SPEECH-15-4553\\_en.htm](http://europa.eu/rapid/press-release_SPEECH-15-4553_en.htm) (10 June 2015)

- Armenia demonstrates consistency in relation to the process of Armenia–EU negotiations. Here, great importance should be attached not only to the content of negotiations— which should essentially imply the review of only those provisions of the Association Agreement that are affected by the membership of Armenia to the EEU and cover the new opportunities— but also to the timeframes of negotiations. Armenia should always give publicity to and try to bring the negotiations to a conclusion as soon as possible and sign the new agreement;
- in the course of negotiations and in relations with the EU in general, both the Armenian side and the EU should demonstrate greater transparency in their communications with the public. The overall process, the subject matter of negotiations, as well as the emerging opportunities for Armenia should be laid open to the public. It is of utmost importance to ensure the enhanced public awareness that relations established under the new agreement yield very little to those of the signatory countries to the Association Agreement and encompass much more than the EU will sign with Azerbaijan and Belarus regardless of the names of the documents;
- the Armenian side and the society should facilitate the immediate and prompt implementation of the established arrangements— in case the standards set by the EU are met— which occurred in summer 2013; otherwise the reasons should be made publicly available. For instance, after the necessary requirements for proceeding to the next phase of Visa Liberalization are met, Armenia should request that the Actions Plans are issued straight away;
- Armenia demonstrates initiative as regards the application of the EU monitoring mechanisms—used for the reforms carried out in Georgia, Moldova and Ukraine— in Armenia;
- the statements concerning carrying on and developing cooperation with the EU should be accompanied with clearly defined initiatives;
- the enhancement of the perspective to develop relations with the EU as an EEU member—inter alia by serving as a model of cooperation of two unions— is of major importance. Special conferences can be held with the participation of the European business community, during which

Armenia— as a country best complying with the European standards for business from among other EEU members— will present the advantages and opportunities of having access to the EEU market by undertaking activities in Armenia.

- the traditionally established relations with other EaP member countries, as well as the EEU member countries should be used with a view to enhance the role of Armenia in the region, to ensure that Armenia has its own contribution to the easing of the existing international tension and to deepen its relationships;
- it should be made the best use of the ENP reform process to extend the scope of Armenia's performance and to put forward initiatives, in the meantime, undertaking measures aimed at making the issues of concern, as well as its expectations more clearly defined and better heard.

The aforementioned recommendations are targeted at making the Armenia–EU cooperation more effective at this stage and facilitating their further development. The role assumed by Armenia and the current situation in the region afford a number of opportunities the proper use thereof, as well as the active involvement in the political processes can open up quite a number of opportunities for Armenia regardless of the name of the agreement with the EU.

## **Summary**

### **Armenia–EU: Emerging Opportunities**

At present Armenia–EU relations are in the run–up to the launch of a new phase of negotiations and from that perspective a number of new opportunities are opened up for Armenia.

The article covers the current phase of Armenia–EU relations and the Eastern Partnership programme on the whole, making a special reference to the Riga Summit held on 20–21 May 2015. It analyses the opportunities currently available for Armenia in the created new geopolitical situation, considering, inter alia, the opportunity—which Armenia is afforded as an EEU member— of paving the ways for cooperation between the EU and the EEU, making the best use of the cooperation with other EaP partners, directing, in an effective manner, the further course of reforms, etc.

While addressing a number of issues certain provisions that should be



much focused in the process of building relations with the EU are highlighted; furthermore, recommendations are made concerning possible initiatives for the Republic of Armenia.

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

### ՌԻՄԱ ԽԱԼԱԹՅԱՆ

Ինտեգրացիոն միավորումների ստեղծումը՝ որպես տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներում խաղաղության հաստատման և տնտեսական զարգացման միջոց, դիտարկվում էր դեռևս անտիկ շրջանից: Հավերժ խաղաղության հաստատման գաղափարախոսությանը իրենց աշխատություններում անդրադարձել են միջնադարի ականավոր այնպիսի գործիչներ, ինչպիսիք էին Իրժի Պոդեբրադցին, դուքս Սյուվին, արքահայր Սեն Պիեռը, Ուիլյամ Պեննը և այլք: Հատկանշական է, որ այս գաղափարախոսությունը ծնվեց և զարգացավ հենց Եվրոպայում:

Դարերի ընթացքում ձևավորված խաղաղության և զարգացման գաղափարախոսությունը սկսեց կյանքի կոչվել կրկին Եվրոպայում արդեն 20-րդ դարի երկրորդ կեսին՝ այսօրվա դրությամբ դառնալով միջազգային հարաբերությունների գերակա միտում:

Ինտեգրումը բազմաբովանդակ և բազմամակարդակ գործընթաց է, որում առանձնացվում են 3 հիմնական մակարդակներ՝ տնտեսական, սոցիալ-մշակութային և քաղաքական: Անհնարին է պատկերացնել արդյունավետ ինտեգրում առանց այս 3 մակարդակներում փոխկապակցված և հավասարաչափ ինտեգրման խորացման: Սա վկայում է նաև Եվրոպական ինտեգրման փորձը, որը յուրահատուկ է և օրինակելի: Հենց ԵՄ ինտեգրման տեսական և պատմական հիմքերն են լավագույն փորձ ծառայում այլ ինտեգրացիոն գործընթացների համար: Եվ քանի որ Եվրոպական ինտեգրման ժամանակակից փուլը սկսվեց 1951 թ. ԱՊԵՀ ձևավորմամբ, այսինքն՝ տնտեսական բաղադրիչով, այն ձեռք բերեց առաջնային նշանակություն ինտեգրացիոն գործընթացներում՝ միավորման ինստիտուցիոնալ կառույցների ձևավորման և դրանց գործունեության հիմքերի ձևավորման և լեգիտիմացման տեսակետից: Խաղաղության և զարգացման հայեցակարգը, որ Եվրոպայում գոյություն ուներ դեռևս անտիկ շրջանից սկսած, իր ֆորմալ, ինստիտուցիոնալ արտահայտությունը գտավ հենց տնտեսական ինտեգրման ձևավորման և խորացման միջոցով:

Հայաստանի Հանրապետությունը անկախության հռչակման պահից նույնպես ներգրավվեց միջազգային այս գործընթացին, սակայն այն մեզ համար ունեցավ բազմաբնույթ և բազմաբովանդակ առանձնահատկություն, որ թելադրված էր ինչպես պատմական, այնպես էլ տարածաշրջանային և աշխարհաքաղաքական գործոններով:

Այս գործոններից առաջին հերթին անհրաժեշտ է քննարկել այն ելքային

դրությունը, որի պայմաններում նորանկախ Հայաստանի Հանրապետությունը պետք է կատարեր իր արտաքին քաղաքական վեկտորի ընտրությունը:

ԵՍՀՄ փլուզումից հետո գրեթե ողջ հետխորհրդային տարածքում սկիզբ առավ քաղաքական համակարգի փոխակերպման և քաղաքական արդիականացման գործընթացը, որն ուղեկցվում էր նոր ժողովրդավարական ինստիտուտների ձևավորմամբ, որն իր հերթին ենթադրում էր եվրոպականացում՝ հաջողված Արևմտյան (Եվրոպական) ժողովրդավարությունների կրկնօրինակում: Սակայն 70–ամյա խորհրդային անցյալը նշանակալից հետք էր թողել ինչպես ՀՀ քաղաքական և տնտեսական համակարգերի, այնպես էլ հասարակական կարծիքի վրա: Հաճախ եվրոպականացման գործընթացում էթնո-մշակութային տարբերությունները ներկայացվում էին որպես Հայաստանի և Եվրոպայի միջև անջրպետ: Որոշ հետազոտողներ գտնում էին, որ Հայաստանն ավելի մոտ է «իմաստուն Արևելքի» երկրներին, և որ հայը իր ազգային հոգեկերտվածքով, կացութաձևով և մտածելակերպով չի կարողանա լիովին ինտեգրվել Եվրոպային: Դրա հետ մեկտեղ քննարկվում էին Հայաստան – Ռուսաստան հարաբերությունները՝ որպես եվրաինտեգրման այլընտրանք: Այս մրցակցությունը անժխտելի իրողություն է, որը պետք է դիտարկել Հայաստանի աշխարհաքաղաքական առանձնահատկությունների համատեքստում: Ռուսաստան – Արևմուտք հակադրությունը դարձել է կարևոր գործոն հետխորհրդային երկրների ժողովրդավարական փոխակերպումների համար, և Հայաստանը անմասն չմնաց այս պայքար-մրցակցությունից: Սակայն անհրաժեշտ է նշել, որ ՀՀ-ում իրականացվող ժողովրդավարական բարեփոխումներն ընթացան հենց եվրոպականացման համատեքստում և հստակ ընդգծված եվրաինտեգրման վեկտորի ընտրությամբ:

2010–2013 թթ. ԵՄ–ն և Հայաստանը նախաձեռնեցին երկկողմ ազատ առևտրի համաձայնագրի՝ «Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտի ձևավորելու մասին» համաձայնագրի նախապատրաստական աշխատանքները, որը պետք է դառնար ՀՀ եվրաինտեգրման առաջին ձևական քայլը: Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու (ԽՀԱԱԳ) նպատակն էր Հայաստանի Հանրապետությանը տրամադրել ավելի լավ մուտքի պայմաններ դեպի ԵՄ շուկա և օժանդակել կառավարությանը հիմնական տնտեսական բարեփոխումների իրականացման գործում<sup>147</sup>: Որպես բանակցությունների վերջնարդյունք՝ 2013 թ. նոյեմբերին Վիլնյուսում Հայաստանը ԵՄ–ի հետ պետք է ստորագրեր «Խոր և համապարփակ ազատ

<sup>147</sup> Ազատ առևտրի համաձայնագիր, [http://eeas.europa.eu/delegations/armenia/eu\\_armenia/trade\\_relation/free\\_trade\\_agreement/index\\_hy.htm](http://eeas.europa.eu/delegations/armenia/eu_armenia/trade_relation/free_trade_agreement/index_hy.htm) (26, 05, 2015):

առևտրի համաձայնագիրը»: Սակայն, երկարամյա բարեփոխումներից և բանակցություններից հետո՝ 2013 թ. սեպտեմբերին, Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը Մոսկվայում Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի հետ հանդիպումից հետո հայտարարեց, որ Հայաստանի Հանրապետությունը որոշում է կայացրել միանալու Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի և Ղազախստանի Մաքսային միությանը, ինչպես նաև այդ նպատակով անհրաժեշտ քայլեր ձեռնարկել, իսկ հետագայում մասնակցել Եվրասիական տնտեսական միության ձևավորմանը: Այսինքն՝ տեղի ունեցավ արտաքին միջազգային քաղաքական վեկտորի կտրուկ փոփոխություն: Սակայն, հարկ է նշել, որ իր ելույթում նախագահ Սարգսյանը շեշտեց, որ Հայաստանը չի մերժում և չի հրաժարվում եվրոպական կառույցների հետ երկխոսությունը<sup>148</sup>:

Ստեղծված իրավիճակում ՀՀ միջազգային ինտեգրացիոն գործընթացների քննարկումը հանգում է ԵՏՄ–ի և ԵՄ–ի միջև կատարված ընտրության հիմքերի բացահայտմանը:

Մեր ուսումնասիրության նպատակն է քննարկել Եվրոպական միության և Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ինտեգրացիոն գործընթացների խաչաձևումը Հայաստանի Հանրապետությունում: Հոդվածում քննարկվում են տարածաշրջանային ինտեգրացիոն միավորումների դրական և բացասական ազդեցությունները Հայաստանի Հանրապետության ներքին և արտաքին քաղաքականության զարգացման վրա: Մասնավորապես մեր կողմից քննարկվել, գնահատվել և համեմատվել են հետևյալ գործոնները.

1. Այս տարածաշրջանային ինտեգրացիոն միավորումներին հատուկ քաղաքական և սոցիալ–մշակութային արժեհամակարգերը:

2. Ընդհանուր սահմանների բացակայությունը երկու տարածաշրջանային ինտեգրացիոն միավորումների հետ:

3. Տարածաշրջանային անվտանգության խնդիրները երկու ինտեգրացիոն ուղղությունների օրակարգերում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անվտանգության և ինտեգրմանը ընդգրկվածության նկատմամբ վերաբերմունքը երկու տարածաշրջանային ինտեգրացիոն միավորումներում:

4. Հայաստանի Հանրապետության Էներգետիկ անվտանգության ապահովման խնդիրները ինտեգրացիոն ուղու ընտրության համատեքստում:

Մեր կողմից առաջադրված նպատակին հասնելու և խնդիրները լուծելու

<sup>148</sup> ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ բանակցությունների վերաբերյալ մամլո ասուլիսի ժամանակ, <http://www.president.am/hy/interviews-and-press-conferences/item/2013/09/03/President-Serzh-Sargsyan-press-conference-working-visit-to-Russian-Federation/> (12, 05, 2015):

համար անհրաժեշտ է դիտարկել ինտեգրացիոն ուղու ընտրության վրա ազդող և ազդած գործոնները՝ քաղաքակրթական, անվտանգության և տնտեսական զարգացման համատեքստերում:

## 1. Քաղաքական և սոցիալ-մշակութային արժեհամակարգ

Ինտեգրացիոն միավորումներին անդամակցության կարևորագույն պայմանը թեկնածու երկրի համապատասխանությունն է ինտեգրման շրջանակներում ձևավորված տնտեսական, քաղաքական և սոցիալ-մշակութային միջավայրին: Միևնույն ժամանակ նաև թեկնածու պետության զարգացման համար մեծ նշանակություն ունի, թե ինչպիսի քաղաքական արժեհամակարգ է իշխում այն վերազգային կազմակերպության անդամ երկրներում, որին նա ինտեգրվում է կամ ցանկանում է ինտեգրվել: Սոցիալ-մշակութային, արժեքային պատկանելիության խնդիրը առաջնային նշանակություն է ձեռք բերում ինտեգրացիոն գործընթացներում: Քաղաքական վարչակարգի ինչպիսիությունը այս դեպքում մի շարք հարցերի է պատասխանում, եթե տնտեսական միության անդամները ժողովրդավարական երկրներ են, ապա փորձը ցույց է տալիս, որ ինտեգրման արդյունքում շահում են պետության գրեթե բոլոր քաղաքացիները, իսկ եթե տնտեսական միության անդամները ոչ ժողովրդավարական երկրներ են, ապա ինտեգրման արդյունքում ամենայն հավանականությամբ կշահեն միայն այն անհատները, ում ձեռքում այդ պահին տնտեսությունն է: Նման ինտեգրումը կարող է անդառնալի հետևանքներ ունենալ ինչպես տվյալ պետության, այնպես էլ ամբողջ տնտեսական միության ապագայի համար:

Դեռևս 1795 թ. Ի. Կանտը, խոսելով խաղաղության հաստատման և միջպետական ինտեգրացիոն միության ձևավորման մասին, առաջ էր քաշում իրավունքի հարգման պարտադիրությունը և բարիքների հավասար բաժանման սկզբունքը: Կանտի «խաղաղությունը» հիմնվում է մարդու և քաղաքացու իրավունքների հարգման և պաշտպանության, բոլոր պետությունների համար պարտադիր իրավական նորմերի մշակման և ճանաչման վրա:

Շարունակելով Մաքիավելլիի և Մոնտեսքյոյի առաջ քաշած պետությունների ներքին կառուցվածքի վերաբերյալ գաղափարները<sup>149</sup> ըստ որոնց հանրապետություններում հարստության հավասար բաժանումը հանգեց-

<sup>149</sup> Մաքիավելլին գտնում էր, որ հանրապետությունը կառավարման լավագույն ձևն է, քանի որ ցանկացածին դարձնում է պատասխանատու երկրի բախտի համար: Տե՛ս «Իշխան» աշխատությունը: Մոնտեսքյոն առանձնացնում էր կառավարման երեք հիմնական ձև՝ բռնապետություն, միապետություն, հանրապետություն: Հանրապետությունը, ըստ նրա, այն է, երբ բարձրագույն իշխանությունը կամ ամբողջ ժողովրդի, կամ դրա մի մասի ձեռքում է: Տե՛ս «Օրենքների ոգու մասին» աշխատությունը:

նում է ավելի մեղմ արտաքին քաղաքականության, Կանտոն իր՝ «Տրակտատ հավերժ խաղաղության մասին» աշխատությունում առաջ է քաշում երկրի ներքին կառուցվածքի ձևից՝ արտաքին քաղաքականության կախվածության գաղափարը: Նա գրում է. «... Պետությունը ունեցվածք (patrimonium) չէ, ինչպես, օրինակ, այն հողը, որի վրա այն գտնվում է: Պետությունը մարդկանց հանրություն է, որի տնօրինումը և կառավարումը ոչ մեկի չեն կարող պատկանել՝ բացի տվյալ ժողովրդից...»<sup>150</sup>:

Ձևավորված երկընտրանքի բացահայտման համար անհրաժեշտ է առանձնացնել և քննարկել առաջադրվող ինտեգրացիոն միավորումների կողմից առաջարկվող քաղաքական և սոցիալ-մշակութային բաղադրիչները:

**Եվրոպական միություն:** Ժամանակակից աշխարհը որպես ժողովրդավարության օրինակելի մոդել ընդունում է արևմտյանը՝ եվրոպականը: Քաղաքական համակարգի ժողովրդավարացում նշանակում է եվրոպական արժեքների ներմուծում և ներդրում: Եվրոպական միասնությունը կամ Եվրաինտեգրումը անվտանգության և մարդու իրավունքները պաշտպանող գաղափարախոսության վրա կառուցվող, խաղաղության հաստատման և տնտեսական զարգացման ապահովմանը միտված քաղաքականություն է: Թե՛ որպես գաղափարախոսություն և թե՛ որպես քաղաքականություն այն ձևավորվել է բուն եվրոպական երկրների ջանքերով: Սակայն 20-րդ դարում, պայմանավորված ժողովրդավարացման երրորդ ալիքով, այն ձեռք բերեց նոր դրսևորում՝ դառնալով նոր ժողովրդավարացող երկրների համար քաղաքական արդիականացման գործիք և միջոց: Դրան նպաստեց ժողովրդավարական գործընթացների ընդլայնումը և միջտարածաշրջանային միությունների ձևավորումը:

ՀՀ – ԵՄ փոխհարաբերությունները ձևավորվելով 90-ական թթ. սկզբին՝ իրենց իրավական արտահայտությունը գտան 1996 թ. կնքված և 1999 թ. ուժի մեջ մտած Գործընկերության և համագործակցության համաձայնագրում: Իսկ որակական նոր փուլ մտան ԵՀԲ ձևավորմամբ: Եթե ԵՄ-ի համար այս հարաբերությունները քաղաքական և տնտեսական ազդեցության տարածման հնարավորություն էին, ապա ՀՀ-ի համար դրանք ենթադրում էին ավելի խորքային՝ և՛ քաղաքական, և՛ տնտեսական, և՛ սոցիալ-մշակութային բարեփոխումներ: Երկրի քաղաքական փոխակերպման, ժողովրդավարական կառավարման ձևի ընտրության և հաստատման համատեքստում Արևմտյան նախագծում կարևորություն ստացավ Հայաստանի եվրաինտեգրման հիմնահարցը: Նոր քաղաքական ինստիտուտ-

<sup>150</sup> Տե՛ս Ի. Կանտ, К вечному миру, Трактаты о вечном мире. Предисл. Ф. В. Константинова, Вводная статья в прим. И. С. Андреевой, Сост. сб. И. С. Андреева и А. В. Гулыга. М., Соцэргиз, 1963. [http://www.marsexx.ru/lit/traktaty\\_o\\_vechnom\\_mire.html](http://www.marsexx.ru/lit/traktaty_o_vechnom_mire.html)

ների՝ սահմանադրության, պետական կառույցների, քաղաքական կուսակցությունների կազմակերպումը կատարվում է եվրոպական օրինակներով՝ ազգային փորձի համադրությամբ: Հայաստանում, ի տարբերություն որոշ հետխորհրդային երկրների, նման համադրությունը պատմականորեն հիմնավորված է: Քաղաքական վարչակարգերի և քաղաքական համակարգերի եվրոպական մոդելները, մասնավորապես խորհրդարանական ձևը կիրառվել են Հայաստանի առաջին և որոշակիորեն՝ երկրորդ հանրապետություններում:

**Եվրասիական տնտեսական միություն:** Եվրասիականությունը՝ որպես գաղափարախոսություն, ձևավորվել է 1921 թ. էմիգրացիայում գտնվող ռուս ազնվականության կողմից, որի լավագույն բնութագրերից մեկը տվել է Ն. Ս. Տրուբեցկոյը իր՝ «Եվրասիական ժամանակագրություն» գրքում: Համաձայն նրա՝ «նախկին Ռուսական կայսրությունում, որը այժմ կոչվում է ԽՍՀՄ, ազգային ենթաշերտը կարող է լինել միայն այն բոլոր ազգերի ամբողջականությունը, որոնք բնակեցնում են այդ պետությունը, և որոնք դիտարկվում են որպես հատուկ բազմաժողովուրդ ազգ, և լինելով այդպիսին՝ ունեն հատուկ նացիոնալիզմ: Այդ ազգը մենք անվանում ենք Եվրասիական, նրա տարածքը՝ Եվրասիա, նրա նացիոնալիզմը՝ Եվրասիականություն»<sup>151</sup>:

Եվրասիականության գաղափարախոսությունը իր արդի դրսևորումները ստացավ Ն. Ա. Նազարբաևի կողմից 1994 թ. մարտի 29-ին Մոսկվայի պետական համալսարանում ներկայացված ելույթում և դրան հաջորդած քննարկումներում<sup>152</sup>: 1994 թ. հունիսի 3-ին Ն. Ա. Նազարբաևը ԱՊՀ անդամ բոլոր երկրների նախագահներին ուղղեց պետությունների Եվրասիական միության ձևավորման նախագիծը: Սակայն այդ փաստաթուղթը չունեցավ դրական արձագանք<sup>153</sup>: ԽՍՀՄ փլուզումից հետո Ռուսաստանում ձևավորված ժողովրդավարացման և ազատականացման ալիքը հնարավոր չհամարեց վերադարձը Եվրասիականության գաղափարախոսությանը: Բեկումը տեղի ունեցավ 21-րդ դարի շեմին, երբ Ռուսաստանում իշխանության եկավ Վ. Պուտինը:

Եվրասիականության գաղափարի տարածման և զարգացման համար քաղաքական հիմք ծառայեց նաև այն, որ ԱՊՀ-ի երկրները ԽՍՀՄ

<sup>151</sup> С. Б. Лавров, Л. Н. Гумилев и Евразийство, Москва, 1993, [http://www.eurasianism.enu.kz/elektronnye-resursy/uchenyu-mir-o-evraziystve/385/\(30.05.2015\)](http://www.eurasianism.enu.kz/elektronnye-resursy/uchenyu-mir-o-evraziystve/385/(30.05.2015))

<sup>152</sup> Стів Виступление Нурсултана Назарбаева в МГУ им. М. В. Ломоносова, [http://yeurasia.org/nazarbaev\\_msu\\_1994/\(28.05.2015\)](http://yeurasia.org/nazarbaev_msu_1994/(28.05.2015))

<sup>153</sup> А. Дугин, Евразийская миссия Нурсултана Назарбаева, Москва, 2004, [http://evrazia.org/FTP/1-288\\_polosi.pdf](http://evrazia.org/FTP/1-288_polosi.pdf) (04.06.2015).

փլուզումից հետո ընտրեցին քաղաքական կառավարման ձևերից նախագահա-պառլամենտական կամ մաքուր նախագահական ձևերը: Հայաստանը, չնայած բավական ակտիվ եվրաինտեգրմանը, հայտնվեց նշված երկրների շարքում: Նախագահական և կիսանախագահական երկրներում ժողովրդավարացման գործընթացը դանդաղում է, կուսակցական համակարգերը բավարար չեն զարգանում, բազմակուսակցականությունը կրում է ձևական բնույթ: Ձևավորվում են «իշխանության կուսակցություններ»<sup>154</sup>: Նման զարգացումը չի նպաստում քաղաքական համակարգերի ինստիտուցիոնալ կայացմանը: Առաջանում է նոր խնդիր՝ ինչպես կուսակցությունները իշխանության գործիքից վերածել իշխանություն ձևավորող քաղաքական ինստիտուտների: Այլ երկրների փորձը ցույց է տալիս, որ նոր քաղաքական վարչակարգի և նրան ուղեկցող ինստիտուտների կայացվածությունը կապվում է ինստիտուտների լեգիտիմության և անկախության հետ, ինչն իր հերթին կախված է իշխանության՝ արդար և թափանցիկ ընտրությունների միջոցով ձևավորվելուց և քաղաքացիական ակտիվ մասնակցությունից: Սակայն այս ժողովրդավարական սկզբունքները Հայաստանում և ԵՏՄ անդամ ոչ մի երկրում առայժմ լիարժեք չեն գործում:

Բերտելսմանի ժողովրդավարացման ինդեքսի 2014 թ. սանդղակով՝ ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանը և Ռուսաստանը չափավոր ավտոկրատիայի (Moderate autocracies) երկրների շարքում են, մինչդեռ Բելառուսն ու Ղազախստանը՝ խիստ ավտոկրատիայի (Hard-line autocracies) երկրների շարքում: Այս երկրներում անցումը շարունակվում է, բայց ժողովրդավարացման գործընթացների արդյունքները դեռ ակներև չեն<sup>155</sup>: Հետաքրքրական է, որ ՀՀ Ազգային ժողովում բարձրացված այն հարցին, թե Հայաստանը չի կարող քայլել կողք կողքի ավտորիտար, ժողովրդավարությունից հեռու, մարդկանց իրավունքներն ու ազատությունները ոտնահարող ԵՏՄ անդամ պետությունների հետ, ՀՀ ԱԺ պատգամավոր, ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Արտակ Զաքարյանը պատասխանեց. «... Արժեքային համակարգն այս պահին դեռևս առաջնային համարել չի կարելի, որովհետև հետագա զարգացումները ցույց կտան, թե ինչպիսի միասնական արժեքային միջավայր հնարավոր կլինի ձևավորել, բայց որ տնտեսական շահերը զուգամիտվում են, և տնտեսական շահերը բերում են մեկ միասնական, քաղաքական մոտե-

<sup>154</sup> Վ. Մաթևոսյան, Հայաստանի քաղաքական ընտրությունը: Քաղաքական փոխակերպման պայմանները և առանձնահատկությունները, Седьмая годовичная конференция посвященная 90-летию академика С. А. Амбарцумяна, Сборник научных статей, Часть 1, Ереван, 2013 թ., ст. 198:

<sup>155</sup> Transformation Index BTI 2014, <http://www.bti-project.org/index/status-index/> (06.06.2015).



ցումների, սա ակնհայտ է»<sup>156</sup>: Սակայն անհրաժեշտ է նշել, որ ինտեգրման գործընթացներում տնտեսական, սոցիալ-մշակութային և քաղաքական բաղադրիչների անհամաչափ զարգացումը և անհամաչափ խորացումը կարող են հանգել ամբողջ գործընթացի տապալման, քանի որ տնտեսական ինտեգրման ձևավորումը չի կարող լինել զուտ ինքնանպատակ և միակողմանի, իսկ ընդհանուր քաղաքական և արժեքային համակարգերը՝ լիովին անտեսվել:

Եվրասիականության գաղափարախոս Ա. Դուգինը այն անվանում է պատմական զարգացման նոր ռադիկալ վեկտոր<sup>157</sup>: Սակայն հարց է մնում, թե ինչպիսի արժեքներ է դավանում այս նոր վեկտորը, որի անդամ պետություններում հաստատվել են ավտորիտար վարչակարգեր, փակ շուկա և օլիգարխիկ տնտեսվարություն:

## 2. Սահմաններ

Համաձայն «Բրիտանիկա» հանրագիտարանի՝ տնտեսական ինտեգրումը գործընթաց է, որի շնորհիվ լայնորեն սահմանված աշխարհագրական տարածաշրջանում գտնվող երկու կամ ավելի պետություններ նվազեցնում են մի շարք առևտրային արգելքներ՝ սահմանված տնտեսական նպատակները պաշտպանելու կամ զարգացնելու համար: Գոյություն ունի տնտեսական ինտեգրման 4 մակարդակ<sup>158</sup>.

1. Ազատ առևտրի գոտի
2. Մաքսային միություն
3. Ընդհանուր շուկա
4. Տնտեսական միություն

Ինչպես երևում է վերոնշյալ սահմանումից, տնտեսական ինտեգրման համար մեծ նշանակություն ունի ազգային պետական սահմանների վերացումը: Ազգային պետական սահմանները խոչընդոտում են տնտեսական հարաբերությունների զարգացմանը, հետևաբար դրանք նվազեցնում են նաև միջպետական առևտրի եկամուտները: Ազգային պետական սահմանների վերացումը թույլ է տալիս ստեղծել ավելի մեծ տեղական շուկա, որը կարող է դրական ազդեցություն ունենալ արտադրողականության և տնտեսական աճի համար: Սակայն այն հարցին, թե որքանով է պետության համար նպատակահարմար մաս կազմել մի տնտեսական միության, որի հետ

<sup>156</sup> Հայաստանը ԵՏՄ անդամ, տեսանյութի 00:32–00:55 վայրկյաններ, <http://www.azatutyun.am/media/video/26777256.html#relatedInfoContainer> (08.06.2015):

<sup>157</sup> А. Дугин, Евразийская миссия Нурсултана Назарбаева, Москва, 2004, [http://evrazia.org/FTP/1-288\\_polosi.pdf](http://evrazia.org/FTP/1-288_polosi.pdf) (04.06.2015).

<sup>158</sup> Encyclopaedia Britannica, Economic integration, <http://www.britannica.com/EBchecked/topic/178433/economic-integration> (25.05.2015).

ընդհանուր ուղիղ պետական սահմաններ չկան, միանշանակ պատասխան տալը դժվար կլինի:

**Եվրոպական միություն:** ՀՀ – ԵՄ փոխհարաբերությունների և ՀՀ հնարավոր ինտեգրման խնդրի քննարկումը ենթադրում է անդրադարձ հայ–եվրոպական հարաբերությունների պատմական նախադրյալներին: Այդ համատեքստում պետք է հիշել, որ աշխարհագրորեն Հայաստանը Եվրոպայի մաս չի կազմում, բայց պատմականորեն ունեցել է քաղաքական, տնտեսական և մշակութային սերտ առնչություններ, որոնց թողած ազդեցություններն այսօր կարևոր նշանակություն ունեն Հայաստանի Հանրապետության ներքին և արտաքին քաղաքականության հիմնավորման ու իրականացման համար:

Աշխարհագրորեն Եվրոպայի մաս չկազմող և ԵՄ–ի հետ ուղիղ սահման չունեցող Հայաստանը, սակայն ունի հարևաններ, որոնցից երկուսը՝ Թուրքիան և Վրաստանը, արդեն ստորագրել են ասոցացման համաձայնագիրը, իսկ Թուրքիան, 1996 թ. սկսած, ԵՄ Մաքսային միության անդամ է: Սակայն գաղտնիք չէ, որ հայ–թուրքական սահմանը արդեն 20 տարուց ավել է՝ փակ է ԼՂ հակամարտության չլուծված լինելու պատճառով: Այս առիթով նախագահ Սերժ Սարգսյանը հարցազրույցներից մեկում նշել է. «Հայաստանը շարունակում է լավ հարաբերություններ ունենալ ԵՄ–ի հետ, սակայն ազատ առևտրի գոտու մասին պայմանագիրը Եվրոպայի հետ շահավետ չէր լինի այնքան ժամանակ, քանի դեռ Հայաստանի սահմանը Թուրքիայի հետ մնում է փակ»<sup>159</sup>: Սակայն, Վրաստանը ունի ծովային ուղիղ սահման ԵՄ–ի հետ և բացի այդ՝ նաև բաց սահման Թուրքիայի հետ: Եթե Վրաստանը կարող է ՀՀ–ին միջանցք տրամադրել ԵՏՄ անդամ պետությունների հետ առևտրաշրջանառության իրականացման համար՝ անդամ չլինելով այդ կառույցին, ապա ասոցացված լինելով ԵՄ–ի հետ՝ այն կարող էր ուղիղ կամուրջ դառնալ ՀՀ – ԵՄ տնտեսական համագործակցության խորացման համար: Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ ընդհանուր սահմանների բացակայության խնդիրը ԵՄ շրջանակներում ավելի լավ լուծումներ կարող էր ունենալ, քան այն ունի ԵՏՄ շրջանակներում:

**Եվրասիական տնտեսական միություն:** Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից որևէ մեկի հետ ընդհանուր սահման չունենալու մասին տարիներ շարունակ խոսում էին ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաները: Նախկին վարչապետ Տիգրան Սարգսյանը դեռևս 2011 թ.

<sup>159</sup> Fred Hiatt, Why Armenia turned to Russia instead of the West, <http://www.washingtonpost.com/blogs/post-partisan/wp/2015/05/07/why-armenia-turned-to-russia-instead-of-the-west/> (06.06.2015).

ԱԺ-ում կառավարական ժամի շրջանակներում հայտարարել էր. «Հայաստանը մտադիր չէ անդամակցել Մաքսային միությանը: Համաշխարհային պրակտիկայում չկա նման դեպք, երբ երկիրը մասնակցում է նման միության՝ չունենալով անդամակից երկրների հետ ընդհանուր սահման»<sup>160</sup>: Սակայն, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի՝ 2013 թ. սեպտեմբերի 3-ի հայտարարությունից հետո ՀՀ պաշտոնյաների հայտարարությունները ԵՄ ասոցացման համաձայնագրի և Մաքսային միության վերաբերյալ սկսեցին իրար խիստ հակասել:

Պարզվեց, որ Հայաստանը, այնուամենայնիվ, կարող է անդամակցել ԵՏՄ-ին՝ չունենալով ընդհանուր սահման: ՀՀ էկոնոմիկայի փոխնախարար Էմիլ Տարայանը գործարարների հետ հանդիպումներից մեկի ժամանակ շեշտեց. «Վրաստանը պատրաստ է ազատ տարանցիկ միջանցք տրամադրել ԵՏՄ երկրներ հայկական ապրանքների արտահանման համար: Վրաստանի տարածքով հայկական բեռների տարանցման հարցը ներառվել է հիմնական փաստաթղթերի ցանկում, որոնք Հայաստանը ստորագրել է ԵՏՄ-ի շրջանակում, քանի որ Հայաստանը Միության երկրներից միակն է, որը չունի ուղիղ սահման մասնակից երկրներից ոչ մեկի հետ»<sup>161</sup>: Սակայն, ՀՀ ԱԺ պատգամավոր, ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի անդամ Թևան Պողոսյանը նշում է. «Մասնագետները միշտ ասում են, որ առանց ընդհանուր սահմանի շատ դժվար է տնտեսական ինտեգրումը: Այսօր մեր ապրանքները ԵՏՄ անդամ պետություններ հասցնելու համար մենք ստիպված ենք դրանք անցկացնել հարևան Վրաստանով, որը հավելյալ բյուրոկրատիա և տրանսպորտային ծախսեր է ավելացնում: «Մաքսային միություն» գաղափարը նրանով է հետաքրքիր, որ ունենում ես մի ընդհանուր արտաքին սահման, իսկ հիմա կա մի արտաքին սահման, ու կա մի հատ էլ այլ սահման: Մի քիչ անհասկանալի երևոյթ է, և աշխարհում ոնց որ առաջին անգամ է նման գաղափար փորձարկվում, որը կհաջողվի, թե չէ, դժվարանում եմ ասել»<sup>162</sup>:

Հաղորդակցվել ԵՏՄ անդամ պետությունների հետ, շրջանցելով երրորդ երկրների մաքսակետերը, հնարավոր է միայն օդային ճանապարհով, ինչը չի կարող դիտվել որպես մեկ միասնական մաքսային տարածքի մասնակիցների միջև ապրանքաշրջանառության արդյունավետ միջոց:

### 3. Տարածաշրջանային անվտանգություն և ԼՂՀ

<sup>160</sup> Տիգրան Սարգսյան, Հայաստանը մտադիր չէ անդամակցել Մաքսային միությանը, <http://www.panarmenian.net/arm/news/81950/> (06.06.2015):

<sup>161</sup> Վրաստանը Հայաստան – ԵՏՄ ազատ տարանցման միջանցք կտրամադրի, <http://www.yerkirmedia.am/wap.php?act=news&lan=hy&id=23285> (30.05.2015):

<sup>162</sup> Թևան Պողոսյան, հարցազրույց, 06.06.2015:

Իր դիրքի շնորհիվ Կովկասը մշտապես համարվել է քաղաքակրթությունների և պետությունների խաչմերուկ և մարդկության պատմության ընթացքում բոլոր գերտերությունները ձգտել են գրավել կամ իրենց ազդեցության ոլորտում պահել այս տարածաշրջանը: ԽՍՀՄ փլուզումը նոր վակուում առաջացրեց Կովկասում, որը փորձեցին լրացնել տարածաշրջանային գերտերությունները: ԽՍՀՄ փլուզումից հետո Անդրկովկասը դարձավ էթնիկական կոնֆլիկտներով լի վտանգավոր գոտի: Սկզբնական շրջանում Արևմուտքի և նախկին ԽՍՀՄ մաս կազմող երկրների միջև հարաբերությունները կարելի է անվանել «ռոմանտիկ»: Արևմուտքում ծայրահեղ լավատեսական սպասումներ ունեին նախկին ԽՍՀՄ տարածքում իրադարձությունների հետագա զարգացման վերաբերյալ: Սակայն 1990–ականների սկզբին Հարավային Կովկասում իրադարձությունները շիկանում էին: Մեկը մյուսի հետևից առաջ էին գալիս էթնիկ հողի վրա առաջացած հակամարտություններ, որոնք պահանջում էին շուտափույթ լուծում՝ ինչպես հակամարտող կողմերի, այնպես էլ տարածաշրջանով հետաքրքրված երկրների շահերից ելնելով:

**Եվրոպական միություն:** 2001 թ. սեպտեմբերի 11–ի դեպքերը դրդապատճառ դարձան, որ 2003 թ. դեկտեմբերին ԵՄ խորհրդի կողմից ընդունվի «Եվրոպայի անվտանգության ռազմավարությունը»: Այս փաստաթուղթը փորձ էր վերաիմաստավորել XXI դարում Եվրոպայի առջև ծառայող վտանգները (ահաբեկչություն, զանգվածային ոչնչացման զենքի տարածում, տարածաշրջանային բախումներ, կազմակերպված հանցագործություն և այլն) և անվտանգության ապահովմանը վերաբերող մոտեցումները: Փաստաթղթում մասնավորապես նշվում է. «Աշխարհագրությունը չի կորցնում իր նշանակությունը անգամ գլոբալացման դարաշրջանում: Եվրոպան հետաքրքրված է իր սահմանների մոտ ժողովրդավարական նորմերով կառավարվող երկրներ ունենալով: Հարևան երկրներում դաժան կոնֆլիկտների առկայությունը, զարգացող կազմակերպված հանցագործությունը, անառողջ հասարակությունը կամ բնակչության անկառավարելի աճը Եվրոպայի համար նոր խնդիրներ կարող են առաջացնել: Նոր միացած երկրների ինտեգրումը ամրապնդում է մեր անվտանգությունը, բայց և ԵՄ սահմանները մոտեցնում է վտանգավոր գոտիներին: Մեր նպատակն է նպաստել ԵՄ–ից արևմուտք և Միջերկրական ծովի սահմաններում լավ կառավարվող երկրների շրջան ստեղծելուն, որոնց հետ մենք կկարողանայինք սերտ հարաբերություններ հաստատել համագործակցության հիմքի վրա»<sup>163</sup>: Այսպիսով՝ ԵՀԲ–ն որպես գլխավոր նպատակ է ընտրում

<sup>163</sup> European Security Strategy. Brussels, 12 December 2003, <http://www.consilium.europa.eu/uedocs/cmsUpload/78367.pdf> (09.06.2015)

աջակցությունը հարևան երկրներում ժողովրդավարության ամրապնդմանը և սոցիալ-տնտեսական դաշտի զարգացմանն ուղղված բարեփոխումներին: ԵՄ-ի համար կարևոր է Հարավային Կովկասում անվտանգությունն ու կայունությունը, քանի որ ցանկացած ապակայունություն տարածաշրջանում իր ուղիղ և լուրջ ազդեցությունն է ունենում ԵՄ անվտանգության վրա: Իսկ հարևան Հարավային Կովկասում չլուծված հակամարտություններն առավել քան շատ են: Դրանցից մեկն է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Սակայն քննարկել ՀՀ-ի և ԼՂՀ-ի միջև ապրանքաշրջանառության հատուկ կարգ մտցնելը, նոր մաքսակետ ավելացնելը կամ առավել ևս ԼՂ հակամարտության կարգավորման հարցը կամ ԼՂ բնակիչների անվտանգության հարցը ԵՄ ասոցացման համաձայնագրի համատեքստում առավել, քան սխալ է: Ասոցացման համաձայնագրի ստորագրման դեպքում ԼՂՀ-ի և Հայաստանի միջև ապրանքաշրջանառության հատուկ կարգ սահմանելու հարց որևէ մեկի կողմից չի դրվել: Ավելին, ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունների շրջանակում կողմերն ըմբռնումով են մոտեցել չլուծված հակամարտության իրավիճակում Ղարաբաղի բնակչության նորմալ կենսագործունեության համար Հայաստանի հետ կապերի անհրաժեշտությանը և շրջանցել են արհեստական սահմանափակումներ դնելու թեման<sup>164</sup>:

ԵՄ-ն նաև ըմբռնումով է մոտեցել Հայաստան – Ռուսաստան հարաբերություններին: Մեկ անգամ չէ, որ ԵՄ ընդլայնման և Եվրոպական հարևանության քաղաքականության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն իր խոսքում նշել է, որ ԵՄ-ն նախապայմաններ չի դնում իր գործընկերների առջև, և ստորագրվելիք պայմանագրերը չեն վնասի Հայաստանի և նրա գործընկեր Ռուսաստանի միջև առկա սերտ հարաբերություններին, որոնք այդքան կարևոր են ՀՀ-ի պետական անվտանգության տեսանկյունից<sup>165</sup>:

**Եվրասիական տնտեսական միություն:** Կովկասի նվաճումը եղել է Ռուսական կայսրության արտաքին քաղաքականության օրակարգում մոտ երեքհարյուրամյակ, սակայն Ռուսաստանը ԽՍՀՄ փլուզումից հետո այն կորցրեց մեկ ակնթարթում: 90-ականներին Ռուսաստանը ձգտում էր վերականգնել իր դիրքերը տարածաշրջանում: Ռուսաստանը շարունակում էր դիտել նախկին ԽՍՀՄ տարածքը որպես իր հատուկ աշխարհաքաղաքական շահերի գոտի, որտեղ արտաքին միջամտությունը անհնարին էր առանց Ռուսաստանի թույլտվության: Տարածաշրջանում իր կարգավիճակը պահպանելու և ամրապնդելու համար Ռուսաստանը կարողացավ Հա-

<sup>164</sup> Հայաստանի ինտեգրացիոն քաղաքականությունը, Երևան, 2014 թ., էջ 9, <http://www.ypc.am/upload/Analytical%20Pieces%20arm.pdf> (05.06.2015)

<sup>165</sup> On the Crossroads of Integration: Choices of Armenia Heading, <http://ichd.org/?laid=1&com=module&module=static&id=909> (08.06.2015)

յաստանի ձեռքում պատրաստ պահված ասոցացման համաձայնագիրը փոխարինել ԵՏՄ անդամակցությամբ:

2013 թ. սեպտեմբերի 3-ին՝ Մոսկվայում մամլո ասուլիսի ժամանակ, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը նշեց. «20 տարի առաջ Հայաստանը Ռուսաստանի և ԱՊՀ այլ երկրների հետ գործընկերությամբ ձևավորեց իր ռազմական անվտանգության համակարգը Հավաքական անվտանգության պայմանագրի ձևաչափում: Այս տասնամյակների ընթացքում համակարգն ապացուցել է իր կենսունակությունը և արդյունավետությունը: Այժմ ՀԱՊԿ-ի մեր գործընկերները ձևավորում են տնտեսական փոխգործակցության նոր հարթակ: Ես քանիցս ասել եմ, որ գտնվելով ռազմական անվտանգության մի համակարգում՝ անհնար է և անարդյունավետ մեկուսանալ համապատասխան աշխարհատնտեսական տարածքից»<sup>166</sup>: Սակայն ասել, որ ԵՏՄ անդամ բոլոր երկրներն էին գրկաբաց սպասում Հայաստանի անդամակցությանը միությանը, միանշանակ սխալ կլիներ:

Գաղտնիք չէ, որ և՛ Ղազախստանի, և՛ Բելառուսի համար հարավկովկասյան երկրներից Ադրբեջանը շատ ավելի կարևոր գործընկեր է, քան Հայաստանը: Վերջինիս արտաքին առևտրում, այս երկու երկրների բաժինը միասին վերցրած, 1 տոկոսի էլ չի հասնում: Միևնույն ժամանակ Ղազախստանը Ադրբեջանի հետ համագործակցում է միջազգային մի շարք խոշոր նախագծերի շրջանակներում՝ ներառյալ էներգետիկայի և գյուղատնտեսության ոլորտները: Բացի այդ՝ երկու երկրներն էլ անդամակցում են «Իսլամական համաժողով» կազմակերպությանը, որտեղ, որպես կանոն, հանդես են գալիս միասնական դիրքերից: Բելառուսի համար հսկայական նշանակություն ունեն Ադրբեջանի կողմից ժամանակ առ ժամանակ տրամադրվող էժան վարկերը: 2014 թ. ապրիլի վերջին Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն բավական կոշտ կերպով բարձրաձայնեց այն սկզբունքը, որ Եվրասիական միության ձևավորման հարցում շտապել պետք չէ, և եթե ինչ-որ մեկը պատրաստ չէ «փաթեթով» ընդունելու նրա բոլոր պայմանները, համաձայնագրի ստորագրումը կարելի է հետաձգել: Դա գործնականում նշանակում էր, որ Մոսկվայի հետ նոր մաքսատուրքերի ենթակա ապրանքների ցուցակից զգալի բացառություններ ստանալու շուրջ Երևանի բանակցությունները սոսկ ժամանակի անիմաստ վատնում էին: Իսկ մայիսի վերջին, հղում անելով իր ադրբեջանցի գործընկեր Իլիամ Ալիևի նամակին, Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևը «հստակություն մտցրեց» առ այն, որ Հայաստանը ԵՏՄ կա-

<sup>166</sup> Հայաստանի և Ռուսաստանի նախագահները ամփոփել են բանակցությունների արդյունքները, <http://www.president.am/hy/press-release/item/2013/09/03/President-Serzh-Sargsyan-working-visit-to-Russian-Federation/> (28.05.2015):

րող է մտնել միմիայն միջազգայնորեն ճանաչված սահմաններով<sup>167</sup>: Նազարբանկի այս հայտարարությունը Հայաստանում մեծ աղմուկ բարձրացրեց՝ մտավախություն առաջացնելով ՀՀ-ԼՂՀ սահմանին նոր մաքսակետ սահմանելու հարցում, և ռուս քաղաքական գործիչները շտապեցին շտկել իրավիճակը. «...Իրավիճակը կմնա այնպիսին, ինչպես հիմա է: ...Եթե հայաստանա-ղարաբաղյան սահմանին այժմ չկան մաքսակետեր, չեն էլ լինի: Դա Հայաստանի ներքին խնդիրն է: Այն խնդիրը, որը կա Հայաստանի և Ադրբեջանի միջև, Ադրբեջանի պահանջների մասով, Մաքսային միությունը չի տարածվում աշխարհաքաղաքական հարցերի մասով: ... Ներսում գործող ազգային մաքսակետերը մնում են և գործում են մաքսակետերի գործունեության կարգավորման ազգային օրենքների շրջանակներում: Պետական ծառայությունը մնում է, ուստի Հայաստանի մաքսավորները և սահմանապահները ինչպես կանգնած են, այնպես էլ կմնան: Այն ռեժիմը, որը կա Ղարաբաղի հետ, որևէ կերպ կապված չէ Հայաստանի՝ Մաքսային միությանն անդամակցության հետ»<sup>168</sup>, – շեշտեց ՌԴ նախագահի խորհրդական Սերգեյ Գլազևը:

Հատկանշական է, որ Հայաստանի ԵՏՄ անդամակցությունից օրեր անց Միջազգային վարկանշային Moody's Investor Service գործակալությունը նվազեցրել է Հայաստանի առաստաղային վարկանիշը՝ Ba2-ից մինչև Ba3: Վարկանիշների կանխատեսումը «կայունից» իջել է «բացասական»<sup>169</sup>: Ըստ գործակալության հաղորդագրության՝ Հայաստանի վարկանիշը վերանայվել է հունվարի 15-ին: Վարկանիշների նվազման առանցքային գործոնների թվում նշվում է Հայաստանի արտաքին խոցելիության ավելացումը Ռուսաստանից դրամական փոխանցումների կրճատման պատճառով, ուղղակի արտասահմանյան ներդրումների համար անորոշ հեռանկարները, փոխարժեքի տատանողականության նկատմամբ բարձր զգայունությունը և արժույթային պահուստների վրա սպասվող ճնշումները, Ռուսաստանի բացասական ազդեցության խորացումը, ներդրումային թույլ ակտիվությունը և առևտրի սահմանափակումները Եվրասիական տնտեսական համագործակցության երկրների հետ, որի անդամն է Հայաստանը 2015 թ. հունվարի 2-ից:

<sup>167</sup> Ibid., էջ 7–9.

<sup>168</sup> Нелли Григорян, Решение о присоединении к Таможенному союзу заставил Армению принять ЕС – своим упорным желанием лишить Армению суверенитета, Эксклюзивное интервью «Арабат» с советником президента РФ Сергеем Глазьевым, <http://inosmi.ru/sngbaltia/20131028/214275578.html> (09.06.2015).

<sup>169</sup> Moody's downgrades Armenia's government bond rating to Ba3 from Ba2, and changes outlook to negative from stable, [https://www.moody.com/research/Moodys-downgrades-Armenias-government-bond-rating-to-Ba3-from-Ba2--PR\\_316326](https://www.moody.com/research/Moodys-downgrades-Armenias-government-bond-rating-to-Ba3-from-Ba2--PR_316326) (09.06.2015).

#### 4. Էներգետիկ անվտանգություն

Էներգետիկ անվտանգությունը քաղաքական, տնտեսական, իրավական, կազմակերպական, մեթոդական և այլ բնույթի միջոցառումների համալիր է, որն ապահովում է պետության կարիքների բավարարման համար տնտեսապես հիմնավորված գներով որակյալ և հուսալի էներգամատակարարում ամենօրյա պայմաններում, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում և պատերազմի ժամանակ: Քանի որ Հայաստանում բացակայում են արդյունաբերական նշանակություն ունեցող սեփական հանածո վառելիքաէներգետիկ պաշարները, էներգետիկ անվտանգության ապահովման խնդրի լուծումը պայմանավորվում է տնտեսության էներգաարդյունավետության բարձրացմամբ, ատոմային էներգետիկայի զարգացմամբ և վերականգնվող էներգապաշարների արդյունավետ օգտագործմամբ:

Այսօր Հայաստանի ռազմավարական շահն էներգետիկ ոլորտում ուղղված է նոր էներգետիկ ենթակառուցվածքների ստեղծմանը, քանի որ հենց դրանք են երաշխավորելու համակարգի կայունությունը Հայկական ատոմակայանի փակվելուց հետո և ավելացնելու են էլեկտրականության արտահանման ծավալը<sup>170</sup>:

Էներգետիկ անվտանգության գործոնը արդի ինտեգրացիոն գործընթացներում հատկապես և միջազգային հարաբերություններում ընդհանրապես զբաղեցնում է առաջնային դեր: Երկրի էներգետիկ անվտանգությունը ապահովելու և արտաքին ռիսկերը նվազեցնելու գործում կարևոր նշանակություն ունեն էներգակիրների աղբյուրների տարատեսակեցումը և նրանց պահեստավորման հնարավորությունները: Էներգակիրների ներկրման ճանապարհների տարատեսակեցումը կարևոր է ոչ միայն ռազմավարական տեսակետից, այլ նաև տնտեսական առումով<sup>171</sup>:

**Եվրոպական միություն:** Վերջին քսան տարիների ընթացքում Թուրքիայի և Ադրբեջանի հետ փակ սահմանների պայմաններում Հայաստանի համար հիմնական էներգազործընկեր են դարձել Ռուսաստանը և Իրանը: Այս համատեքստում ԵՄ ասոցացման համաձայնագիրը Հայաստանի էներգետիկ անվտանգության համար որոշակի լուրջ մարտահրավերներ է պարունակում: Այդ մարտահրավերները կարելի է բաժանել երկու խմբի<sup>172</sup>.

##### 1. Հայ-իրանական համագործակցություն

<sup>170</sup> Կարեն Կարապետյան, Հայաստանի դերը հարավկովկասյան տարածաշրջանի էներգետիկ անվտանգության ապահովման գործում // «21-ի BEK», # 2, 2009, էջ 23:

<sup>171</sup> Ռուբեն Գրղզեյան, Հայաստանի էներգետիկ անվտանգություն. Արդի վիճակն ու հեռանկարները, <http://national-idea.am/articles.php?id=44> (29.05.2015):

<sup>172</sup> Սևակ Սարուխանյան, Հայկական էներգետիկայի հեռանկարներն ինտեգրացիոն նախագծերի համատեքստում, «21-րդ ԴԱՐ», թիվ 4 (50), 2013 թ., էջ 31, [http://www.noravank.am/upload/pdf/2.Sevak\\_Sarukhanyan\\_21\\_DAR\\_04\\_2013.pdf](http://www.noravank.am/upload/pdf/2.Sevak_Sarukhanyan_21_DAR_04_2013.pdf) (29.05.2015):



## 2. Ատոմային էներգետիկա

Քննարկենք սրանցից յուրաքանչյուրն առանձին-առանձին.

1. Հայաստանի համար կարևոր նշանակություն ունեն իրանա-եվրոպական հարաբերությունները, մանավանդ այն մասով, որը վերաբերում է Իրանի հանդեպ ԵՄ պատժամիջոցներին՝ իրանական միջուկային ծրագրի հետ կապված: Եթե Հայաստանը ԵՄ-ի հետ ասոցացման պայմանագիրը ստորագրելուց հետո ստիպված լիներ հետևել Իրանի հանդեպ ԵՄ պատժամիջոցներին, ապա Երևանը պարտավոր կլինի առնվազն հրաժարվել Իրանից նավթամթերքներ ներկրող խողովակաշարի անցկացումից, քանի որ ԵՄ պատժամիջոցները բացառում են ցանկացած համագործակցություն Թեիրանի հետ նավթային ոլորտում: Պատժամիջոցների պահպանման պայմաններում կարելի է ասել, որ հայ-իրանական նախագծերը խիստ կտուժեին: Ուստի կարելի է ասել, որ ԵՄ-ի հետ ասոցիացիան միանշանակ բացասաբար կանդրադառնար հայ-իրանական էներգետիկ համագործակցության վրա:

2. Հայկական ատոմակայանի վերաբացման առաջին իսկ օրվանից եվրոպական շատ երկրներ, իսկ հետո՝ նաև ԵՄ-ն՝ որպես կառույց, սկսեցին մտահոգվել՝ դրա անվտանգության հետ կապված<sup>173</sup>, քանի որ Մեծամորի կայանի ատոմային ռեակտորը միակն է աշխարհում, որի աշխատանքը վերսկսվել է լիակատար դադարից հետո: 2004 թ. ԵՄ-ն Հայաստանին առաջարկել էր 200 մլն եվրո վարկ Մեծամորի ատոմակայանի միայն փակման համար<sup>174</sup>՝ առանց էլեկտրաէներգիայի արտադրման այլ աղբյուրների ստեղծման որևէ նշանակալի այլընտրանքի: Այս առաջարկը, սակայն, ՀՀ կառավարությունը մերժեց: Ատոմակայանը շարունակում է մնալ Հայաստանի էներգետիկ հատվածի անկյունաքարը՝ արտադրելով երկրի ողջ էլեկտրաէներգիայի մոտ 40 %-ը<sup>175</sup>՝ չնայած հայկական ջերմային էներգակայանների և Որոտանի հիդրոէլեկտրակայանի կայուն գործունեությանը:

**Եվրասիական տնտեսական միություն:** 1990-ական թթ. ճգնաժամով պայմանավորված՝ էներգահամակարգի կայունության հարցն առաջնային է դառնում երկրի ազգային անվտանգության պաշտպանության քաղաքականության համար, ինչն իր արտացոլումն է գտնում Հայաստանի Հան-

<sup>173</sup> Nuclear Power in Armenia, World Nuclear Association, <http://www.world-nuclear.org/info/Country-Profiles/Countries-A-F/Armenia/> (09.06.2015).

<sup>174</sup> Marianne Lavelle and Josie Garthwaite, Is Armenia's Nuclear Plant the World's Most Dangerous?, <http://news.nationalgeographic.com/news/energy/2011/04/110412-most-dangerous-nuclear-plant-armenia/> (09.06.2015).

<sup>175</sup> Richard Rousseau, Is Another Nuclear Accident Waiting to Happen in Armenia?, <http://www.foreignpolicyjournal.com/2011/05/14/is-another-nuclear-accident-waiting-to-happen-in-armenia/> (09.06.2015).

րապետության Ազգային անվտանգության ռազմավարությունում<sup>176</sup>: Փաստաթուղթը հայ-ռուսական հարաբերությունները դիտարկում է որպես Հայաստանի էներգետիկ անկախությունն ապահովող գործոն: Հայաստանում էլեկտրականության արտադրության գլխավոր ենթակառուցվածքը պատկանում է ռուսական ընկերություններին, իսկ գազը գալիս է Իրանից և Ռուսաստանից, Մոսկվան և Թեհրանը կարող են համարվել Հայաստանի ամենակարևոր և գլխավոր գործընկերներն էներգետիկ ոլորտում:

Հաշվի առնելով Ռուսաստանի՝ բնական գազի հիմնական մատակարարի և հայկական նոր աէլ-ի կառուցմամբ հիմնական հետաքրքրված կողմի դիրքորոշումը՝ կարելի է ենթադրել, թե Մաքսային միությանն անդամակցելը Երևանին հասանելի կդառնան ռուսաստանյան ներդրումներն ատոմային ճյուղի համար և ռուսական բնական գազը, բայց Մաքսային միության և ԵվրԱզԷս-ի նորմատիվային-իրավական բազան նման բան չի նախատեսում, և մնում են միայն Ռուսաստանի «բարի կամքն» ու նրա ձգտումը՝ հնարավորինս ամուր կապել հայկական էներգետիկ շուկան ռուսականին: Ինչ վերաբերում է Մաքսային միությանը և ԵվրԱզԷս-ին, ապա այստեղ Միության մի անդամի կողմից մյուսին, ասենք՝ բնական գազը ներքին գներով վաճառելու ոչ մի մեխանիզմ գոյություն չունի, թեև Հայաստանում կարծիք կա, թե այդ մեխանիզմը կա: Դրանով իսկ Հայաստանի մուտքը Մաքսային միություն ինքնըստինքյան չի հանգեցնի նրան, որ Հայաստանն իրավունք կունենա ռուսական կամ դազախական գազն ստանալ ներռուսաստանյան կամ ներդազախստանյան գներով<sup>177</sup>: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ կարող ենք ասել, որ Հայաստանի մուտքը Մաքսային միություն էներգետիկ անվտանգության տեսակետից այնքան էլ շատ բան չի տա: Հայաստանի էներգետիկ ճյուղի համար Մաքսային միությանն անդամակցելը և ասոցիատիվ համաձայնագրից հրաժարվելը նշանակում են ինքնապարփակել երկրի էներգետիկ ճյուղը, նվազագույնի հասցնել էլեկտրահաղորդագծերի Սևծովյան օղակով եվրոպականի հետ հայկական էլեկտրաէներգետիկայի ինտեգրման հնարավորությունները, ինչպես նաև Վրաստանին և ԵՄ-ին տրամադրել անկախ կարգավիճակ՝ վճռելու Վրաստանի տարածքով դեպի Հայաստան ռուսական գազի տարանցման ճակատագիրը<sup>178</sup>:

<sup>176</sup> Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարություն, [http://www.mfa.am/u\\_files/file/doctrine/Doctrinearm.pdf](http://www.mfa.am/u_files/file/doctrine/Doctrinearm.pdf) (30.05.2015):

<sup>177</sup> Ibid., էջ 38–39.

<sup>178</sup> Սևակ Սարուխանյան, Հայկական էներգետիկայի հեռանկարներն ինտեգրացիոն նախագծերի համատեքստում, «21-րդ դար», թիվ 4 (50), 2013 թ., էջ 38, [http://www.noravank.am/upload/pdf/2.Sevak\\_Sarukhanyan\\_21\\_DAR\\_04\\_2013.pdf](http://www.noravank.am/upload/pdf/2.Sevak_Sarukhanyan_21_DAR_04_2013.pdf) (29.05.2015):

## Եզրակացություն

Իրականացված ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստել հետևյալը.

- անկախության առաջին իսկ օրվանից Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության վեկտորը ուղղված էր դեպի Եվրոպա,
- ՀՀ քաղաքական համակարգի փոխակերպումը տեղի է ունեցել Եվրոպականացման և Եվրաինտեգրան համատեքստերում, ինչի նպատակն է եղել կառուցել ժողովրդավարական հասարակարգ, անցում կատարել ազատ շուկայական տնտեսության, ունենալ մարդու իրավունքների պաշտպանության բարձր մակարդակ և օրենքի գերակայություն,
- 2013 թ. սեպտեմբերի 3-ին տեղի ունեցավ արտաքին քաղաքական վեկտորի կտրուկ փոփոխություն, ինչը երկիրը կանգնեցրեց մի շարք բացահայտ և թաքնված խնդիրների առաջ,
- Եվրոպական միության և Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ինտեգրացիոն գործընթացների խաչաձևումը Հայաստանի Հանրապետությունում ունեցավ և ունի թե՛ դրական և թե՛ բացասական ազդեցություն Հայաստանի Հանրապետության ներքին և արտաքին քաղաքականության զարգացման վրա:

Ստորև կներկայացվեն հետազոտական աշխատանքի արդյունքները և եզրակացությունները՝ համաձայն նախապես որոշված ոլորտների.

### 1. Քաղաքական և սոցիալ-մշակութային արժեհամակարգ

**ԵՄ:** Այսօր Եվրոպականացում և ժողովրդավարացում եզրերը հոմանիշներ են: Ուստի կարելի է ասել, որ Եվրոպական կառույցներին անդամագրվելը և դրանց հետ փոխհարաբերությունների զարգացումը որպես պարտադիր պայման ենթադրում են Հայաստանի քաղաքական համակարգի հետևողական ժողովրդավարացում:

**ԵՏՄ:** ԵՏՄ անդամ պետությունները ավտորիտար են, հեռու են ժողովրդավարական արժեքներից, այս երկրներում ամեն քայլափոխի ոտնահարվում են մարդու իրավունքներն ու ազատությունները: Հայաստանը փաստացի այն պետությունների հարևանությամբ է, որտեղ արդիականացման և ժողովրդավարացման գործընթացների անավարտությունը պայմանավորված է քաղաքական ինստիտուտների չկայացածությամբ, քաղաքացիական հասարակության բացակայությամբ, ինչպես նաև աշխարհաքաղաքական և տնտեսական պայմաններով: Թե ինչպիսի ազդեցություն կարող են ունենալ այս երկրները Հայաստանում հետագա ժողովրդավարական զարգացումների վրա՝ հաշվի առնելով այդ երկրների փակ շուկան և օլիգարխիկ տնտեսվարությունները, միանշանակ կարելի է ասել՝ բացասական:

## 2. Սահմաններ

**ԵՄ:** ԵՄ-ի հետ ընդհանուր սահման չունեցող ՀՀ հարևաններն են Վրաստանը և Թուրքիան, որոնք ունեն ընդհանուր սահման ԵՄ-ի հետ: Եթե Թուրքիայի դեպքում ՀՀ – Թուրքիա սահմանը փակ է, ապա ՀՀ – Վրաստան սահմանը բաց է և տարեկան կատարում է միլիարդավոր դոլարների հասնող ապրանքաշրջանառություն: Եթե Հայաստանը անդամակցեր ԵՄ ասոցացման համաձայնագրին, ապա Վրաստանը և որպես հարևան, և որպես ասոցացված անդամ նույնպես կապահովեր ՀՀ ուղիղ կապը ԵՄ անդամ պետությունների հետ առևտրաշրջանառության իրականացման համար:

**ԵՏՄ:** ԵՏՄ անդամ որևէ պետության հետ ուղիղ սահման չունեցող Հայաստանը իր առևտրաշրջանառությունն այդ միության անդամ երկրների հետ իրականացնում է Վրաստանի տրամադրած միջանցքի միջոցով, որը հավելյալ բյուրոկրատիա և տրանսպորտային ծախսեր է ավելացնում և, ընդհանուր հաշվով, կորցնում «Մաքսային միության»՝ մեկ ընդհանուր արտաքին սահման ունենալու գաղափարը:

## 3. Տարածաշրջանային անվտանգություն և ԼՂՀ

**ԵՄ:** ԵՄ-ի համար կարևոր է իր սահմաններին մոտ ունենալ կայուն, անվտանգ և կանխատեսելի հարևաններ: Հենց այս գաղափարի իրականացմանն էին ուղղված ԵՄ իրականացրած մի շարք նախագծեր, ինչպես, օրինակ՝ ԵՀՔ, ԱԳ և այս վերջին մի քանի տարիների ընթացքում բանակցվող ԵՄ-ի հետ ասոցացման համաձայնագրերը: Հատկանշական է, որ ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունների ժամանակ շրջանցվել է ԼՂՀ հարցը, որը այդքան կարևոր էր Հայաստանի համար:

**ԵՏՄ:** Հարավային Կովկասը տարիներ շարունակ եղել է Ռուսաստանի ազդեցության գոտի և համարվել է հարավային սահման: Այս տարածաշրջանը սեփական ազդեցության տակ պահելն անչափ կարևոր է ցանկացած ռուս առաջնորդի համար: Տարածաշրջանում կորցնելով Վրաստանին և աչքի առաջ ունենալով չկողմնորոշված Ադրբեյջանին՝ Հայաստանը Ռուսաստանի համար մնաց միակ հարավկովկասյան պետությունը, որտեղ վերջինս, օգտագործելով իր ազդեցությունը երկրի անվտանգության ոլորտում, կարողացավ ներգրավել նրան Եվրասիական տնտեսական միության մեջ: ՀՀ – ԼՂՀ սահմանի մաքսակետը այս ինտեգրացիոն միությունն անդամակցելու ձևաչափերի քննարկումների ժամանակ դարձավ լուրջ անջրպետ, որը հնարավոր եղավ հաղթահարել և պահպանել ձևավորված ստատուս քվոն գուտ ռուսական շահերի հաշվին:

#### 4. Էներգետիկ անվտանգություն

**ԵՄ:** ԵՄ ասոցացման համաձայնագիրը Հայաստանի էներգետիկ անվտանգության համար որոշակի լուրջ մարտահրավերներ է պարունակում: Այդ մարտահրավերները բաժանվում են երկու խմբի՝ հայ-իրանական համագործակցություն և ատոմային էներգետիկա:

**ԵՏՄ:** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանը, անդամակցելով ԵՏՄ-ին, ոչ մի էներգետիկ ռեսուրսի համար զեղչեր չի ստանա անդամ որևէ երկրից, կարելի է եզրակացնել, որ Հայաստանի մուտքը այս ինտեգրում էներգետիկ անվտանգության տեսակետից արդյունավետ չէր:

## ARMENIA ON ITS WAY TO INTEGRATION

*RIMA KHALATYAN*

Formation of integration associations as means of peacebuilding and economic development at the regional and global levels has taken place since the ancient times. The ideology of eternal peace has been reflected in the works of such prominent figures of the Middle Ages as Jiri of Podiebrad, Duke Sully, Abbot of Saint–Pierre, William Penne and others. It is noteworthy that the birthplace and cradle of development of this ideology is Europe.

The concept of peace and development, communicated over the centuries, has been brought to life again in Europe in the second half of the 20th century, which nowadays is considered a dominant trend in international relations.

Integration is a multi–faceted and multi–level process with definition of three main levels – economic, socio–cultural and political. An effective integration is impracticable without profound interconnection and balance between these three levels. A good piece of evidence for this is the experience of European integration, which by itself is a unique and exemplary process. The theoretical and historical bases of the EU integration serve as best practice for other integration processes. As far as the contemporary phase of European integration started in 1951, with foundation of ECSC, its economic component made it critically important in integration processes from the point of view of formation of the Union’s institutional structures and the establishment and legitimation of bases for its activity. The conception of peace and development, which has existed in Europe since the ancient times, found its formal, institutional expression in the establishment and enhancement of the economic integration.

Since the declaration of its independence, the Republic of Armenia has also been involved in this international process, which in this case had a rather diverse and multi–faceted nature determined by historical, regional and geopolitical factors.

Amongst other factors, we should first and foremost discuss the challenging situation in which the newly independent Republic of Armenia was required to make its foreign policy choices.

After the collapse of the Soviet Union, nearly the entire post–Soviet space was involved into a process of transformation of the political system and political modernization, accompanied by the formation of new democratic institutions, which in its turn implied Europeanization as reproduction of successful Western (European) democracies. But the 70 – year long Soviet history has

left a significant imprint on the RA political and economic systems as well as on public opinion.

The ethno-cultural differences taking place within the process of Europeanization are often introduced as barriers between Armenia and Europe. Some researchers believed that Armenia was closer to the countries of the “wise East” and an Armenian would never be able to fully integrate into Europe due to his national mentality, mode of life and outlook. Along with this, the negotiations on relationship between Russia and Armenia were already launched as an alternative to European integration. This competition is a reality which is not subject to dispute and must be looked upon in the context of geopolitical peculiarities of Armenia. The opposition between Russia and the West has become an important factor for democratic reforms in post-Soviet countries, and Armenia did not stay apart from this fight/competition. However, it should be noted that the implementation of democratic reforms in Armenia was conducted in the context of Europeanization with a clear accent on pro-European integration.

During 2010–2013, the EU and Armenia initiated negotiations towards the bilateral Free Trade Agreement on creation of Deep and Comprehensive Free Trade Area (DCFTA), which was expected to become the first formal step of Armenia towards the European integration. DCFTA would attempt to provide the RA with better access to the EU market and to support the government in implementation of economic reforms.<sup>179</sup> As an outcome of the negotiations, it was expected that the EU and Armenia would sign the DCFTA at the meeting scheduled in 2013 in Vilnius. Yet, in September 2013, after long-term reforms and negotiations, President of Armenia Serzh Sargsyan, upon the meeting with Russian President Vladimir Putin in Moscow, made an announcement about the decision of the Republic of Armenia to join the Customs Union initiated by Russia, Belarus and Kazakhstan, as well as to take necessary steps in this regard with a further goal of taking part in the formation of the Eurasian Economic Union. This appeared to be a critical change in foreign international policy. However, it should be noted that President Sargsyan emphasized in his speech that there was no intent on part of Armenia to reject or refuse the dialogue with European institutions.<sup>180</sup>

---

<sup>179</sup> Free Trade Agreement, [http://eeas.europa.eu/delegations/armenia/eu\\_armenia/trade\\_relation/free\\_trade\\_agreement/index\\_hy.htm](http://eeas.europa.eu/delegations/armenia/eu_armenia/trade_relation/free_trade_agreement/index_hy.htm) (26.05.2015)

<sup>180</sup> Interview with RA President Serzh Sargsyan at the press conference on the negotiations with RF President Vladimir Putin, <http://www.president.am/hy/interviews-and-press-conferences/item/2013/09/03/President-Serzh-Sargsyan-press-conference-working-visit-to-Russian-Federation/> (12.05.2015)

Discussion of the RA international integration processes in such situation results in identifying the bases underlying the choice of Armenia between the EEU and the EU.

This survey aims to discuss the intersection of the integration processes taking place in Armenia within the frameworks of the European Union and the Eurasian Economic Union. The article provides a review of the positive and negative impacts of regional integration unions on the enhancement of the domestic and foreign policy in the Republic of Armenia. In particular, the following factors have been discussed, evaluated and compared in the article:

1. Political and socio-cultural systems of values typical for each regional integration union.
2. The absence of common borders with the two regional integration unions.
3. Regional security issues in the agenda of the two integration unions and the attitude existing within the unions towards the security of Nagorno-Karabakh and its involvement into the integration process.
4. The issues of energy security of the RA in the context of choice between the integration vectors.

To achieve the aim set by the article and to resolve the problems, we need to survey the factors which influence and have influenced the choice between the integration vectors in the context of political, security and economic development.

### **1. Political and socio-cultural system of values**

The most important condition for the membership to the integration union is the compliance of the candidate country with the economic, political and socio-cultural environment existing within the union. At the same time, the system of political values dominating in the member states of the supranational organization, which the candidate country integrates into, or is willing to, is highly significant for the development of the country. The issues of socio-cultural affiliation and shared aspects in the sets of values gain primary importance in the integration process. The type of the political regime answers to a number of questions. As shown by practice, if members of the economic union are democratic countries, the integration gives benefit to nearly all the citizens of the state, but if not, the only people likely to benefit from the integration will be the ones who at the moment are holding the economy of the country in their hands. The consequences caused by such integration can be irreversible both for the state and the economic future of the entire economic union.

As far back as 1795, I.Kant, talking about the necessity of building peace



and establishing an international integration union, put forth the concept of the obligation to respect human right and the principle of equal distribution of wealth. “Peace” by Kant was based on respect for and protection of human and civil rights, development and recognition of binding legal norms issued for all states.

Kant developed several concepts introduced by Machiavelli and Montesquieu<sup>181</sup> about the internal structure of countries, according to which the equal division of wealth inside a republic would eventually lead to a more moderate foreign policy, and in his “Treatise on Perpetual Peace”, he promoted the conception that foreign policy depends on the internal structure of the country. Kant writes: “... A state is not, like the ground which it occupies, a piece of property (patrimonium). It is a society of men whom no one else has any right to command or to dispose except the state itself...”<sup>182</sup>

Solution to the dilemma requires identification and discussion of the political and socio-cultural components proposed by the integration unions.

**European Union.** The Western, European model of democracy is recognized exemplary by the modern world. The democratization of the political system implies import and implantation of European values. The European unity or the European integration is a policy which is built on the ideology of human right protection and is focused on provision of peace and economic development. Either as an ideology or as a policy, it has been developed by the efforts of the European states. However, in the 20<sup>th</sup> century, preconditioned by the third wave of democratization, it manifested itself otherwise, developing into a tool and means of political modernization of newly democratized countries. This change was also promoted by the expansion of democratic processes and formation of intra-regional unions.

Armenia-EU relations, formed in the early 90s, were legally defined by the Partnership and Cooperation Agreement which was signed in 1996 and became effective in 1999. A qualitatively new phase in the relationship was recorded by the formation of the ENP. Whereas the EU looked upon this relationship as an opportunity for extension of its political and economic influence, Armenia

<sup>181</sup> Machiavelli believed that the republic is the best form of governance as far as each citizen was made responsible for the fortune of his country. See “Prince”. Montesquieu defined three main forms of governance: dictatorship, monarchy, republic. The republic is the type of governance which implies that the supreme power is focused in the hands of the entire nation or a part of it. See “About the Soul of Laws”. 4 See I.Kant “Towards Perpetual Peace”, “Treatise on Perpetual Peace”, Preface by F.V.Konstantinov; Introductory article by I.S.Andreeva, Coll. by I.S.Andreeva and A.V. Guliga, Publisher: Sotsekgiz, 1963 [http://www.marsexx.ru/lit/traktaty\\_o\\_vechnom\\_mire.html](http://www.marsexx.ru/lit/traktaty_o_vechnom_mire.html)

<sup>182</sup> S.B.Lavrov, L.N. Gumilev and Eurasianism, Moscow, 1993, <http://www.eurasianism.enu.kz/elektronnye-resursy/uchenyy-mir-o-evraziystve/385/> (30.05.2015)

intended to pursue deeper reforms in political, economic, social and cultural sectors. The issue of European integration of Armenia gained importance in the Eastern project in the context of political transformation of the country, the choice of the form of democratic government and its establishment. The formation of new political institutions – the constitution, state institutions, political parties, is fulfilled by European examples in combination with the national experience. In Armenia, unlike certain former Soviet countries, such combination is historically justified. European models of political systems and political regimes, particularly of the parliamentary type, were applied in the First and, to a certain extent, in the Second Republic of Armenia.

ԵՄ – Հայաստան հարաբերությունների պաշտոնական ամրագրումն իրականացվեց գործընկերության և համագործակցության համաձայնագրով, որը, բացի պաշտպանության հիմնահարցերից, ընդգրկում է ԵՄ – Հայաստան հարաբերությունների գրեթե բոլոր ոլորտները: Այն ստորագրվել է 1996 թ. ապրիլի 22–ին և ուժի մեջ մտել 1999 թ. հուլիսի 1–ին՝ 10 տարի ժամկետով<sup>226</sup>: ԳՀՀ–ի հիմնական նպատակն է ավելի խորացնել քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային կապերն ու համագործակցել բազմաթիվ բնագավառներում՝ ապահովելով եվրոպական երկրներին հարիր բարեկեցիկ կյանք, ժողովրդավարական սկզբունքների և օրենքի գերակայություն, քաղաքացիների շահերի, մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանություն, ինչպես նաև երկրի սոցիալ–տնտեսական զարգացման դինամիկ և կայուն ընթացք: Այդ մասին շարադրված է ԳՀՀ–ի առաջին հոդվածում, որտեղ չորս կետերով առանձնացվում են գործունեության հիմնական ուղղությունները՝ քաղաքական կապերի ամրապնդում, շուկայական տնտեսության ձևավորում, առևտրային և ներդրումային քաղաքականության ներդաշնակության հաստատում, մի շարք առանցքային ոլորտներում համագործակցության հաստատում: Պայմանագիրը ստորագրվել է տասը տարի ժամկետով և դրա լրանալուց հետո ամեն տարի երկարացվում է:

Հարկ է փաստել, որ չնայած հետխորհրդային տարածքի երկրների հետ ԵՄ–ն անհատական գործընկերային հարաբերություններ էր կառուցում, այնուամենայնիվ, ԵՄ–ի համար առավել կարևոր էր տարածաշրջանային առաջնահերթությունները: Դա ակնհայտ դրսևորվեց 2003 թ. դեկտեմբերի 12–ին, երբ ԵՄ–ն ընդունեց «Եվրոպական անվտանգության ռազմավարությունը» (ԵԱՌ)<sup>227</sup>: Այս փաստաթղթում տեղ են գտել այն հիմնական մարտահրավերները, որոնք սպառնում են ԵՄ–ի անդամ երկրների և ընդհանրապես մարդկության անվտանգությանը՝ ուղենշելով դրանց դեմ պայքարելու ռազմավար-

<sup>225</sup> Տես Գ. Թերզյան, Բարև, Եվրոպա, Եվրասիա համագործակցության հիմնադրամ, Երևան, 2010, էջ 81:

<sup>226</sup> Տես ԵՄ – Հայաստան Գործընկերության և համագործակցության համաձայնագիր, 1996 թ., <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=17146>

<sup>227</sup> Տես A secure Europe in a better world, European security strategy, Brussels, 12 December 2003, p. 6–7:

րությունը: Ըստ ռազմավարության՝ ԵՄ–ի և ամբողջ աշխարհի համար գլոբալ սպառնալիք են համաշխարհային ահաբեկչությունը, ՋՈՁ տարածումը, տարածաշրջանային կոնֆլիկտները, պետությունների քաղաքական անկարողությունը և դրանց ինստիտուցիոնալ–գործառնական կազմալուծումը («ձախողված պետություններ»), կազմակերպված հանցավորությունը: Իսկ 2008 թ. ԵԱՌ ներդրման հաշվետվության մեջ սպառնալիքների այդ շարքին ավելացան նաև էներգետիկ ու կիրերանվտանգությունը, կլիմայի փոփոխությունը<sup>228</sup>:

Այս առումով նշված հիմնախնդիրների լուծումն առաջարկվում է հետևյալ ձևաչափով.

- ԵՄ–ի անմիջական հարևան երկրներում կայուն զարգացման և արդյունավետ պետական կառավարման համար պայմանների ստեղծում,
- համաշխարհային կարգի պահպանում՝ հիմնված արդյունավետ համագործակցության բազմակողմ մեխանիզմների վրա,
- պայքար հին և նոր սպառնալիքների դեմ և բոլոր տեսակի հակամարտությունների կանխարգելում<sup>229</sup>:

Ահա այս փաստաթղթի ընդունումից հետո մեծապես աճում է Հայաստանն ընդգրկող Հարավային Կովկասի տարածաշրջանում ԵՄ–ի ներգրավվածությունը, որը բացատրվում է անվտանգային քաղաքականություն իրականացնելու համատեքստում: Հարկ է հիշատակել նաև, որ ԵԱՌ–ը և դրան համապատասխան քաղաքականության իրականացումը տարածաշրջանում պայմանավորված էր նաև 2004 թ. ԵՄ–ի ընդլայնմամբ, երբ նախկին խորհրդային բլոկի ութ երկրներ, ինչպես նաև Կիպրոսն ու Մալթան դարձան ԵՄ–ի անդամներ: Այս կերպ Հարավային Կովկասը դարձավ ԵՄ–ի անմիջական հարևանը, որն էլ նպաստեց տարածաշրջանային նոր քաղաքականության մեկնարկին<sup>230</sup>:

2004 թ. հունիսին Ադրբեջանը, Ալժիրը, Բելառուսը, Եգիպտոսը, Թունիսը, Իսրայելը, Լիբանանը, Լիբիան, Հայաստանը, Հորդանանը, Մարոկկոն, Մոլդովան, Պաղեստինը, Վրաստանը և Ուկրաինան ներառվեցին ԵՀԲ ծրագրի մեջ, որի նպատակն էր ուրվագծել ներկայիս ԵՄ սահմանները և նպաստել ԵՄ անվտանգության երաշխիքների ձևավորմանը՝ հարևաններին առավել կանխատեսելի դարձնելով: Ունենալով զարգացած և կայուն հարևաններ՝ ԵՄ–ն իրեն շրջապատում է պաշտպանական գոտիով՝ սահմաններով, որոնք միգրացե առաջինն իրենց վրա կկրեն ԵՄ–ին

<sup>228</sup> StEU Report on the Implementation of the European Security Strategy, Providing Security in a Changing World, S407/08, Brussels, 11 December 2008, p.3:

<sup>229</sup> StEU A secure Europe in a better world, European security strategy, 12 December 2003, Brussels, p. 6–7:

<sup>230</sup> StEU European Commission, enlargement, [http://ec.europa.eu/enlargement/5th\\_enlargement/index\\_en.htm](http://ec.europa.eu/enlargement/5th_enlargement/index_en.htm) (14.06.2015):

սպառնացող վտանգները: Ըստ «Եվրոպական միություն և Հայաստան» գրքի հեղինակների՝ նոր հարևան երկրները, խրախուսելով քաղաքական ու տնտեսական բարեփոխումները, ստանում են ԵՄ-ի հետ համագործակցելու արտոնյալ պայմաններ: Այդ երկրներին առաջարկվում են ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացման նոր հեռանկարներ՝ ըստ երկրների անհատական առաջընթացի<sup>231</sup>:

ԵՀՔ համատեքստում 2006 թ. նոյեմբերի 14-ին Բյուսելում ԵՄ – Հայաստան համագործակցության խորհրդի նիստում ընդունվեց ԵՀՔ գործողությունների ծրագիրը Հայաստանի վերաբերյալ, որի կիզակետում էին մասնավորապես ժողովրդավարացումը, մարդու իրավունքները, սոցիալ-տնտեսական բարեփոխումները, աղքատության նվազեցումը, էներգետիկան, հակամարտությունները, ինչպես նաև ոլորտային խնդիրներ:

2008 թ. Եվրոպական հանձնաժողովը մշակեց Եվրոպայի էներգետիկ անվտանգության և համերաշխության գործողության պլանը<sup>232</sup>, դրանով որպես մատակարար և տարանցիկ երկրներ նախատեսվում է ընդգրկել Ադրբեջանին, Վրաստանին, Թուրքիային, Եգիպտոսին, Իրաքին, Թուրքմենստանին, Ղազախստանին: Իսկ Իրանն ու Ուզբեկստանը կկարողանան միանալ ծրագրին՝ նրանց հետ կապված քաղաքական բարենպաստ պայմանների դեպքում<sup>233</sup>: Այս կերպ Հարավային Կովկասը նորովի կարևորություն ստացավ ԵՄ-ի համար, ուստի համագործակցության սերտացման նոր անհրաժեշտություն առաջացավ, և պատահական չէ, որ փաստաթղթի ընդունումից հետո հաջորդ քայլը եղավ տարածաշրջանի երկրների հետ նոր, ավելի խոր մակարդակի ծրագրի մեկնարկի ազդարարումը: 2009 թ. մայիսի 7-ին Պրահայում ստորագրվեց միացյալ հռչակագիր՝ մի կողմից՝ ԵՄ-ի, մյուս կողմից՝ Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Ուկրաինայի, Բելառուսի<sup>234</sup> և Մոլդովայի միջև: Սրանով սկիզբ դրվեց Արևելյան գործընկերությանը<sup>235</sup>: Ծրագիրը նպատակ ունի առավել խոր հիմքերի վրա դնելու ԵՄ-ի համագործակցությունը հիշյալ երկրների հետ ինչպես բազմակողմ, այնպես էլ երկկողմ մեխանիզմների օգնությամբ, որը թույլ կտա շարունակվող բարեփոխումներին զուգընթաց ապահովել ԵՄ-ի հետ տնտեսական և քաղաքական ինտեգրման բարձր ցուցանիշ:

<sup>231</sup> Տե՛ս Լ. Բեգանյան, Ա. Բայբուրդյան, Ա. Պարզյան, Եվրոպական միություն և Հայաստան, 2010, Երևան, էջ 51:

<sup>232</sup> Տե՛ս EU aims to solve “Southern Gas Corridor” puzzle, 29.01.2010, <http://www.euractiv.com/energy/eu-aims-solve-southern-gas-corri-news-221784> (14.06.2015):

<sup>233</sup> Տե՛ս Energy Security and Solidarity Action Plan, 04.03.2009 թ., [http://europa.eu/legislation\\_summaries/energy/european\\_energy\\_policy/en0003\\_en.htm](http://europa.eu/legislation_summaries/energy/european_energy_policy/en0003_en.htm), 29.03.2014:

<sup>234</sup> Բելառուսի կարգավիճակը կախված է ժողովրդավարական բարեփոխումներ կատարելու նրա առաջընթացից: Տե՛ս “Eastern Partnership” – Brussels – 3 December 2008:

<sup>235</sup> Տե՛ս Joint Declaration of the Prague Eastern partnership Summit-7, May 2009, Prague:

ԵՄ Արևելյան գործընկերության ծրագրի ներքո իրականացվող ՀՀ – ԵՄ համագործակցության շրջանակներում ձևավորվել են բազմակողմ համագործակցության 4 հարթակներ (պլատֆորմներ)՝

1. Ժողովրդավարության, արդյունավետ կառավարման և կայունության,
2. տնտեսական ինտեգրման և ԵՄ քաղաքականություններին համապատասխանեցման,
3. էներգետիկ անվտանգության,
4. մարդկանց միջև կապերի ձևավորման՝ ուղղված գործընկեր երկրների անհատական բարեփոխումների իրականացման ջանքերին:

Երկրորդ՝ «Տնտեսական ինտեգրման և ԵՄ քաղաքականություններին համապատասխանեցման» պլատֆորմի և վերջինիս ներքո գործող 5 աշխատանքային խմբերի (առևտրի հարցերի, ՓՄՁ քաղաքականության, գյուղատնտեսության հարցերի, տրանսպորտի և բնապահպանության) աշխատանքները համակարգում է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը<sup>236</sup>:

Արևելյան գործընկերությունը ԵՄ–ի կողմից տարածաշրջանում իր ազդեցությունը մեծացնելուն ուղղված վերջին քայլն է, որով ծրագրին մասնակից երկրները հետագայում կանգնեցին եվրոպական կամ եվրասիական ընտրանքի առաջ: Ըստ Բորդոյի համալսարանի պրոֆեսոր Զ. Լուսսաքի գնահատականի՝ սկսած 2008 թ–ից՝ Բրյուսելը չափազանց ակտիվ է տարածաշրջանում՝ հայտ ներկայացնելով դառնալ տարածաշրջանի նոր գերտերություններից մեկը<sup>237</sup>:

ԵՄ–ի քաղաքականության փոփոխությունները Արևելյան գործընկերության երկրներում ԽՍՀՄ փլուզումից հետո մինչև 2007 թ., ըստ մեզ, անցել են մի քանի փուլեր: Սկզբնական շրջանում ԵՄ–ն փորձում էր չխախտել դեռևս Սառը պատերազմի տարիներին ձևավորված բաժանարար գծերը, և այս տարածքը դիտարկում էր ՌԴ–ի առանձնահատուկ շահերի գոտի, որի հետ հարաբերությունները կառուցվում էին բավականին զգուշավորությամբ: Սակայն հետագայում ԵՄ–ն աստիճանաբար փորձեց կոտրել այդ կարծրատիպը՝ հայտ ներկայացնելով՝ դառնալու տարածաշրջանում հիմնական դերակատարներից մեկը: Ընդհանուր առմամբ, 2003 թ–ը կարող ենք ընդունել այս տարածաշրջանում ԵՄ–ի իրականացրած քաղաքականության շրջադարձային կետ, երբ ԵՄ–ն ԵՀՔ և սեփական անվտանգությունն ապահովելու ֆոնով բավականին լուրջ հայտ ներկայացրեց տարածաշրջանում՝ իր կշիռն ու դերակատարությունը բարձրացնելու: Սակայն պետք է փաստել, որ այդ քաղաքականությունն իրականացնելիս հաշվի էին նստում ՌԴ–ի հետ՝ աշխատելով խուսափել բախումնային իրավիճակից:

<sup>236</sup> Տե՛ս ԵՄ Արևելյան գործընկերություն, <http://www.mineconomy.am/arm/43/gortsaruyt.html> (14.06.2015):

<sup>237</sup> Տե՛ս Lussac J., 2010, Ensuring European energy security in Russian, 'Near Abroad': the case of the South Caucasus, *European Security*, vol. 19:4, 613:

Ընդհանուր առմամբ, ԵՄ – ՌԴ հարաբերություններն այդ ժամանակահատվածում կարող ենք բնութագրել մրցակցային, որտեղ, սակայն, զգուշավորությամբ պահպանվում էին խաղի կանոնները: Այսինքն՝ կողմերից յուրաքանչյուրը գործում էր լռելյայն ձեռք բերված համաձայնության շրջանակներում:

2010 թ. հուլիսին Հայաստանն ու ԵՄ-ը սկսեցին համագործակցության հաջորդ քայլի՝ ասոցացման համաձայնագրի բանակցությունները: Այս համաձայնագիրը, որ դուրս է գործընկերության և համագործակցության համաձայնագրի շրջանակներից, ճանապարհ էր հարթելու ազատ առևտրի գոտու ստեղծման համար: ԽՀԱԱՀ-ը պետք է լիներ առևտրի և տնտեսական հարաբերությունների շուրջ համաձայնագիր, որը ներառելու էր.

- շուկայի մուտքի բարելավված հնարավորություններ և ԵՄ միասնական շուկա Հայաստանի պրոգրեսիվ տնտեսական ինտեգրման հստակ հեռանկար,

- երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք նորմատիվ ոլորտներ, օրինակ՝ առևտրի դյուրացում, առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացում, սանիտարական և բուսասանիտարական միջոցառումներ, պետական գնումների և մրցակցության քաղաքականություն, առևտրին ու կայուն զարգացմանն առնչվող հարցեր<sup>238</sup>:

Այս կարևոր բարեփոխումները, մասնավորապես, առնչվում են բանակցային գործընթացի համար համապատասխան ինստիտուցիոնալ կառույցների և վարչական կարողությունների ստեղծմանը, ԵՄ առևտրի ոլորտի հիմնական օրենքներին և ստանդարտներին ՀՀ օրենսդրության հիմնական կետերի համապատասխանեցմանը:

Հաջորդ կարևոր քայլը ԵՄ մուտքի արտոնագրերի դյուրացումն էր Հայաստանի համար: 2012 թ. հոկտեմբերի 18-ին ԵՄ-ը և Հայաստանը Բյուրսելում նախաստորագրեցին մուտքի արտոնագրերի դյուրացման համաձայնագիրը: Մուտքի արտոնագրերի դյուրացման համաձայնագիրը ԵՄ-ի և Հայաստանի միջև ստորագրվեց 2012 թ. դեկտեմբերի 17-ին<sup>239</sup>: 2014 թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտան ԵՄ – Հայաստան մուտքի արտոնագրերի դյուրացման և ռեադմիսիայի համաձայնագրերը<sup>240</sup>:

Հայաստանը վերը թվարկված ոլորտներում հաջողությամբ իրականացնում էր բարեփոխումները և պատրաստ էր ասոցացման համաձայնագրի

<sup>238</sup> Տե՛ս Armenia, Trade European Commission, <http://ec.europa.eu/trade/policy/countries-and-regions/countries/armenia/> (14.06.2015):

<sup>239</sup> Տե՛ս ԵՄ – Հայաստան, <http://eucentre.am/hy/%D5%A5%D5%B4-%D5%A8-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4/> (14.06.2015):

<sup>240</sup> Տե՛ս Քաղաքական և տնտեսական հարաբերություններ, ՀՀ-ում ԵՄ-ի պատվիրակություն, [http://eeas.europa.eu/delegations/armenia/eu\\_armenia/political\\_relations/index\\_hy.htm](http://eeas.europa.eu/delegations/armenia/eu_armenia/political_relations/index_hy.htm) (14.06.2015):

ստորագրմանը, սակայն իրավիճակը փոխվեց 2013 թ. նոյեմբերին ԱԳ երկրների գազաթափողովից առաջ: Վիլնյուսի գազաթափողովում սպասվում էր շատ կարևոր իրադարձություն. Հայաստանը, Մոլդովան և Վրաստանը պետք է նախաստորագրեին ասոցացման համաձայնագիրը՝ ներառյալ Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու համաձայնագիրը, իսկ Ուկրաինան պետք է ստորագրեր այն: Ազատ առևտրի գոտին միջազգային տնտեսական ինտեգրման ամենապարզ ձևն է: Այն մասնակից երկրների միջև առկա առևտրային սահմանափակումների կամ վերանայումն է, կամ վերացումը: Յուրաքանչյուր երկիր միությունից դուրս հնարավորություն ունի արտաքին տնտեսական հարաբերություններում կիրառելու իր առևտրային քաղաքականությունը<sup>241</sup>: ՌԴ-ի կողմից այս ամենը դիտարկվեց սեփական շահերի գոտում ինտեգրացիոն քաղաքականության մեկնարկ, որը հետագայում պետք է հանգեցնե՛ր ԵՄ-ի անդամակցությանը: Մինչդեռ ՌԴ-ն իր սեփական պլաններն էր մշակել ԱԳ անդամ երկրների համար, ուստի ԵՄ-ի այդ ձեռնարկումը հանդիպեց Հյուսիսային հսկայի սուր դիմադրությանը: Խնդիրն այն է, որ ՌԴ-ն դեռևս տարիներ առաջ թեորետիկ մակարդակում մշակել էր ինտեգրացիոն միավորում ստեղծելու նախագիծ, որի մեջ ՌԴ-ի հաշվարկներով պետք է մտնեին նաև ԱԳ անդամ երկրները:

Այդ մասին ՌԴ նախագահ Վ. Պուտինը բարձրաձայնեց 2011 թ. հոկտեմբերի 3-ին «Իզվեստիա» թերթին տված հարցազրույցում՝ խոսելով Եվրասիա մայրցամաքում ինտեգրացիոն նոր միավորում ստեղծելու մտադրության մասին: Դատելով հարցազրույցում Վ. Պուտինի արտահայտած դրոյթներից՝ նա ձգտում է տարածաշրջանում ստեղծել ինտեգրացիոն միավերագային միավորում, որը կարող է քաղաքական մեծ կշիռ ունենալ և մրցակցել ու համագործակցել նաև ԵՄ-ի հետ<sup>242</sup>:

Այս նախագծի նախահիմքերը դրվել էին բավականին վաղուց և ամրագրվել 1999 թ., երբ Բելառուսի, Ղազախստանի, ՌԴ-ի, Ղրղզստանի և Տաջիկստանի նախագահներն ստորագրում են «Մաքսային միություն և միասնական տնտեսական տարածություն ստեղծելու մասին» պայմանագիրը:

Չդատելով ինտեգրացման գործընթացի արդյունավետության մասին՝ նշենք, որ 2003 թ. Բելառուսի, Ղազախստանի, ՌԴ-ի և Ուկրաինայի նախագահները որոշում ընդունեցին միասնական տնտեսական տարածություն ստեղծելու մասին, սակայն Ուկրաինան երկրում տեղի ունեցած «Նարնջագույն հեղափոխությունից» հետո դուրս եկավ հետագա

<sup>241</sup> Տե՛ս Գ. Հայրապետյան, Տնտեսական ինտեգրում և գլոբալացում, դասախոսություն, ԵՊՀ, 2013, [http://users.freenet.am/~grigorh/files/World\\_Economy4.pdf](http://users.freenet.am/~grigorh/files/World_Economy4.pdf) (14.06.2015):

<sup>242</sup> Տե՛ս Բ. Պուտին, Новый интеграционный проект для Евразии — будущее, которое рождается сегодня, Известия, 3 октября, 2011, <http://izvestia.ru/news/502761#ixzz2wEZojC1Q> (30.03.2014):



ինտեգրացիոն գործընթացներից: Արդեն 2007 թ. հոկտեմբերին Բելառուսի, Ղազախստանի և ՌԴ-ի նախագահներն ստորագրեցին ՄՄ ստեղծելու պայմանագիրը, որի մասին համաձայնություն էր ձեռք բերել դեռևս 2006 թ. Սոչիում կայացած ԵՏՀ-ի ոչ պաշտոնական հավաքի ժամանակ<sup>243</sup>: Կարծում ենք՝ սա մինչ այդ ձեռնարկված միջոցառումներից ամենաարդյունավետն էր, որով, նպատակներ սահմանելուց բացի, կատարվեցին գործնական քայլեր: Երեք երկրների միջև ՄՄ-ն սկսեց գործել 2010 թ. հունվարի 1-ից: Մաքսային միությունը տնտեսական ինտեգրման ավելի բարձր մակարդակ է, երբ միության ներսում նվազեցվում կամ ամբողջությամբ վերացվում են առևտրային սահմանափակումները: Յուրաքանչյուր երկիր միությունից դուրս կիրառում է նախապես որոշված միասնական արտաքին առևտրային քաղաքականություն: Այսպիսով, ի տարբերություն ազատ առևտրի գոտու, Մաքսային միության դեպքում մասնակից երկրների կողմից այլ երկրների հետ հարաբերություններում կիրառվում է միասնական և կորորդինացված մաքսային քաղաքականություն<sup>244</sup>: 2011 թ. նոյեմբերի 8-ին ՌԴ-ի, Բելառուսի և Ղազախստանի նախագահները հռչակագիր ընդունեցին ՄՏՏ ստեղծելու մասին, որն իր գործունեությունը սկսեց 2012 թ. հունվարի 1-ից<sup>245</sup>: 2013 թ. սեպտեմբերի 3-ին ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը Մոսկվա կատարած այցի շրջանակներում հայտարարեց ՀՀ-ի ՄՄ-ին միանալու որոշման մասին՝ դառնալով ՄՄ չորրորդ անդամ երկիրը<sup>246</sup>: 2015 թ. հունվարի 1-ից Հայաստանը դարձավ ՄՄ և Եվրասիական տնտեսական միության անդամ: Այսինքն՝ ՀՀ արտաքին մաքսային քաղաքականությունը ենթարկվում է միության շրջանակներում ընդունված ընդհանուր կանոնների: ԵՄ-ի հետ տնտեսական բովանդակության ցանկացած փաստաթղթի ընդունումը նշանակում է համաձայնեցում ԵԱՏՄ-ի շրջանակներում:

Արդյունքում, Հայաստանը 2013 թ. նոյեմբերին Վիլնյուսում ոչ թե նախաստորագրեց ասոցացման համաձայնագիրը, այլ ԵՄ-ի հետ միասին համատեղ հայտարարությամբ հանդես եկան՝ «վերահաստատելով իրենց հանձնառությունը ավելի զարգացնել և ամրապնդել Արևելյան գործընկե-

<sup>243</sup> Տե՛ս Eurasian Economic Integration: Facts and Figures, Eurasian Economic Commission, 2013, [http://eurasiancommission.org/ru/Documents/broshura26Body\\_ENGL\\_final2013\\_2.pdf](http://eurasiancommission.org/ru/Documents/broshura26Body_ENGL_final2013_2.pdf), p. 3 (14.06.2015):

<sup>244</sup> Տե՛ս Հայրապետյան Գ., 2013, Տնտեսական ինտեգրում և գլոբալացում, դասախոսություն, ԵՊՀ, [http://users.freenet.am/~grigorh/files/World\\_Economy4.pdf](http://users.freenet.am/~grigorh/files/World_Economy4.pdf) (14.06.2015):

<sup>245</sup> Տե՛ս Декларация о формировании Единого экономического пространства Республики Беларусь, Республики Казахстан и Российской Федерации, 2011 Кремлин.ru [http://www.kremlin.ru/ref\\_notes/802](http://www.kremlin.ru/ref_notes/802) (30.03.2012):

<sup>246</sup> Տե՛ս ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը և ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը ստորագրել են համատեղ հայտարարություններ, 03.09. 2013, <http://www.president.am/hy/press-release/item/2013/09/03/President-Serzh-Sargsyan-and-President-Vladimir-Putin-joint-statement/> (14.06.2015)

րության շրջանակներում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ոլորտներում համապարփակ համագործակցությունը»<sup>247</sup>: Վիլնյուսից հետո ՀՀ – ԵՄ հարաբերություններում որոշակի դադարի փուլ էր, երբ անհստակություն կար երկկողմ հարաբերությունների հետագա ձևաչափի վերաբերյալ: Գրեթե մեկ տարի այդ անհստակությունը պահպանվեց: Հայաստան – ԵՄ հարաբերությունների նոր շրջափուլի մեկնարկը տրվեց 2014 թ. նոյեմբերին Բրյուսելում, երբ Հայաստանը և ԵՄ սկսեցին քննարկել այն ոլորտները, որոնց շուրջ հետագայում պետք է սկսվեն բանակցություններ: Բացի այդ՝ բանակցությունների այս նոր փուլը, ըստ մեզ, ավելի ռեալ էր և հաշվի էր առնում այն իրականությունը, որը ձևավորվել էր Հայաստանի՝ ԵՄ-ին անդամակցելու որոշումից հետո: Այս նպատակով ստեղծվեց աշխատանքային խումբ, որն ամիսներ շարունակ զբաղված էր ոլորտների հստակեցմամբ և նախորդ ասոցացման համաձայնագրի այն դրույթների պահպանմամբ, որոնք չեն հակասում ԵԱՏՄ անդամակցությանը: Աշխատանքների երկրորդ փուլը մեկնարկեց հունվարին Երևանում, երբ Հայաստանն արդեն ԵԱՏՄ անդամ էր:

«Քննարկումների արդյունքում մենք եկանք այն եզրակացության, որ ժամանակն է Հայաստանի հետ բանակցություններ սկսելու: Սակայն դրա համար անհրաժեշտ է ստանալ Եվրոպական խորհրդարանի մանդատը: Մենք արդեն դիմել ենք այդ մանդատը ստանալու համար, սակայն դեռևս այն չենք ստացել»,— Երևանում հայտարարել էր Եվրամիության ընդլայնման հարցերով և Եվրոպական հարևանության քաղաքականության հանձնակատար Յոհաննես Խանը<sup>248</sup>:

Սպասվում էր, որ այդ մանդատը Եվրախորհրդարանը կտրամադրեր մինչ Ռիգայի գազաթաժողովը, սակայն ՀՀ փոխարտգործնախարար Կարեն Նազարյանը մայիսի 27-ին Ազգային ժողովում հայտարարել է, որ բանակցությունները կմեկնարկեն այն բանից հետո, երբ դրանց մանդատը հաստատվի ԵՄ խորհրդի առաջիկա նիստում (հունիսի 25–26): Մանդատը ենթադրում է, որ Եվրախորհրդարանը համաձայնություն կտա ԵՄ-ին կրկին բանակցություններ սկսելու Հայաստանի հետ:

Մայիսի 21–22-ը Ռիգայում կայացավ Արևելյան գործընկերության երկրների համաժողովը, որն ուկրաինական իրադարձությունների արդյունքում ձևավորած աշխարհաքաղաքական նոր իրավիճակի պայմաններ

<sup>247</sup> Տե՛ս Նախագահի համար Վիլնյուսը վերջնակետ չէր. Վիլնյուսից հետո կյանքը շարունակվում է, Ազատություն n/կ, 30.11.2013, <http://www.azatutyun.am/content/article/25185536.html> (14.06.2015):

<sup>248</sup> Տե՛ս Հայաստանը և ԵՄ-ը կստորագրեն «Անցիպիա համաձայնագիր-լայթը», 21.05.2015, <http://www.verelq.am/hy/node/1505> (14.06.2015):

րում առաջին հանդիպումն էր<sup>249</sup>: Համաժողովը չի կարելի բնութագրել որպես շրջադարձային, սակայն այն նոր մեկնարկ է ԵՄ–ի և մասնակից վեց երկրների միջև, քանի որ ներկայումս ավելի հստակեցվեց համագործակցության ձևաչափն առանձին երկրների հետ: 2009 թ. Արևելյան գործընկերության ծրագրի գործարկման ժամանակ բոլոր վեց երկրները, կարծես թե համահավասար հարթությունում էին, և առաջարկվող գործիքակազմը գրեթե նույնն էր, սակայն վերջին հինգ տարիները երկրներից յուրաքանչյուրի համար հստակեցրին առաջնահերթությունները և համագործակցության ցանկալի սահմանը: Այսպիսով՝ ձևավորվեց երկրների խումբ, որոնցից յուրաքանչյուրին ԵՄ–ն անհատական մոտեցում կցուցաբերի: Առաջին խմբի մեջ մտնում են Ուկրաինան, Վրաստանը և Մոլդովան, որոնց աշխարհաքաղաքական ընտրանքը կանգնել է ԵՄ–ի հետ հարաբերությունների խորացման՝ ընդհուպ ԵՄ–ն անդամակցելու վրա, երկրորդի մեջ Հայաստանն ու Բելառուսն են, որոնց հետ համագործակցության ժամանակ ԵՄ–ն ստիպված է հաշվի առնել այն հանգամանքը, որ երկրները Եվրասիական տնտեսական միության անդամ են, իսկ երրորդ խմբում մեկուսացման մեջ հայտնված Ադրբեյջանն է, որը Եվրոպական հավակնություններ չի ցուցաբերում, սակայն էներգետիկ անվտանգության տեսանկյունից մեծ հետաքրքրություն է ներկայացնում հենց ԵՄ–ի համար<sup>250</sup>:

Ռիզայի գազաթափողովը միջազգային հարաբերությունների համակարգում կատարված ձևափոխություններից հետո առաջին հավաքն էր, որը բեկումնային չէր, սակայն մեծ նշանակություն ունեցավ ՀՀ–ի համար: Ռիզայի գազաթափողովի ընթացքում Հայաստանն ու ԵՄ–ն քննարկեցին հիմնական չորս հարցերը, որոնց շուրջ էլ հետագայում կհամագործակցեն կողմերը: Հարցերի շարքում են վիզայի ռեժիմի դյուրացման խնդիրները, Հայաստանի բաց երկնքի քաղաքականությունն ու դրա ընձեռած հնարավորությունները, «Հորիզոն 2020» ծրագրում հայկական կողմին ներգրավելու հեռանկարը և, իհարկե, այն ոլորտների հստակեցումը, որոնց շուրջ հետագայում պետք է կողմերը պայմանագիր ստորագրեն:

2013 թ. հոկտեմբերի 23–ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է ընդունել «Հայաստանի Հանրապետությունում մրցունակ և կայուն ավիափոխադրումների ծառայությունների մատուցման ծրագրի և ծրագրի իրականացման միջոցառումների մասին», որով հռչակ-

<sup>249</sup> Տե՛ս Ա. Բարսեղյան, Հայաստան – ԵՄ պայմանագրի բովանդակությունը աշխարհաքաղաքական մրցակցության լակմուսը կլինի, 6.06.2015, <http://politics.am/?p=187&l=am%2Fhayastan-em+paymanagri+bovandakutyuny+ashxarhaqaxaqakan+mrcakcutyan+lakmusy+klini> (14.06.2015):

<sup>250</sup> Տե՛ս նույն տեղում:

վել է քաղաքացիական ավիացիայի և օդային հաղորդակցության ոլորտում Հայաստանում բաց երկնքի քաղաքականությունը<sup>251</sup>: Շուտով այս քաղաքականության ընդունման երկու տարին կլրանա, սակայն Հայաստանում ավիացիոն չվերթերի գերակշիռ մեծամասնությունը կատարվում է Ռուսաստանի տարածքով, որը մտահոգիչ գործոն է ԵՄ–ի համար: Այս ընթացքում որոշ եվրոպական ավիափոխադրողներ ցանկացել են հաստատվել հայկական շուկայում, սակայն ռուսական ընկերությունները անբարեխիղճ մրցակցային պայմաններ ապահովեցին՝ դուրս մղելով եվրոպական ընկերություններին: Ներկայումս ԵՄ–ն փորձում է Հայաստանի հետ խորացնել համագործակցությունն այս ոլորտում և որոշակի դիրքեր զբաղեցնել հայկական ավիացիոն շուկայում:

Ոչ պակաս կարևոր են նաև վիզային ռեժիմի դյուրացման հետ կապված հարցերը, որտեղ ևս վերջին տարիներին նկատելի առաջընթաց կա: Ճիշտ է, առայժմ ՀՀ քաղաքացիների համար վիզային ռեժիմի դեպի շենգեն գոտի երթևեկելը ոչ այնքան մոտ ապագայի հարց է, սակայն այս ուղղությամբ նկատելի քայլեր են կատարվում:

Հայաստանի համար Ռիգայի գազաթափողովի ձեռքբերումներից է ԵՄ–ի գիտահետազոտական հանրույթի մեջ ընդգրկվելու շուրջ բանակցությունների հստակեցումը: Խոսքը «Հորիզոն 2020» ծրագրի մասին է, որի մեջ ներառվել են Մոլդովան ու Ուկրաինան, իսկ Հայաստանն ու Վրաստանը՝ մոտ ապագայում: «Հորիզոն 2020»-ը ԵՄ հետազոտությունների և նորարարության երբևէ եղած ամենամեծ ծրագիրն է, որի բյուջեն կազմում է շուրջ 80 միլիարդ եվրո՝ նախատեսված 7 տարիների համար. այն մեկնարկել է 2014 թ. և կշարունակվի մինչ 2020-ը<sup>252</sup>:

«Հորիզոն 2020» ծրագրում մրցութային թեմաները շատ տարբեր են՝ բիո-արդյունաբերության, էներգիայի արդյունավետության, ծովերի և օվկիանոսների ներուժի ընդարձակման, մաքուր օդի, անվտանգ սննդի, հակաբիոտիկների նորարարության, ինչպես նաև հանցավորության և ահաբեկչության դեմ պայքարի, արտաքին և սահմանային անվտանգության, հետազոտությունների ոլորտում երիտասարդ սերնդի ներգրավվածության, գենդերային հավասարության և կանանց նորարարության, եվրոպական ինքնության և մշակութային ժառանգության, Եվրոպան որպես համաշխարհային դերակատար տեսնելու և այլն: Այս ամենը դրսևորման լավագույն հարթակ կդառնա հայ գիտնականներ

<sup>251</sup> Տես «Հայաստանի Հանրապետությունում մրցունակ և կայուն ավիափոխադրումների ծառայությունների մատուցման ծրագրի և ծրագրի իրականացման միջոցառումների մասին», N 1248-Ս, 23.10.2013, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=86975> (14.06.2015):

<sup>252</sup> Տես Հայաստանը՝ «Հորիզոն 2020»-ում, Արմմեդիա, 27.06.2015, <http://armedia.am/arm/news/18700/hayastany-horizon-2020-um.html> (14.06.2015):

րի և հետազոտողների համար, ովքեր մշտապես բողոքում են այդ ոլորտում մեր երկրի ընձեռած սահմանափակ հնարավորություններից: Բացի ոլորտային այս խնդիրներից՝ Ռիգայում կարևոր էր նաև Հայաստան – ԵՄ ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունների վերսկսման վերաբերյալ ձեռք բերված պայմանավորվածությունները, որի համար առայժմ հարկ է սպասել ԵՄ–ի կողմից տրվող մանդատին: Խոսակցություններ են շրջանառվում, որ պայմանագրում կլինեն ոչ միայն քաղաքական, այլ նաև տնտեսական համագործակցությանը նվիրված կետեր: Եթե իսկապես այդ համաձայնագրի մեջ ներառվեն տնտեսական բաղադրիչն ընդգրկող կետեր, ապա փաստացի Հայաստանը կդառնա ԵՄ–ն և ԵԱՏՄ–ն իրար միացնող առաջին կամուրջը:

Վիլնյուսից հետո ՀՀ–ն փորձում է իր արտաքին քաղաքականության մեջ վերականգնել կորած հաշվեկշիռը (բալանսը) և ջանքեր է գործադրում, որպեսզի տնտեսական բլոկում ևս որոշակի հավասարակշռություն պահպանվի: Այդ մասին են վկայում մայիսին Հայաստանի և Միացյալ Նահանգների միջև կնքված «Առևտրի և ներդրումների շրջանակային նոր համաձայնագիրը», որը կարևոր հիմք կլինի երկու երկրների միջև ներդրումների և առևտրի խթանմանն ուղղված ավելի շատ հնարավորությունների և հարմար պայմանների ստեղծման համար<sup>253</sup>: Ցանկալի կլիներ, որ նմանատիպ սցենար կրկնվեր նաև ԵՄ – Հայաստան տնտեսական հարաբերությունների պարագայում, հակառակ դեպքում Հայաստանում էլ ավելի կմեծանա Ռուսաստանի տնտեսական ներկայացվածությունը, որն էլ ավելի ծանրակշիռ լծակ կդառնա ՌԴ–ի ձեռքում՝ ճնշումներ գործադրելու Հայաստանի վրա՝ հասնելու ներքաղաքական և արտաքին քաղաքական ցանկալի արդյունքների: Հայաստանի ներկայիս իրավիճակը որոշակի նմանություններ ունի Երկրորդ համաշխարհային պատերազմում Ֆինլանդիայի իրավիճակի հետ, երբ վերջինս ստիպված էր հավասարակշռություն պահպանել ՆԱՏՕ–ի և Վարշավյան պակտի երկրների հետ: Արդյունքում քաղաքագիտական բառարաններում գերմանացի քաղաքագետ Ռիչարդ Լովենտալի կողմից 1961 թ. ներմուծվեց ֆինլանդիզացիա եզրույթը<sup>254</sup>, որը բնութագրում է ֆենոմենը, երբ փոքր երկիրը, որը ագրեսիվ հարևանի կողքին է, համաձայնում է ընդունել արտաքին քաղաքականության ոլորտում ինքնիշխանության կրճատումը, որպեսզի պահպանի իր անկախությունը: Այս կերպ, ինչպես վկայում են այդ քաղաքականության կետողները, Ֆինլանդիան, որն ընդամենն ուներ հինգ միլիոն բնակչություն և 800–մղոնանոց սահման

<sup>253</sup> Տե՛ս Վաշինգտոնը 16 տարի անց փոխում է տնտեսական քաղաքականությունը Հայաստանում, 12.05.2015, <http://politics.am/?p=183&l=am/> (14.06.2015):

<sup>254</sup> Stå G. H. Quester, Finlandization as a problem or opportunity, American academy for political and social science, Vol 512, 1990, Jstore

Ռուսաստանի հետ, կարողացավ պահպանել իր անկախությունը և չմտնել խորհրդային երկրների ցուցակում<sup>255</sup>:

Ներկա պահին ամերիկացի նշանավոր քաղաքագետ Ջվիգնև Բժեզինսկին կարծում է, որ այն լավ բաղադրատոմս է Ուկրաինայի համար, և ԵՄ-ն պետք է շարժվի այդ ուղղությամբ, որպեսզի խուսափի համաշխարհային նոր պատերազմի վերսկսումից<sup>256</sup>:

Սեպտեմբերի երեքի որոշումից առաջ Հայաստանի կարգավիճակը նման էր Ֆինլանդիայի կարգավիճակին, և ընտրվեց գրեթե նույն ուղին, ինչ Ֆինլանդիան՝ նախորդ դարի կեսերին. արտաքին քաղաքականության մեջ ռազմավարական շրջադարձ կատարելու և զիջումների գնալու հաշվին Հայաստանը որոշակիորեն պահպանեց իր անկախությունը և խուսափեց այն դեպքերից, որոնք ավելի ուշ տեղի ունեցան ուկրաինական Մայդանում:

Հայաստանի նման փոքրիկ երկրի համար, որը նաև պատերազմական իրավիճակում է, մայդանային սցենարի զարգացումը կարող էր կործանարար լինել, սակայն ներկա իրավիճակի պահպանումը, երբ ՌԴ-ն վերահսկում է ՀՀ-ի տնտեսության ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտները, ազդեցություն է ունենում արտաքին քաղաքականության կարևորագույն որոշումների վրա, նույնպես ցանկալի չէ: Այս պարագայում Հայաստանի համար կարևոր է ընտրել նոր ռազմավարություն, որը թույլ կտա միաժամանակ նստել երկու աթոռների վրա և խուսափել աշխարհաքաղաքական մրցակցության բաժանարար գիծը լինելուց: ԵՄ – Հայաստան – ՌԴ եռյակում, ըստ մեր դիտարկումների, Հայաստանը պետք է դառնա ոչ թե կռվան, այլ հաշտեցնող օղակ:

Առաջարկում ենք Հայաստանի համար մի մոդել, որը հաշվի կառնի ձևավորված աշխարհաքաղաքական իրողության բոլոր նրբությունները, և իրականությանը համահունչ քաղաքական օրակարգ կձևավորի: Մոդելի համար ընտրել ենք արմենիզացիա անվանումը՝ հույս ունենալով, որ այն հետագայում իսկապես օրինակ կձառայի այն երկրների համար, որոնք կհայտնվեն նման իրավիճակում:

Հայաստանը ԵՄ-ի համար հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն որպես առանձին երկիր, այլ նաև ավելի մեծ տարածաշրջանի մասնիկ, որը սահմանակցում է ԵՄ-ին, ուստի կարևոր է, որ ԵՄ-ն շարունակի տարածաշրջանային մոտեցում ցուցաբերել և անհատական գործընկերու-

<sup>255</sup> Տե՛ս James Kirchick, Finlandization is not a solution for Ukraine, The American Interest, 27.07.2014, <http://www.the-american-interest.com/2014/07/27/finlandization-is-not-a-solution-for-ukraine/> (14.06.2015)

<sup>256</sup> Տե՛ս Terry Atlas, Brzezinski Sees Finlandization of Ukraine as Deal Maker, Bloomberg, 11.04.2014, <http://www.bloomberg.com/news/articles/2014-04-11/brzezinski-sees-finlandization-of-ukraine-as-deal-maker> (14.06.2015):

թյան մակարդակում պայքարի այն սպառնալիքների դեմ, որոնց մասին արդեն իսկ խոսել ենք վերևում՝ ԵԱԴ ռազմավարության մասին հատվածում: Այդ սպառնալիքներից հատկապես կառանձնացնեմ տարածաշրջանային կոնֆլիկտների առկայությունը, պետությունների քաղաքական անկարողությունը և դրանց ինստիտուցիոնալ-գործառնական կազմալուծումը («ճախողված պետություններ»), կազմակերպված հանցավորությունը:

Հայաստանը դեռևս 2013 թ. հունիսի դրությամբ պատրաստ էր ստորագրելու ասոցացման համաձայնագիրը, ուստի շատ ուրտներում իր առջև գրանցել էր բարձր ցուցանիշներ: Կարևոր է, որ հետագայում ևս դրված նշաձողն էլ ավելի բարձրացվի, որպեսզի նպաստի Հայաստանի դեմոկրատացմանը, կայացած իրավական պետության ձևավորմանը: Եթե այս ամենը պրոյեկտենք արմենիզացիայի հայեցակարգի վրա, ապա կստանանք հետևյալ պատկերը:

Հայաստանն իր քաղաքական համակարգով, ժողովրդավարության բարձր մակարդակով, իրավական համակարգով և երկրում անցկացվող տնտեսական բարեփոխումներով, ազատ մամուլի և մարդու իրավունքների պաշտպանվածության մակարդակով մշտապես պետք է համապատասխանի ԵՄ-ի դրած չափանիշներին և մշտապես աշխատի կատարելագործվել: Կարևոր է, որ նույնիսկ ԵԱՏՄ անդամակցությունից հետո ԵՄ-ն չնվազեցնի իր ակտիվ գործունեությունը Հայաստանում և իր գործիքակազմով, որոնցից է *ավելին ավելիի դիմաց* խթանի Հայաստանում նշված ուրտների զարգացումը: Հակառակ պարագայում Հայաստանը, հայտնվելով մեկ այլ համակարգի մեջ, որտեղ համակարգի տարրերը Հայաստանից ցածր մակարդակի վրա են իրենց ժողովրդավարության, մարդու իրավունքների պաշտպանության և իրավական պետության մակարդակով, կարող է բացասական ազդեցության ենթարկվել և ձուլվել այդ համակարգին: Իսկ այդ ամենն ինքնին սպառնալիք է ոչ միայն Հայաստանի, այլև հենց ԵՄ-ի համար, որն իր սահմանների անմիջական հարևանությամբ կունենա ինստիտուցիոնալ գործառնական առումով անկատար պետություն:

Կարևոր է նաև, որ ԵՄ-ն ակտիվացնի իր տնտեսական քաղաքականությունը Հայաստանում: Չնայած այն հանգամանքին, որ ԵՄ-ն Հայաստանի համար թիվ մեկ առևտրային գործընկերն է, որին բաժին է ընկնում Հայաստանի առևտրի ընդհանուր ծավալի 30 %-ը, սակայն կարևոր է նաև, որ ԵՄ-ն մեծացնի սեփական կապիտալով գործող ընկերությունների թիվը Հայաստանում: Մինչ այժմ ԵՄ-ն Հայաստանին գումարներ է տրամադրել հիմնականում որոշակի դրամաշնորհների տեսքով կամ իրականացրել է բարեփոխումների ծրագրեր, մինչդեռ ՌԴ-ն, նպաստ չբերելով Հայաստանի քաղաքա-իրավական համակարգի բարելավմանը, գումարների

հոսքն ուղղել է ռուսական կապիտալի մեծացմանը ՀՀ-ում: Ներկա փուլում կարևոր է դրամաշնորհային ծրագրեր իրականացնելուց զատ մասնակցություն ունենալ և ուղղակի ներդրումներ կատարել ՀՀ տնտեսության մեջ, ինչպես որ սկսել է վարվել ԱՄՆ-ն: Դա հնարավորություն կտա ԵՄ-ին որոշակի հավասարակշռության բերելու ՀՀ տնտեսության՝ դեպի ՌԴ ուղղված նժարը:

Եթե Հայաստան – ԵՄ սպասվելիք նոր փաստաթուղթն ընդգրկի տնտեսական դրույթներ ևս, փաստացիորեն դա կդառնա ոչ միայն ՀՀ տնտեսության դիվերսիֆիկացմանն ուղղված քայլ, այլ ԵՄ – ԵԱՏՄ երկխոսության և համագործակցության մեկնարկի ազդարար: Իսկ ԵՄ-ն արդեն իսկ աշխարհի տարբեր հատվածներում տեղակայված մաքսային միությունների հետ համագործակցության մեծ փորձ ունի:

Այսպես, չնայած նրան, որ ԵՄ-ն Հարավային Ամերիկայում գործող ՄԵՐԿՈՍՈՒՐ մաքսային միության հետ բանակցություններ է վարում, այն նաև առևտրա-տնտեսական լավ հարաբերություններ ունի այդ միության հիմնադիր երկրներից Բրազիլիայի հետ: Արդյունքում ներկա դրությամբ ԵՄ-ն Բրազիլիայի թիվ մեկ առևտրային գործընկերն է և ամենամեծ ներդրումներ կատարողը<sup>257</sup>: ԵՄ-ն ինդիվիդուալ մակարդակով սերտ համագործակցում է նաև Ուրուգվայի հետ, որի համար երկրորդ առևտրային գործընկերն է<sup>258</sup>:

ԵՄ-ի և մեկ այլ մաքսային միության հետ համագործակցության լավ օրինակ է նաև Հարավարևելյան Ասիայում գտնվող ԱՍԵԱՆ-ի երկրների հետ համագործակցությունը: Սկզբնական շրջանում, երբ բավականին բարդ էր դասավորվում ԵՄ-ի և ԱՍԵԱՆ-ի երկրների միջև ազատ առևտրի գոտու շուրջ համագործակցությունը, ԵՄ-ն որոշեց երկկողմ հարաբերություններ զարգացնել անդամ երկրների հետ՝ հեռանկարում ունենալով միության հետ «Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու» պայմանագրի ստորագրում<sup>259</sup>:

Նույն կերպ Հայաստանը կարող է դառնալ առաջին օղակը, որի հետ համագործակցությունից կսկսվեն ԵԱՏՄ-ի հետ բանակցությունները: Միևնույն ժամանակ ՌԴ-ն ևս կարծես թե դրական քայլ է կատարում՝ չխոչընդոտելով Հայաստան – ԵՄ հարաբերությունների նոր փուլին: Այս մասին Միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նա-

<sup>257</sup> Տե՛ս Brazil, Trade, European Commission, <http://ec.europa.eu/trade/policy/countries-and-regions/countries/brazil/> (14.06.2015):

<sup>258</sup> Տե՛ս EU Relations with Uruguay, European Union external action, [http://eeas.europa.eu/uruguay/index\\_en.htm](http://eeas.europa.eu/uruguay/index_en.htm) (14.06.2015):

<sup>259</sup> Տե՛ս Framework Agreement on Comprehensive Partnership and cooperation between the European Community and its Member States and the Republic of Indonesia, 14032/09, Brussels, 21 October 2009, [http://eeas.europa.eu/delegations/indonesia/documents/eu\\_indonesia/eu\\_idnpca\\_en.pdf](http://eeas.europa.eu/delegations/indonesia/documents/eu_indonesia/eu_idnpca_en.pdf) (14.06.2015):



խարար, ՀՀ փոխվարչապետ Վաչե Գաբրիելյանը Tert.am-ի հետ զրույցում հայտարարել էր, որ ԵՏՄ անդամ երկրների հետ անհամաձայնություն չկա ԵՄ-ի հետ հարաբերություններ սկսելու հարցով<sup>260</sup>:

Մինչ Ուկրաինայում քանդվում են ԵՄ – Ռուսաստան կապող կամուրջները, Հայաստանը պետք է պոզիտիվ դերակատարում ունենա երկու գերտերությունների միջև հարաբերությունների կարգավորման գործում: Այն կարող է սկսվել փոքրիկ տնտեսական հարցերի շուրջ Հայաստան – ԵՄ երկխոսությունից՝ հետագայում վերաճելով երկու տնտեսական բլոկների միջև ամուր համագործակցության:

Բացի այդ՝ Հայաստանը, ԵՄ-ի աջակցությամբ և օգնությամբ կատարելագործելով ժողովրդավարության, ազատ մամուլի, մարդու իրավունքների պաշտպանության, կրթության մակարդակը, ԵԱՏՄ համակարգի մեջ կարող է լինել փոփոխություններ մտցնող տարրը՝ դառնալով միության բաղադրիչ:

Այսպիսով՝ արմենիզացիայի մոդելն իրենից ենթադրում է եվրոպական չափանիշներին համապատասխանող ժողովրդավարական-իրավական պետություն, որն իր արժեքային համակարգով մոտ է եվրոպականին, սակայն հանգամանքների բերումով մեկ այլ համակարգի մեջ է և կապող կամուրջ է երկու բլոկների միջև: Այս կապակցությամբ ՀՀ-ն պետք է նախաձեռնությունն իր ձեռքը վերցնի և ոչ թե բավարարվի փոքրիկ պետության իր դերով, այլ զգուշավոր քաղաքականության շնորհիվ դառնա փոքրիկ, սակայն ծանրակշիռ պետություն, որը կարող է նպաստել աշխարհաքաղաքական բարդ խնդիրների լուծմանը: Կարևոր է, որ ԵՄ-ն և Ռուսաստանն էլ գիտակցեն, որ հակամարտության սրումը կարող է կործանարար հետևանքներ ունենալ, ուստի պետք է սկսեն համագործակցությունը և զիջողականություն ցուցաբերեն: Այս ամենի առաջին նախանշանները երևում են, երբ ԵՄ-ն փորձում է նոր պայմանագիր կնքել արդեն իսկ ԵԱՏՄ անդամ Հայաստանի հետ, իսկ Ռուսաստանի կողմից դիմադրություն կարծես թե չկա:

<sup>260</sup> Տե՛ս ԵՏՄ անդամ երկրների հետ անհամաձայնություն չկա ԵՄ-ի հետ հարաբերություններ սկսելու հարցով, Վաչե Գաբրիելյան, Tert.am, 15.06.2015, <http://www.tert.am/am/news/2015/06/15/gabrielian/1706364> (15.06.2015):

## CAN ARMENIA SERVE AS A LINKING BRIDGE IN EU– EEURELATIONSHIP?

**ANNA BARSEGHYAN**

The internal stability and strength of the Republic of Armenia (the RA) is largely conditioned by the role of Armenia in the international relationship system as well as by the direct influence of its foreign policy.

Main provisions of the foreign policy of Armenia are included in the RA National Security Strategy (hereinafter the NSS), adopted in 2007. Before the announcement made on September 3, 2013, of intent of Armenia to join the Eurasian Economic Union (hereinafter the EEU), the core principle laying in the basis of Armenia's foreign policy was complementarism, or the principle of multi-vectorism.<sup>261</sup> This implied that Armenia did not have to make its choice and give a clear preference for one of the active regional role-players in the South Caucasus, but had to build equally close relationship with all the parties involved. Apparently, Armenia was one of the few countries in the post-Soviet period, which succeeded in maintaining such a balanced foreign policy for nearly two decades. Being a CSTO member, Armenia was effectively extending its relationship with NATO. As a member of CIS, Armenia demonstrated rather good results in the EU projects. Of course, it should be noted that all the above-mentioned was largely contributed by the favorable environment in international relationships where the serious global forces would give priority to the policy of competition rather than confrontation. Nevertheless, it was clear that the changes in relations between Russia and the West, particularly, the Russian Federation and the EU, would sooner or later bring Armenia before a certain choice. Pursuant to this logic, we have applied the method of glocalistics among the main methods used in this work, attempting to show how the global processes, in particular, the discrepancies between the EU and Russia affect the local situation in Armenia.

The decision of Armenia to join the EEU was qualified by political circles as unexpected and shocking, though even a brief review of the RA NSS could make it obvious that if Armenia was forced to choose between the EU and the EEU, it would give preference to the Eurasian Union led by Russia.

Thus, it is stated in the RA NSS that the establishment of close relationship with the EU is in Armenia's long-term interests and that the development and

<sup>261</sup> See S. Minasyan "Several conceptual bases of the RA foreign policy" 12.03.2009, [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=2227](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2227)

strengthening of relationship with European institutions, primarily, the EU and its member states, is one of the priorities of the RA foreign policy: “Further development of multilateral cooperation with the EU will have its positive impact on strengthening democracy and sustaining the rule of law, protecting human rights and fundamental freedoms”.<sup>262</sup> Development of trade and economic relations with the EU and active participation in the EU-sponsored regional programs is also highlighted in the strategy.

The NSS gives much importance to the Armenian–Russian relations as well, particularly stating that “they carry strategic nature, based on the essential role of Russia in ensuring the RA security, on the traditionally friendly relationship and the large-scale trade–economic cooperation between the two countries, on Russia’s role in settlement of Nagorno–Karabakh conflict, as well as presence of the large Armenian community in Russia”.<sup>263</sup>

One of the primary requirements or functions of the state is the security of its borders. In its classical definitions, security is associated with military force<sup>264</sup>. This has become the guiding approach for the RA, which gives priority to the security of borders, considering that, first and foremost, it is necessary to have a state territory with guaranteed safety, and only then consider building a lawful and democratic state.

The Artsakh conflict<sup>265</sup> is a factor which plays a significant role in building the RA national security and foreign policy. The threat to the security of borders of Artsakh is considered a direct threat to the RA, and besides, Armenia has repeatedly shown by its foreign policy that the independence of Artsakh is not a subject of speculation and Armenia will never make any concessions in this regard. It should be also noted that, despite the existence of objective conditions, which indeed make the security of Artsakh a key priority for the RA security system, this issue has undergone the process of securitization, the model of which has been introduced by the Copenhagen School of Security Studies<sup>266</sup>. Overall, the model of securitization can be briefly presented as such: the political elite picks a problem existing in the society (it is preferable that this problem does exist, so that the model could appear actual and have impact on large circles of the society), politicizes it, packages it, then securitizes it, which means the

<sup>262</sup> See “National Security Strategy of the Republic of Armenia”, Yerevan, 26.01.2007, p. 17 [http://www.mfa.am/u\\_files/file/doctrine/Doctrinarm.pdf](http://www.mfa.am/u_files/file/doctrine/Doctrinarm.pdf)

<sup>263</sup> See the same work, p. 15 [http://www.mfa.am/u\\_files/file/doctrine/Doctrinarm.pdf](http://www.mfa.am/u_files/file/doctrine/Doctrinarm.pdf)

<sup>264</sup> See B. Buzan, L. Hansen, “The Evolution of International Security Studies”, Cambridge University Press, New York 2010, p. 11.

<sup>265</sup> See “National Security Strategy of the Republic of Armenia”, Yerevan, 26.01.2007, p. 13 [http://www.mfa.am/u\\_files/file/doctrine/Doctrinarm.pdf](http://www.mfa.am/u_files/file/doctrine/Doctrinarm.pdf)

<sup>266</sup> See W. Hughes, L. Y. Meng, *Security studies*, Routledge, London, 2001, p. 93.

society starts to regard it as a threat which needs certain response.

In this way, certain issues, based on objective and subjective factors, are separated from real or imaginary issues existing in the country and are associated with the security. Although the intentions to preserve the independence of Artsakh and the victories won by the Armenian people are objective, however, if taken through the prism of Copenhagen school, the Artsakh conflict is clearly seen as securitized. Obviously, we are extremely sensitive to Artsakh-related issues, and any concession made by the government for the sake of Artsakh becomes acceptable in the eyes of the Armenian society.

Thus, the decision made on September 3 on joining the Economic Union was justified by security reasons. The political circles debated that if Armenia preferred signing the Association Agreement with the EU, Russia would deprive Armenia of Artsakh. Loss of Artsakh is a threat to us, hence the adoption of the decision did not cause a large wave of discontent among the general society of Armenia.

A large amount of levers of pressure is at Russia's disposal to be used on Armenia at any time for achieving the desired results. One of the essential tools among the others is the economic factor. Russia is Armenia's number one trading partner: the trade turnover with Russia in 2014 amounted to more than 1,400 billion dollars, the lion's share of which is due to the products imported from Russia.<sup>267</sup>

The money transfers of Armenian citizens working in Russia are of great importance for Armenia. These transfers do not only provide living to some part of the Armenian population, but are also important in terms of mitigation of economic indicators. They to some extent reduce the adverse balance of payments.

The Russian capital also plays a significant role in Armenia. Within the period between 1988 and September 2014, Russian investments in Armenia comprised 4 billion 29 million 302 thousand in US Dollars of which 3 billion 104 million 411 thousand are direct investments. As of 2010, there are 1,380 enterprises in Armenia operating with Russian capital (which comprise 25.7% of all companies operating with foreign capital).<sup>268</sup>

Among these enterprises are a number of institutions carrying strategic importance for Armenia, such as "Gazprom Armenia", which is the main gas

<sup>267</sup> The data is derived from the RA MFA official web page <http://mfa.am/hy/country-by-country/ru/> (14.06.2015)

<sup>268</sup> See "Cooperation between Armenia and the Russian Federation", <http://www.cdu.ru/>, (14.06.2015)

supplier to Armenia and which also owns the Iran–Armenia gas pipeline.<sup>269</sup>

The other major company operating with Russian capital is “Electric Networks of Armenia” CJSC, which holds exclusive license for distribution of electricity in the RA territory, hence a monopoly.<sup>270</sup>

The other major company is “International Energy Corporation” CJSC. The company owns 7 hydropower plants on river Hrazdan, with the ability to produce 10% of the electricity produced in Armenia. One of the companies of strategic importance is “HrazTPP” with 1.1 million kW of total capacity of its 4 power units.<sup>271</sup>

In 2003, the management of “Metsamor” NPP was transferred to the Russian “Inter RAO UES” Company. Currently, it consists of 2 power units with total capacity of about 880 MW, with the ability to produce 30–40% of total electricity of Armenia.<sup>272</sup>

The other company of high strategic significance is “Armenian Railways” CJSC, the concession management of which was transferred to “South Caucasus Railways” CJSC under license issued for thirty years.<sup>273</sup>

The Russian capital plays an important role in Armenia’s telecom industry as well. Two major companies with Russian capital operate in this sector of the Armenian market – “ArmenTel” CJSC, with 100% of shares belonging to “VimpelCom Ltd.” Holding and “K–Telecom”, 80% of shares of which belongs to “MTS” OJSC.

Ընդհանուր առմամբ, ժողովրդավարական ռեժիմը ենթադրում է սերտ համագործակցություն պետության և քաղաքացիական հասարակության կառույցների միջև՝ որպես քաղաքական և տնտեսական կայունության գրավական<sup>321</sup>: Եվ այս օրինաչափությունն աստիճանաբար ավելի արդիական է դառնում՝ հաշվի առնելով այս ոլորտի զարգացման, ինչպես նաև ամբողջ աշխարհով ժողովրդավարության տարածման տեմպը: Ուստիև անհրաժեշտություն է առաջանում ավելի հաշվետու լինելու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների առջև, նրանց ավելի շատ ընդգրկելու այս կամ այն գործընթացում և երկրի կառավարմանն ուղղված հարցերին ու բարեփոխումներին մասնակից դարձնելու:

## 1.2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Նայած թե որ տեսանկյունից է դիտարկվում, Հայաստանում քաղաքացիական հասարակության պատմությունը կարելի է համարել կարճ կամ երկար: Ըստ եզրույթի ժամանակակից ընկալման, այն է՝ քաղաքացիական հասարակությունը որպես ժողովրդավարացման գործակալ, Հայաստանում քաղաքացիական հասարակության ձևավորումը նոր երևույթ է: Սակայն, քաղաքացիական հասարակությունը՝ ոչ ֆորմալ և ինքնակազմակերպվող միավորումների կենսագործունեության տեսքով, դարեր շարունակ եղել է հայ ազգի կենսական տարրերից մեկը: Օտար տիրապետությունների և ճնշումների ժամանակ հայ ժողովուրդը մշակել է կամավորության՝ գոյատևման ուժեղ համակարգ եկեղեցու և համայնքի ներսում<sup>322</sup>:

1922–1991 թթ. Հայաստանում խորհրդային կարգերի տարիներին երկրում քաղաքացիական հասարակության հատվածի զարգացումը կրել է սոցիալիստական համակարգի տիրապետող ինստիտուցիոնալ կառուցվածքի ազդեցությունը: Գոյություն ունեցող ֆորմալ կազմակերպությունները և միավորումները վերահսկվում էին ավտորիտար պետության կողմից, մինչդեռ ցանկացած անկախ քաղաքացիական միավորում կամ գործողություն

<sup>320</sup> ibid

<sup>321</sup> Բեգլարյան Ա. (2014), Պետության և քաղաքացիական հասարակության համագործակցության առանձնահատկությունները Հայաստանում և ազգային անվտանգությունը, 21–րդ դար, էջ 94:

<sup>322</sup> Aslanyan, S., Adibekian, A., Ajabyan, N., & Coe, B. A., *Civil Society in Armenia: From a Theoretical Framework to a Reality*, 2007, 20.

դիտարկվում էր որպես վտանգ պետական իշխանությանը: Խորհրդային դարաշրջանի «հասարակական» կազմակերպությունները մեծ մասամբ ծառայում էին պետությանը և կուսակցությանը՝ իրենց առաքելությամբ և գործունեությամբ սատարելով կոմունիստական գաղափարախոսությունը, այլ ոչ թե կամավոր նախաձեռնությունների միջոցով բավարարելով հանրային կարիքները: Սա հանգեցրեց Հայաստանում ֆորմալ քաղաքացիական հասարակության անկմանը<sup>323</sup>:

Ժամանակակից հայաստանյան քաղաքացիական հասարակության հետքերը կարելի է նշմարել 1980–ականների վերջին, երբ վերակառուցումը («պրետստրոյկա») հնարավորություն տվեց ժամանակակից սոցիալական շարժումներին ի հայտ գալու: Այդ շարժումները շատ կարևոր էին կառավարության քաղաքականության վրա ազդելու տեսանկյունից: Օրինակ՝ շարքային քաղաքացիները կարողացան ազդեցություն ունենալ 1989–ի հանրային քաղաքականության վրա, երբ հարյուր հազարավոր մարդիկ մասնակցեցին բնապահպանական շարժմանը, որն այդ ժամանակ միակ հարթությունն էր, որ ԽՍՀՄ–ը թույլ էր տալիս այսպիսի հավաքների ու շարժումների համար: Մարդիկ կազմակերպում էին գործադուլներ, հանրահավաքներ՝ բողոքելու Երևանին մոտ գտնվող ատոմակայանի շարունակական շահագործման և քիմիական գործարանի դեմ, որը շրջակա միջավայրում բաց էր թողնում թունավոր գոլորշիներ՝ ազդելով մոտակա համայնքների վրա<sup>324</sup>: Այս շարժումներն այնքան հզոր էին, որ դրանք հանգեցրին շրջակա միջավայրը խիստ աղտոտող մի քանի արդյունաբերական ձեռնարկությունների փակմանը: Թափ հավաքելով ազգային գաղափարի շուրջ մարդկանց համախմբումից՝ այս բողոքները ձգտում էին ԽՍՀՄ–ից Հայաստանի անկախացմանը: Հանրային խմբերը և հասարակական կազմակերպությունները մեծ մասամբ իրենց աջակցությունն էին հայտնում այս գաղափարներին: Հայաստանի իշխանությունները 1991–ին հայտարարեցին Խորհրդային Միությունից անջատվելու իրենց որոշման մասին: Քաղաքացիական հասարակությունը սկսեց արագորեն, բայց քառսային ձևով ինքնակազմակերպվել՝ առանց պետությունից կամ մասնավոր հատվածից որևէ էական աջակցություն ստանալու<sup>325</sup>:

1990–ական թվականներից ի վեր Հայաստանում քաղաքացիական հասարակության կառուցվածքը ձևավորվել է օտարերկրյա օգնության ազդե-

<sup>323</sup> Բեգլարյան Ա. (2014), Պետության և քաղաքացիական հասարակության համագործակցության առանձնահատկությունները Հայաստանում և ազգային անվտանգությունը, 21–րդ դար:

<sup>324</sup> Aslanyan, et al. 2007, 21:

<sup>325</sup> Հակոբյան Լ., Թադևոսյան Մ., Սարգսյան Ա., Ստեփանյան Ա. (2010), Հայաստանի քաղաքացիական հասարակությունը. անցումային փուլից դեպի համախմբում, Երևան, Քառուսթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան գրասենյակ, էջ 27:

ցությամբ: Դեպի ժողովրդավարություն աստիճանական անցման ընթացքում աճեց հասարակական կազմակերպությունների թիվը, որոնք ավելի կազմակերպված և նպատակաուղղված էին բավարարելու աճող հասարակական մտահոգությունները, ինչպիսիք էին գործազրկությունը, սոցիալական և առողջապահական կարիքները: Դրանց գործունեությունն ուղղված էր նաև ժողովրդավարական արժեքներին և մարդու իրավունքներին<sup>326</sup>:

Հայաստանում քաղաքացիական հասարակության զարգացման գործընթացում կարևոր փուլ պետք է դիտել 2009 թ. «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում կատարված փոփոխությունները: Փաթեթում վերջնական փոփոխությունների գործընթացին ավելի քան 100 հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը վկայում է դրանց՝ ազդեցության մեծանալու մասին: Քաղաքացիական հասարակության զարգացման ևս մեկ դրական արդյունք էր նաև այն, որ 2009 թ. վերջին հասարակական կազմակերպություններին հաջողվեց տեխնիկական մակարդակում հասարակության և կառավարման մարմինների միջև համագործակցություն հաստատել՝ խթանելով և արմատավորելով սոցիալական գործընկերությունը: Տեղական ինքնակառավարման 24 մարմիններ հասարակական կազմակերպությունների գործունեության համար իրենց բյուջեից սուբսիդիաներ տրամադրեցին: Մի շարք նախարարությունների կանոնադրություններում բարեփոխումներ իրականացվեցին, և կատարված լրամշակումների համաձայն՝ նրանց գործունեության առանցքային հարցերը մինչև ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնելը պետք է սահմանված կարգով քննարկվեն հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ<sup>327</sup>:

2011 թվականից քաղաքացիական հասարակության ոլորտն սկսեց ակտիվանալ, սկսեց արձարծվել «քաղաքացիական ֆորումներ» կազմակերպելու անհրաժեշտության գաղափարը: 2011 թ. փետրվարին ներկայացվեց «Քաղաքացիական հասարակության ինդեքսը. Հայաստան» զեկույցը, և փորձագետներն արձանագրեցին քաղաքացիական նախաձեռնությունների թվաքանակի աճ:

Քաղաքացիական հասարակության զարգացման գործում ներդրում է ունեցել նաև Եվրոպական միությունը, մասնավորապես «Արևելյան գործընկերություն» ծրագրի շրջանակներում: Դրա մասին վկայում է 2011 թ. աշնանը Երևանում կազմակերպված համաժողովը, որը նվիրված էր եվրաինտեգրման գործընթացում քաղաքացիական հասարակության դերին:

<sup>326</sup> ibid

<sup>327</sup> Բեգլարյան Ա. (2013), Քաղաքացիական հասարակության զարգացման գործընթացը Հայաստանում, Լրաբեր հասարակական գիտությունների, էջ 126:

Համաժողովում նշվել է, որ քաղաքացիական հասարակությունը նշանակալի դերակատարություն ունի մարդկանց միջև հարաբերությունների ամրապնդման և արժեքների տարածման հարցում:

ՀՀ-ում տեղի ունեցող հասարակական-քաղաքական գործընթացները թույլ են տալիս եզրակացնել, որ Հայաստանում ձևավորվել և զարգանում է քաղաքացիական հասարակություն, որի կայացումը խիստ կարևոր է: Զարգանում է նաև պետություն-քաղաքացիական հասարակություն համագործակցությունը, բարձր մակարդակներում սկսում են գիտակցել պետության կառավարման մեջ քաղաքացիական հասարակության դերը: Կառավարությունը քաղաքացիական հասարակությանը աստիճանաբար սկսում է ընկալել որպես գործընկեր և իր գործունեության վերաբերյալ հաշվետու դառնում հասարակության լայն զանգվածներին<sup>328</sup>:

## 2. ՀՀ – ԵՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՁԵՎԱԶԱՓԸ՝ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԻ ԱԿՏԻՎ ՆԵՐԳՐԱՎՄԱՄԲ

### 2.1. ՀՀ – ԵՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱԶՔԵՐՈՎ

Սովետական միության փլուզումն իր հետ հսկայական փոփոխություններ բերեց հարավկովկասյան երեք հանրապետություններում (Ադրբեջան, Հայաստան, Վրաստան), որոնք անկախացան և կանգնեցին տնտեսական և քաղաքական լուրջ խնդիրների առջև, ինչպես նաև բախվեցին տարածքային հակամարտությունների<sup>329</sup>:

Եվրամիության հարաբերությունները Հարավային Կովկասի հետ սկսեցին զարգանալ դեռևս 1991 թվականից սկսած՝ հիմնականում աջակցության ծրագրերի շրջանակներում: Հայաստանի հետ ԵՄ հարաբերությունները կարգավորվում են ԵՄ – Հայաստան գործընկերության և համագործակցության համաձայնագրով, որը ստորագրվել է 1996 թվականին, իսկ ուժի մեջ մտել՝ 1999 թ.: Համաձայնագիրը թույլ է տալիս իրականացնել լայնածավալ համագործակցություն քաղաքական երկխոսության, առևտրի, ներդրումների, տնտեսության, օրենսդրության և մշակույթի ոլորտներում:

2004 թ. Հայաստանի ընդգրկումը Եվրոպական հարևանության քաղաքականությանը և ապա՝ 2009 թ. Արևելյան գործընկերությանը ցույց տվեցին ԵՄ-ի պատրաստակամությունը՝ ավելի սերտացնելու հարաբերությունները Հայաստանի հետ:

<sup>328</sup> Բեգլարյան Ա. (2013), Քաղաքացիական հասարակության զարգացման գործընթացը Հայաստանում, Լրաբեր հասարակական գիտությունների, էջ 128:

<sup>329</sup> Arabidze, (Caucasus 2007), 2007, 12.



Այս նպատակով 2009 թ. մեկնարկեցին ստացածնա համաձայնագրի շուրջ բանակցությունները, որոնք ավարտվեցին 2013 թ. հուլիսին: Համաձայնագիրը, սակայն, չնախատորագրվեց, քանի որ նույն թվականի սեպտեմբերի 3-ին Հայաստանը որոշում կայացրեց միանալ Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի Մաքսային միությանը: Սակայն Հայաստանի այս որոշումը վերջ չդրեց ԵՄ-ի հետ իր հարաբերություններին: Արևելյան գործընկերության 2013 թվականի վիճակագրական գազաթափոցի ընթացքում ԵՄ-ն և Հայաստանը համաձայնության եկան վերանայելու ԵՄ – Հայաստան գործողությունների ծրագիրն ու զարգացնել համագործակցության գործող շրջանակը: ԵՄ-ն և ՀՀ-ն վերահաստատեցին իրենց հանձնառությունը ավելի սերտ և ամուր համագործակցություն իրականացնելու ուղղությամբ՝ ժողովրդավարական հաստատությունների և դատական համակարգի բարելավման, մարդու իրավունքների և օրենքի գերակայության խթանման, լավ պետական կառավարման, կոռուպցիայի դեմ պայքարի, քաղաքացիական հասարակության հզորացման, առևտրի և ներդրումների շրջանակի ընդլայնման, շարժունակության շուրջ գործընկերության իրականացման և ոլորտային համագործակցության զարգացման նպատակով: Որպես համագործակցության շարունակականություն՝ 2014 թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտան ԵՄ – Հայաստան մուտքի արտոնագրերի դյուրացման և ռեադմիսիայի համաձայնագրերը: Այս ամենի հետ մեկտեղ պետք է նաև նշել, որ ԵՄ-ն Հայաստանի առևտրային հիմնական գործընկերն է, որին բաժին է ընկնում Հայաստանի առևտրի ընդհանուր ծավալի 30 %-ը<sup>330</sup>:

Պարզ է դառնում, որ 2013 թվականին Հայաստանի ընդունած որոշումը բացասական ազդեցություն չունեցավ ՀՀ – ԵՄ հարաբերությունների վրա, որոնք շարունակում են բնականոն կերպով զարգանալ, ինչի վկայությունն են շարունակական ծրագրերը: 2015 թ. սկզբում տեղի ունեցած համաժողովի ընթացքում ԵՄ ներկայացուցիչը նշեց, որ այս տարին կարևոր և վճռորոշ է ԵՄ – ՀՀ հարաբերությունների համար, երբ երկու կողմերը համատեղ ջանքերով պետք է սահմանեն հետագա հարաբերությունների շրջանակները և այդ հարաբերությունների իրավական հիմքը: Նա նաև նշեց, որ ԵՄ-ն ակնկալում է հաջող նախնական քննարկումներ, որոնք հնարավորություն կտան սկսելու նոր ԵՄ – ՀՀ համաձայնագրի բանակցությունները<sup>331</sup>: Այս հայտարարությունն էլ ևս մեկ անգամ եկավ փաստելու, որ ՀՀ – ԵՄ հարաբերությունները ոչ թե լճանում են, այլ զարգանում են և պատրաստվում են

<sup>330</sup> Քաղաքական և տնտեսական հարաբերություններ (2015). Retrieved June 6, 2015, Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն, [http://eeas.europa.eu/delegations/armenia/eu\\_armenia/political\\_relations/index\\_hy.htm](http://eeas.europa.eu/delegations/armenia/eu_armenia/political_relations/index_hy.htm)

<sup>331</sup> Opening remarks and keynote address of the Head of Delegation Traian Hristea at the conference “EU-Armenia Cooperation: Perspective in the Actual Political Environment” 2015.

թափ առնելու նոր ձևաչափով:

## 2.2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԻ ԱԿՏԻՎ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀՀ – ԵՄ ԱՎԵԼԻ ԽՈՐՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

Ինչպես նշվեց, չնայած Հայաստանի 2013 թ. սեպտեմբերի 3–ի որոշմանը՝ միանալ Եվրասիական տնտեսական միությանը, Հայաստան – Եվրամիություն հարաբերությունները չեն մտել փակուղի, և ներկայումս համագործակցության նոր ձևաչափեր են փնտրվում, որոնք կտանեն ավելի խորքային գործընկերության: Եվ քանի որ քաղաքացիական հասարակությունը վերջին շրջանում հասունացման ուղին է բռնել, ապա կարելի է մտածել այս շերտի՝ ՀՀ – ԵՄ համագործակցության շրջանակներում ավելի ակտիվ ներգրավման մասին:

Վերջերս մի շարք միջոցառումների, համաժողովների ընթացքում ԵՄ ներկայացուցիչները շեշտել են քաղաքացիական հասարակության ներուժը և հավաստիացրել, որ պատրաստվում են ավելի ակտիվ աշխատանքներ ծավալելու այս հատվածի հետ: Հայաստանում ԵՄ պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավար Հոա–Բին Աջեմյանը նշել է, որ քաղաքացիական հասարակությունը մարդու իրավունքների զարգացման, ժողովրդավարացման գործընթացի ամրապնդման հիմքն է, և ԵՄ–ն տեսնում է նրա զարգանալու ներուժը և աջակցում է հասարակական կազմակերպություններին՝ իրենց առաջընթացի ճանապարհին<sup>332</sup>:

Ընդհանրապես՝ ստորին մակարդակում մարդկանց հնարավորությունը ընձեռելը իրենց մասնակցությունն ունենալ քաղաքականության կառուցմանը և որոշումների կայացմանը, պետական կառույցների ժողովրդավարական լեգիտիմության բանալին է: Ցանկացած քաղաքականություն ավելի հաջող է, երբ այն հիմնված է փոխհամաձայնության վրա և ուղղված է ընդհանուր շահերին և հետաքրքրություններին<sup>333</sup>: Եթե քաղաքացին մասնակից դառնա որոշման կայացմանը և իր ձայնի ու կարծիքի արտահայտման հնարավորությունն ունենա այդ գործընթացում, ապա հետագայում՝ որոշման իրականացման փուլում, «հանձնառության» խնդիր չի առաջանա:

ԵՄ–ի առջև ծառայած այժմյան մարտահրավերները նշանակում են, որ քաղաքացիական հասարակության հետ համաձայնությունը և համագործակցությունը շատ կարևոր են: Փորձառությունը և հատուկ գիտելիքը, որ

<sup>332</sup> Պապյան Ս. (2015, ապրիլ 12), ԵՄ–ն աջակցում է ՀԿ–ներին, որովհետև Հայաստանի քաղհասարակությունը զարգանալու ներուժ ունի. Retrieved մայիս 29, 2015, Առաջին լրատվական, <http://www.1in.am/1596142.html>

<sup>333</sup> European Economic & Social Committee, Civil Society, 2015 <http://www.eesc.europa.eu/?i=portal.en.civil-society>

այս ոլորտի ներկայացուցիչներն ունեն, կարող են որոշումների կայացման գործընթացը բարելավել և ավելի վստահելի դարձնել: Սա ավելի լայն շերտերի մարդկանց օգնում է հասկանալու և իրենց մասնակցությունն ունենալու որոշումների կայացմանը և ըստ այդմ՝ ավելի արդյունավետորեն իրականացնելու դրանք<sup>334</sup>:

Եվրոպական միությունը, այս ամենը շատ լավ գիտակցելով, վերջերս շատ է ընդգծում, որ հասարակության այս շերտի ներգրավումն իր թիրախներից մեկն է: Հայաստանում ԵՄ-ի ներկայացուցիչ Տրայան Հրիսթեան շեշտել է քաղաքացիական հասարակության կակտոր դերը ԵՄ – Հայաստան հարաբերությունների դիսկուրսում և խրախուսել դրա մասնակցությունը ԵՄ – Հայաստան համագործակցության ձևավորման մեջ: ԵՄ-ի ներկայացուցիչը վերջերս նաև նշել է. «Գիտակցելով բարեփոխումների գործընթացում քաղաքացիական հասարակության կառույցների կարևոր գործառույթը՝ ԵՄ պատվիրակությունը և ԱլԳ ՔՀՖ Հայաստանի ազգային պլատֆորմը հաստատակամ են խրախուսելու քաղաքացիական հասարակության առավել ակտիվ մասնակցությունը Արևելյան գործընկերության ապագայի խնդիրների ուրվագծման և երկրի ժողովրդավարացմանն ուղղված քաղաքականության մշակման գործում»<sup>335</sup>:

ԵՄ մեկ այլ ներկայացուցիչ վստահորեն հայտնել է, որ հաղորդակցությունը և թափանցիկությունը շատ կարևոր մարտահրավերներ են, որոնց պետք է պատշաճ կերպով անդրադարձ կատարել, և որոնք հետագայում կպահանջեն ավելի շատ ռեսուրսներ: Նա հավաստիացրել է, որ ԵՄ-ն գիտակցում է, որ Հայաստանի քաղաքացիները դեռ պետք է գիտակցեն, թե ինչ է Եվրոպական միությունը, և թե ինչ կարող է այն տալ Հայաստանին: Պետք է շեշտվի, թե ինչպես ԵՄ աջակցությունը կարող է ազդել սովորական մարդկանց առօրյա վրա, և ոչ թե արդյոք քանի միլիոն ծախսվեց այս կամ այն ծրագրի վրա:

Հայաստանում տրանսֆորմացիան վերաբերում է հասարակության բոլոր շերտերին: Համարձակ բարեփոխումները պահանջում են ուժեղ տեղական աջակցություն: ԵՄ-ն այս առումով կոչ է անում Հայաստանի կառավարությանը երկխոսություն սկսելու քաղհասարակության հետ, քանի որ մեծ կարևորություն է տալիս հասարակության այս շերտի ներգրավմանը բարեփոխումների իրականացման և մշտադիտարկման հարցերում և

<sup>334</sup> ibid

<sup>335</sup> ԵՄ – Հայաստան հեռանկարները (2015, փետրվար 27), Retrieved հունիս 3, 2015, Եվրոպական միության պատվիրակությունը Հայաստանում, <http://eunewsletter.am/hy/%D5%A5%D5%B4-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A5%D5%BC%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D6%80%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8/>

փորձում է օգնություն ցուցաբերել տարբեր ծրագրային աջակցությունների միջոցով<sup>336</sup>:


Այս ամենը վկայում է, որ Հայաստանի հետ համագործակցության նոր ձևաչափի հիմքում ԵՄ-ն տեսնում է նաև քաղաքացիական հասարակությանը, առանց որի մասնակցության հնարավոր չէ հասնել ժողովրդավարության կայացմանը:

Սակայն, քանի որ մասնակցությունը միանգամից տեղի չի ունենում, այլ սկսվում է ամենացածր մակարդակից և աստիճանաբար բարձրանում է վերև, տվյալ աշխատությունը կներկայացնի դրանք, և կփորձի հասկանալ, թե ներկայումս, որ մակարդակում է քաղաքացիական հասարակության մասնակցությունը, և թե որ ուղղությամբ պետք է գնա՝ հաջողությամբ պսակվելու համար:

### **3. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ. ՀԱՅԱՑՔ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ**

Մասնակցության գործընթացի համար որոշակի նախապայմաններ են անհրաժեշտ, որպեսզի հնարավոր լինի խոսել քաղաքացիների մասնակցության պատշաճ գործընթացի իրականացման մասին: Մասնավորապես, երկու կողմերի՝ պետական մարմինների և քաղաքացիական հասարակության կողմից պետք է համաձայնություն լինի քաղաքացիների մասնակցության կանոնների վերաբերյալ, փոխադարձ վստահություն՝ այն հարցում, որ երկու կողմերն էլ նպատակ ունեն բարելավել քաղաքացիների ապրելակերպը: Պետք է առկա լինի նաև մասնակցության արդյունքների և կարգի հաշվետվողականություն և թափանցիկություն, ինչպես նաև համաձայնություն առ այն, որ քաղաքացիական հասարակության կազմակերպություններն իրավունք ունեն գործելու պետությունից անկախ և պաշտպանելու այնպիսի դիրքորոշումներ, որոնք տարբերվում են պետական մարմինների տեսակետներից: Առանձնացվում են մասնակցության չորս մակարդակներ, որոնցից ամենացածրը ենթադրում է պասիվ մասնակցություն, իսկ ամենաբարձրը՝ ակտիվ: Դրանք են՝

<sup>336</sup> Opening remarks and keynote address of the Head of Delegation Traian Hristea at the conference “EU–Armenia Cooperation: Perspective in the Actual Political Environment” 2015.



### Տեղեկատվություն

Տեղեկատվության հասանելիությունը բոլոր հաջորդ քայլերի հիմքն է՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին որոշումների կայացման գործընթացում ներգրավելու հարցում: Սա մասնակցության համեմատաբար ցածր մակարդակ է, որը վերաբերում է տեղեկատվության միակողմանի հոսքին՝ պետական մարմինների կողմից, և այս մակարդակում քաղաքացիական հասարակության հետ շփումը կամ դրա ընդգրկումը չի ակնկալվում: Այնուամենայնիվ, պետական մարմինների կողմից տեղեկատվության տրամադրումը հանրությանը՝ հատկապես քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին, հանրության ներգրավման հիմնական նախապայմանն է: Առանց տիրապետելու տեղեկատվությանը, որ, օրինակ, հանրային փաստաթուղթը նախագծվում կամ վերանայվում է, ոչ մի քաղաքացի կամ քաղհասարակության ներկայացուցիչ չի կարող իր ներդրումն ունենալ գործընթացին:

### Խորհրդակցություն

Ենթադրելով, որ տեղեկատվությունն առ այն, որ որոշակի պետական փաստաթուղթ նախագծման կամ վերանայման փուլում է, խորհրդակցության շրջանակներում պետական պաշտոնյաները քաղհասարակության ներկայացուցիչների կարծիքն են հարցնում կոնկրետ ոլորտի քաղաքականության կամ որոշակի պետական փաստաթղթի վերաբերյալ: Խորհրդակցությունը սովորաբար ներառում է պաշտոնյաների, որոնք տեղեկացնում են քաղհասարակությանը քաղաքականության կամ օրենքի մասին և խնդրում են թողնել մեկնաբանություններ և առաջարկություններ: Նախաձեռնությունը և թեման առաջարկվում են պետական պաշտոնյաների կողմից և ոչ թե՛ քաղաքացիական հասարակության:

### Երկխոսություն

Երկխոսություն կարող են նախաձեռնել երկու կողմներն էլ: Այն կարող է

լինել ընդհանուր և հատուկ: Ընդհանուր երկխոսությունը երկկողմանի հաղորդակցություն է՝ կառուցված փոխադարձ շահերի և միասնական նպատակների վրա, որը ենթադրում է գաղափարների կանոնավոր փոխանակում: Սա կարող է լինել հանրային լուսման կամ քաղաքասարակության ներկայացուցիչների և պետական պաշտոնյաների միջև հատուկ հանդիպումների տեսքով: Քննարկումները շարունակական են և չեն վերաբերում քաղաքականության զարգացման որևէ կոնկրետ գործընթացի: Հատուկ երկխոսությունը կառուցված է կոնկրետ քաղաքականության զարգացման վերաբերյալ փոխադարձ շահերի վրա: Այս տարբերակի արդյունքը հիմնականում լինում են առաջարկությունը, ռազմավարությունը, գործողությունը կամ համատեղ օրենսդրությունը: Երկխոսության այս տեսակն ավելի հզոր է, քանի որ այն ենթադրում է կանոնավոր և հաճախակի հանդիպումներ, որոնց արդյունքում ձևավորվում է քաղաքական ռազմավարության կորիզը, և սովորաբար լինում է եզրակացություն՝ երկու կողմերի համաձայնությամբ:


### Գործընկերություն

Գործընկերությունը սովորաբար ենթադրում է համատեղ պարտականություններ որոշումների կայացման յուրաքանչյուր փուլում՝ օրակարգի սահմանում, նախագծում, որոշում, նախաձեռնության իրականացում: Սա մասնակցության ամենաբարձր և ամենակտիվ ձևն է և կարող է ընդգրկել այնպիսի գործողություններ, ինչպիսիք են քաղաքացիական հասարակությանը լիազորել մատուցել ծառայություններ, մասնակցել քննարկումների, հիմնել համատեղ որոշումների կայացման մարմիններ, որը նաև ընդգրկում է ռեսուրսների բաշխում՝ նախկին որոշումների իրականացման համար<sup>337</sup>:

Երբ այս չորս մակարդակները հաղթահարված են, ապա կարելի է խոսել ամբողջական մասնակցության մասին, իսկ մասնակցության ճանապարհը նոր սկսած սուբյեկտները պետք է ուշադիր ուսումնասիրեն մակարդակները և կարողանան մի փուլից անցնել մյուսը՝ պահպանելով բոլոր կանոնները, որպեսզի մասնակցությունը հնարավորինս արդյունավետ տեղի ունենա:

Եթե վերոնշյալ չորս տարբերակները պատկերենք բուրգի տեսքով, ապա կստանանք հետևյալ պատկերը՝

<sup>337</sup> Civil Society: Levels and Forms of Participation, 2015.



Դիտարկելով այս մակարդակները ՀՀ – ԵՄ հարաբերությունների շրջանակներում՝ կարելի է փաստել, որ մասնակցության գործընթացը դեռևս առաջին՝ տեղեկատվության մակարդակում է, քանի որ հաջորդը՝ խորհրդակցությունը, ներառում է ավելի ֆորմալ փոխհարաբերություններ քաղաքացիական հասարակության և պետական պաշտոնյաների միջև՝ գոնե հանդիպումների տեսքով, ինչը ԵՄ հարցերի վերաբերյալ դեռևս տեղի չի ունենում: Սրա մասին է փաստում վերջերս Հայաստանի արտաքին գործերի փոխնախարարի հայտարարությունն առ այն, որ իրենց կառույցը նկատելի է, որ քաղաքացիական հասարակության շնորհիվ ԵՄ – Հայաստան համագործակցությունն ավելի է ամրապնդվում, որովհետև այս շերտի ներկայացուցիչները հաճախ են մասնակցում տարբեր համաժողովների, դասընթացների՝ կազմակերպված ԵՄ-ի կողմից: Նա նաև ընդգծեց, որ Հայաստանի կառավարությունը շատ է գնահատում հասարակության այս հատվածի դերը ինչպես ԵՄ նախաձեռնություններում, այնպես էլ ազգային բարեփոխումներում: Նա հատուկ շեշտեց, որ ԵՄ-ի հետ համագործակցությունն անչափ կարևոր է Հայաստանի համար, և ՀՀ-ն շուտով պատրաստվում է ներկայացնելու մեկ այլ բաղադրիչ կոմերցիոն համագործակցության մեջ<sup>338</sup>:

Այսինքն՝ այսօր քաղաքացիական մասնակցությունը ամենացածր մակարդակում է, որը, որպես այդպիսին, չի ենթադրում մասնակցություն,

<sup>338</sup> ԵՄ – Հայաստան հեռանկարները, 2015:

բայց մասնակցության առանցքն է, քանի որ այս փուլում քաղաքացիական հասարակության մասնակիցները տեղեկատվություն են ստանում պաշտոնական մակարդակում կատարվող իրադարձություններից, ինչի հիման վրա էլ կարող են հետագայում կազմակերպել և իրականացնել իրենց մասնակցությունը:

Մասնակցության այս մակարդակը վկայում է, որ քաղաքացիական հասարակությունը կարևոր դերակատարություն կարող է ունենալ ՀՀ – ԵՄ հարաբերությունների հետագա զարգացման հարցում, քանի որ այս հատվածի մասնակցությունն արդեն դրված է ամուր հիմքերի վրա՝ հաշվի առնելով, որ ամենացածր մակարդակն արդեն իսկ առկա է: Իսկ այն, ինչն ամուր հիմքերի վրա է կառուցված, խոստանում է լինել հզոր, զարգացող և հարատև: Այստեղ առանցքային են սահուն անցումները մի փուլից մյուսին, ինչին կարելի է հասնել հետևողական աշխատանքի միջոցով:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2013 թվականի Հայաստանի որոշումը՝ անդամակցել Եվրասիական տնտեսական միությանը, չխոչընդոտեց ՀՀ – ԵՄ հարաբերություններին, սակայն չնայած այն փաստին, որ Եվրոպական միությունը շարունակում է թիրախավորված աջակցություն ցուցաբերել ՀՀ-ում առկա տարբեր ոլորտներին, ստեղծված իրավիճակը թելադրում է, որ արմատական փոփոխություն է անհրաժեշտ՝ հարաբերությունների ամրապնդման ու նույն ուղիով ճանապարհը միասին շարունակելու համար, քանզի ՀՀ – ԵՄ համագործակցության ներուժը մեծ է, ակնկալվող պտուղները՝ հեռանկարային: Վերոնշյալ փոփոխության օրինակներից մեկը քաղաքացիական հասարակության ավելի ակտիվ ներգրավումն է, որը շատ կարևոր է թե՛ համագործակցության արդյունավետության բարձրացման, թե՛ ժողովրդավարության կայացման հարցերում (որը ԵՄ թիրախներից մեկն է):

Քաղաքացիական հասարակության ակտիվ ներգրավումը կարևոր է մի քանի պատճառներով: Նախ՝ քաղաքացիական հասարակության դերը տարեցտարի մեծանում է երկրների քաղաքականության մշակման և իրագործման հարցերում, և Հայաստանը բացառություն չէ: Աստիճանաբար այս ոլորտն ավելի առանցքային դերակատար է դառնում որոշումների կայացման գործընթացում և փոփոխությունների առաջաքաշման հարցերում: Այս կարողությունները և այն հսկայական ներուժը, որ այն ունի, պետք է օգտագործվեն նաև ՀՀ – ԵՄ հարաբերությունների հետագա զարգացման համար:

Երկրորդ՝ քաղաքացիական հասարակությունը բավականին արագ տեմպերով զարգանում է Հայաստանում՝ հաղթահարելով դժվարու-



թյունները և մարտահրավերները: Այս շերտը նաև ժողովրդավարության կարևորագույն հենասյուներից մեկն է, և նրա ձայնն ու գործունեությունը ժողովրդավարական կառավարման ամենակարևոր մասն են:

Ոչ պակաս կարևոր է նաև այն, որ յուրաքանչյուր քաղաքացի ավելի պատրաստակամ է իրականացնելու կայացրած որոշումը, եթե ինքը մասնակցել է այդ գործընթացին և տեղյակ է մանրամասներին:

Շատ կարևոր է նաև նշել, որ քաղաքացիական հասարակության ներուժն ու կարողությունը նաև գրավել են Եվրոպական միության ուշադրությունը, և վերջերս այդ կառույցի տարբեր ներկայացուցիչներ նշում են այդ փաստը՝ արձանագրելով, որ արդեն սկսելու են ավելի մեծ ուշադրություն դարձնել հասարակության այս շերտին: Կարևորագույն խնդիրն այն է, որ քաղաքացիական հասարակության հետագա ներգրավումը լինի համապատասխան ձևով և անցնի աստիճանի բոլոր մակարդակներով, ինչն ի վերջո կհանգեցնի այնպիսի որոշումների կայացմանը, որոնցում իրենց հավասար դերակատությունն են ունեցել թե՛ քաղաքացիական հասարակությունը, թե՛ պետական պաշտոնյաները: Այս վերջինը և՛ ՀՀ – ԵՄ հարաբերություններին նոր շունչ հաղորդելու, և՛ ՀՀ-ում ավելի լավ ու հաշվետու կառավարման հասնելու միջոցներից կարևորագույններից է:

## THE POTENTIAL OF ARMENIA–EU PARTNERSHIP: MORE ACTIVE INVOLVEMENT OF CIVIL SOCIETY AS A GUARANTEE OF DEEPER COOPERATION

*ANNA GRADLYAN*

### INTRODUCTION

After the negotiations over the Association Agreement with the European Union for near 4 years, on September 3, 2013 Armenia decided to join the Eurasian Economic Union. This statement was an issue of controversy: some experts criticized it stating that a large amount of resources have been spent with no result. Another group of people saw the security-related issues as a base for this decision and tried to justify the decision. However, one thing was clear: hereinafter Armenia–EU relations would be different and the cooperation would be in another format. And although nearly one year has passed, there is still a lot of work to do to reinforce the relations and find new directions of partnership.

In order to develop possible constructive relations, it's necessary to understand the priorities and accentuations of both sides, and work towards the targets it is possible to achieve the relationship built on solid grounds. It's already for over 11 years Armenia and the EU have deepened the frameworks of their cooperation, and it's for six years, they closely and jointly implement activities in order to achieve better results. During this period, numerous projects have been implemented in Armenia targeting the main values of EU such as: human rights, democracy and the rule of law. However, it gradually became obvious that a new and different force is necessary to make them work more effectively. In this regard civil society can play a key role, and in order to emphasize its importance EU has established the Civil Society Forum within the framework of the Eastern Partnership (Eastern Partnership Civil Society Forum, 2015). This work will try to comprehensively present histories and the past Armenia–EU relations, and will show the importance more active involvement and participation of the civil society in the stabilization of Armenia–EU relations.

# 1. THE CIVIL SOCIETY AND ITS POTENTIAL...THROUGH THE EYES OF ARMENIA

## 1.1. THE POTENTIAL OF CIVIL SOCIETY

**Civil society has its unique role as it can move the culture to the place where the political rapprochement is easier<sup>339</sup>.**

The idea of civil society has gone a long way, and each new thinker found the unique meaning in it, which made concept “civil society” have an ambiguous role in different theoretical and worldviewing systems<sup>340</sup>.

Civil society is considered as a social area independent from state and market<sup>341</sup>. As its definition is vague and it's not a new concept, often even contradictory meanings of the term may be found<sup>342</sup>. However, combining the majority of them it can be concluded that the concept is mostly used to describe a number of organizations, networks, associations, groups and movements that are independent from government and sometimes join through collective action to push forward their common interests. Generally, civil society includes all the organizations which occupy the social space between family and state (except political parties and companies). Some definitions of the civil society also include some businesses such as: media, private schools and non-profit unions<sup>343</sup>.

As the term is broad and it is not perceived the same way by everyone, it is necessary to clearly define it within the framework of this work in order to better understand the subject matter of the paper. By saying civil society the sphere of voluntary action is usually meant, which is institutionalized and which differs from state and market (having in mind that in practice the borders are often distorted between these three)<sup>344</sup>.

Thus, the term “civil society” is a complex of voluntary associations relatively isolated from country, which operates on independent basis. It includes membership to unions and movements, citizens' participation in various unions, as well as it is person's civil responsibility in front of his/her society<sup>345</sup>.

<sup>339</sup> Jack Sugden, *Civil Society and Peacebuilding in the Israeli–Palestinian Conflict: Football for peace and the view from the bottom*, 2011, 15

<sup>340</sup> Beglaryan, *The Peculiarities of the Cooperation of State and Civil Society in Armenia and the National Security*, 2014, 90

<sup>341</sup> Civil Society, World Health Organization, 2015 <http://www.who.int/trade/glossary/story006/en/>

<sup>342</sup> Forbrig, *The Nexus between Civil Society and Democracy: Suggesting a Critical Approach*, 2002, 79–103

<sup>343</sup> Civil Society, World Health Organization, 2015 <http://www.who.int/trade/glossary/story006/en/>

<sup>344</sup> Paffenholz and Spurk, *Civil Society, Civic Engagement and Peacebuilding*, 2006, 2

<sup>345</sup> Beglaryan, *The Peculiarities of the Cooperation of State and Civil Society in Armenia and the National Security*, 2014, 93

The contemporary perceptions of the democratic system are closely related to the idea of civil society<sup>346</sup>. As an important element of the democratization process, strong and weak sides of the civil society determine the speed of the transition stage; as well as civil society helps to maintain the democratic system itself<sup>347</sup>.

One of the most valuable roles of civil society is to encourage and arm the citizens of a certain country to participate in the processes of democracy building and good governance. This area helps citizens to create ways for raising their concerns and aspirations and present them to the leaders of a country, as well to make them serve the democratic processes<sup>348</sup>. Thus, citizens have an opportunity to become a participant in the decision-making process, thereby further becoming a part of the implementation process.

Overall, the democratic regime assumes a close cooperation between the state and the civil society institutions as a guarantee of political and economic stability<sup>349</sup>. And this regularity is gradually becoming more modern, taking into consideration the development of this area, as well the speed democracy building throughout the world. Therefore, it is necessary to be more accountable before civil society representatives, to engage them more in this or that process and force their participation in issues and reforms concerning state governance.

## 1.2. CIVIL SOCIETY IN ARMENIA

Depending on the angle, from which it is considered, the history of the civil society in Armenia is short or long. According to the modern perception of the term, that is civil society as an agent of democratization, the formation of civil society in Armenia is a new phenomenon. However, in the form of non-formal and self-organized unions, civil society has been one of the vital elements of the Armenian nation for centuries. During foreign dominations and pressures the Armenian people developed volunteerism system: a strong system of survival in church and community<sup>350</sup>.

In 1922–1991, during the years of the Soviet regime in Armenia, the development of civil society sector in the country has carried the impact of prevailing institutional structure of the socialistic system. The existing formal

<sup>346</sup> Beglaryan, *The Peculiarities of the Cooperation of State and Civil Society in Armenia and the National Security*, 2014, 90

<sup>347</sup> Civil Society, World Health Organization, 2015 <http://www.who.int/trade/glossary/story006/en/>  
<sup>348</sup> *ibid*

<sup>349</sup> Beglaryan, *The Peculiarities of the Cooperation of State and Civil Society in Armenia and the National Security*, 2014, 94

<sup>350</sup> Aslanyan, S., Adibekian, A., Ajabyan, N., & Coe, B. A., *Civil Society in Armenia: From a Theoretical Framework to a Reality*, 2007, 20

organizations and unions have been controlled by an authoritarian state, while any independent civil union or action was considered as a threat to state authority. The “non-governmental” organizations of the Soviet period were to mostly serve the state and party supporting the communist ideology with its mission and activity rather than to satisfy the public needs through the voluntary initiatives. This led to the decline of formal civil society in Armenia<sup>351</sup>.

The traces of the contemporary Armenian civil society are noticed at the end of the 1980s, when the reconstruction (“perestroika”) gave an opportunity for emerging of the contemporary social movements. Those movements were very important from the point of view of their impact on the policy of the government. For example, the ordinary citizens managed to impact the public policy in 1989, when hundreds of thousands of people participated in the environmental movement, which at that time was the only platform the USSR allowed for such gatherings and movements. People were organizing strikes and rallies to protest the continuous exploitation of the nuclear power station, as well as they were raising their voice against the chemical factory near Yerevan, which released toxic vapors and negatively impacted the nearby communities<sup>352</sup>. Those movements were so powerful that they led to the closing of several industrial enterprises, which highly polluted the environment. By getting stronger with people gathered over the national values, these protests sought to reach the independence of Armenia from the USSR. The public groups and non-governmental organizations mostly expressed their support to these ideas. In 1991 the authorities of Armenia stated about their decision to separate from the Soviet Union. The civil society began to self-organize in a quick but chaotic way without getting any essential support from the state or the private sector<sup>353</sup>.

Since the 1990’s, the civil society in Armenia has been formed through foreign support. During the gradual transition towards democracy, the number of non-governmental organizations was increased, which were more organized and target-oriented to satisfy the growing society concerns such as: unemployment, social and health needs. Their activities were also aimed at the dissemination of democratic values and human rights<sup>354</sup>.

The implemented amendments in the law on “Non-governmental

---

<sup>351</sup> Beglaryan, *The Peculiarities of the Cooperation of State and Civil Society in Armenia and the National Security* 2014

<sup>352</sup> Aslanyan, et al. 2007, 21

<sup>353</sup> Hakobyan L, Tadevosyan M, Sardar A, & Stepanyan A, *Armenian Civil Society: from transition to consolidation*, 2010, 26

<sup>354</sup> Hakobyan L, Tadevosyan M, Sardar A, & Stepanyan A, *Armenian Civil Society: from transition to consolidation*, 2010, 27

organizations” in 2009 should be viewed as an important phase in the development processes Armenian civil society. The participation of over 100 NGO representatives in the process of final amendments in the package testifies their increasing impact. Another positive result of the development of civil society was the fact that at the end of 2009 the NGOs succeeded to establish the cooperation between society and public administration bodies on the technical level promoting social partnership. 24 local self-government bodies provided subsidies from their budget for NGOs. The reforms were implemented in a number of ministries’ regulations, and according to accomplished amendments, the key issues of their activities should be discussed with NGO representatives until its submission to the RA government for confirmation<sup>355</sup>.

Since 2011, civil society area began to get active and a necessity was born to organize “public forums”. In February 2011, “Civil Society Index: Armenia” report was presented, and the experts recorded increase in the number of civil initiatives.

The European Union also had a contribution in the development of civil society, particularly within the framework of the “Eastern Partnership” program. This is proved by the conference organized in Yerevan in the fall of 2011, which was dedicated to the role of civil society in the process of European integration. During the conference it was noted that civil society had a significant role in strengthening the relationship between people and in spreading values.

The socio-political processes in RA allow concluding that civil society has been formed and is developing in Armenia, which is very important. State-civil society cooperation is also developing and upper levels begin realizing the role of civil society in state governance. The government gradually begins to perceive this sector as a partner and becomes accountable to wide masses of society<sup>356</sup>.

## **2. NEW FORMAT OF ARMENIA-EU RELATIONS WITH MORE ACTIVE INVOLVEMENT OF CIVI SOCIETY**

### **2.1. ARMENIA-EU RELATIONS THROUGH THE EYES OF HISTORY**

The collapse of the Soviet Union brought with it immense changes in three South Cascauian countries (Armenia, Azerbaijan, Georgia), which became independent and faced serious economic and political problems, as well with

<sup>355</sup> Beglaryan, *The Development Process of Civil Society in Armenia*, 2013, 126

<sup>356</sup> Beglaryan, *The Development Process of Civil Society in Armenia*, 2013, 128

regional conflicts<sup>357</sup>.

The EU–South Caucasus relations began to develop since 1991 mostly within the framework of support projects. EU–Armenia relations are regulated by EU–Armenia Partnership and Cooperation Agreement, which was signed in 1996 and entered into force in 1999. The agreement allows extensive cooperation in the areas of political dialogue, trade, investments, economy, legislation and culture.

The involvement of Armenia in the European Neighborhood Policy in 2004, and then in the Eastern Partnership in 2009 showed the commitment of the EU to establish closer relations with Armenia. For this purpose in 2009 the negotiations over the Association Agreement were launched and ended in July 2013. The agreement, however, was not pre–signed, as on September 3 of the same year Armenia decided to join the Custom Union of Russia, Belarus and Kazakhstan. Nevertheless, this decision did not have negative effect on Armenia’s relations with the European Union. During the Eastern Partnership Vilnius Summit in 2013, EU and Armenia reaffirmed their commitments for closer and stronger cooperation aimed at the continuous improvement of democratic institutions and judiciary, promotion of human rights and rule of law, good governance, fight against corruption, strengthening civil society, further improvement of enhanced trade and investments, continued implementation of mobility partnership and increased sectoral cooperation. As a continuation of the cooperation, EU–Armenia Visa Facilitation and Readmission Agreements entered into force from January 1, 2014.

Additionally, it should also be noted that EU is the main trade partner of Armenia, accounting for 30% of the total trade volume of Armenia<sup>358</sup>.

It becomes clear that the 2013 September decision of Armenia did not bring end to EU–Armenia relations, which continue to develop as the continuous programs show. During the conference held at the beginning of 2015, EU representative mentioned that this year has been an important and crucial one for EU–Armenia relations, when the two sides should jointly define the framework for further relations and the latter’s legal basis. He also mentioned that EU expected successful initial discussions, which would give an opportunity to launch new negotiations over EU–Armenia agreement<sup>359</sup>. This statement once again testifies that Armenia–EU relations are not stagnated but are developing

<sup>357</sup> Arabidze, (Caucasus 2007), 2007, 12

<sup>358</sup> EU Delegation To Armenia, Political and Economic Relations, 2015, [http://eas.europa.eu/delegations/armenia/eu\\_armenia/political\\_relations/index\\_hy.htm](http://eas.europa.eu/delegations/armenia/eu_armenia/political_relations/index_hy.htm)

<sup>359</sup> Opening remarks and keynote address of the Head of Delegation Traian Hristea at the conference “EU–Armenia Cooperation: Perspective in the Actual Political Environment” 2015

and going to take a new format.

## 2.2. MORE ACTIVE INVOLVEMENT OF CIVIL SOCIETY AS AGUARANTEE OF DEEPER COOPERATION OF ARMENIA–EU

As it has been noted, although the decision of Armenia to join the Eurasian Economic Union, Armenia–EU relations didn't reach a deadlock and now a new format of cooperation is sought, which will bring deeper partnership. As recently civil society has matured enough, we can think about more active involvement of this layer of within the framework of Armenia–EU cooperation.

Recently, during a number of events and conferences the EU representatives have emphasized the potential of civil society and assured that they were going to implement more active work with this sector. The head of Cooperation section of the EU delegation in Armenia Hoa–Binh Adjemian mentioned that civil society was the basis of the development of human rights and reinforcement of democratic processes, and EU saw the potential of its development and supported NGOs On their way to progress<sup>360</sup>.

Generally, giving an opportunity to people to participate in policy and decision–making on the lower level is the key of democratic legitimacy of state institutions. Policy is more successful, when it is based on mutual agreement and targets common benefits and interests<sup>361</sup>. If a citizen participates in decision–making processes and has an opportunity to raise his/her voice and express an opinion, then the problem of “commitment” will not appear in the stage of implementation of the decision.

The current challenges faces EU show that the agreement and cooperation with civil society are very important. The experience and special knowledge that the representatives of this sector have, can improve the process of decision–making and make it more reliable. This helps people of the wider layers to have their participation in decision–making, and, therefore, to more effectively implement them<sup>362</sup>.

Being well aware of all this, recently the European Union emphasizes a lot that the involvement of this layer of society will be one of its targets. The EU representative in Armenia Traian Hristea has emphasized the important role

<sup>360</sup> Papyan, S, EU Supports NGOs, because Armenian Civil Society has a Potential for Deveopment, 2015

<sup>361</sup> European Economic & Social Committee, Civil Society, 2015 <http://www.eesc.europa.eu/?i=portal.en.civil-society>

<sup>362</sup> *ibid*



